

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртутіан» (образование) еженедельник 09.02.2022թ. չորեքշաբթի քիվ 6-7 (1031-1032)

Տյառնընդառաջ (Տրևիտ)

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ամեն տարի՝ *փետրվարի 14-ին՝ Քրիստոսի Սուրբ Ճննդյան* եւ *Աստվածհայտնության* օրվանից 40 օր հետո, մեծ հանդիսավորությամբ նշում է քառասուն օրական մանուկ **Հիսուսին** տաճարին ընծայաբերելու տոնը՝ **Տյառնընդառաջը**: Տյառնընդառաջ՝ նշանակում է *Տիրոջն ընդառաջ գնալ*:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ՝ *Տյառնընդառաջը* հռչակվել է **նորապսակների օրհնության օր**:

Տյառնընդառաջի տոնակատարությունները սկսվում են *փետրվարի 13-ին*: Երեկոյան ժամերգության ընթացքում կատարվում է **Անդաստանի** (արտերի եւ այգիների) **օրհնություն**, որը խորհրդանշում է ձմռան ավարտի մոտենալը եւ *գարնանամուտը*: ժամերգության ավարտին կատարվում է *մոմի օրհնություն*: Հավատացյալներն օրհնված մոմերից վառում են իրենց մոմերը՝ **Քրիստոսի** փրկարար լույսի խորհրդանշան իրենց հետ տանելով տուն:

Ժողովրդական սովորույթի համաձայն՝ օրհնված մոմի կրակով են վառում նաեւ *Տյառնընդառաջի* խարույկը: Ըստ **Սուրբ Գրիգոր Տաթևացու**՝ խարույկի կրակը բորբոքելիս հայցում ենք Աստվածային սիրո հուրը: Ինչպես **Տիրոջը** տաճարին ընծայելու ժամանակ ժողովուրդը ջախերով եւ կանթեղներով ելավ **Նրան** ընդառաջ, մենք էլ նույն օրհնակով կրակ ու ջահ ենք վառում եւ **Տիրոջ** գալստյան նախատոնակը կատարում: Հեթանոսներն **Աստծո** պատիվը կրակին էին մատուցում, իսկ մենք կրակը, որպես **Քրիստոսի** ծառա, բերում ենք **Նրան** ծառայեցնելու:

Տյառնընդառաջը Տիրոջն ընդառաջ գնալու հրավեր է բոլորին: **Քրիստոսը՝ Աստծո Միածին Որդին**, երկնքից խոնարհվեց եւ մեր *փրկության* համար աշխարհ եկավ: Սա Աստվածային սիրո գերագույն դրսևորումն է **Արարչից** հեռացած արարածի հանդեպ: *Մարդացած Աստվածորդին* ամեն պահ դիմում է մեզ. «**Եկե՛ք ինձ մոտ, բոլոր հոգածներդ ու բեռնավորվածներդ, եւ ես ձեզ խաղաղություն կպարգեւեմ**» (Մատթ. ԺԱ 28): Հաջորդ քայլը մերն է: Յուրաքանչյուրս պետք է անսասնք **Տիրոջ** ձայնին, քանզի ով **Նրա** հետեւից է գնում, «**խավարի միջով չի քայլի, այլ կընդունի կյանքի լույսը**» (Հովհ. Ը 12):

Ըստ *Ավետարանի՝ Հովսեփին* ու *Մարիամը* Բեթղեհեմում 40 օր մնալուց հետո վերցնում են մանուկ **Հիսուսին** եւ գնում Երուսաղեմ **Նրան** ներկայացնելու **Տիրոջը** (Ղուկ. Ա 22): Նրանց ընդառաջ է գալիս **Սիմոն** անունով **Աստծո** ծառան, ով **Տիրոջից** խնդրել էր իրեն այնքան կյանք տալ, մինչեւ տեսնի մարդկության **Փրկչին՝ Աստծո Որդուն**: Սրբազան ավանդության համաձայն, երբ տեղ են հասնում, **Աստծո** հրամանով փակված տաճարի արեւելյան դուռը բացվում է:

Տյառնընդառաջի տոնական *Սուրբ Պատարագից* հետո բոլոր եկեղեցիներում կատարվում է *նորապսակների օրհնության կարգ*:

Սովորության համաձայն՝ *Տյառնընդառաջի* տոնին նվերներով այցելում են նորապսակներին:



Սուրբ Սարգիս

Սիրո մե՛ր հովանավորը

Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին **Սուրբ Սարգիս** զորավարի տոնն այս տարի նշում է **փետրվարի 12-ին**: Արդեն ավանդաբար, տարեցտարի ավելի ընդգրկուն ծրագրով, Արարատյան Հայրապետական թեմը կրկին հայ երիտասարդներին հրավիրում է մասնակցելու **Սիրո մե՛ր հովանավորի** տոնին՝ մայրաքաղաքի մի քանի դիտարժան վայրերում, թանգարաններում, դպրոցներում, զորամասերում եւ այլ կրթամշակութային հաստատություններում:



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, մայրաքաղաքում եւ հանրապետության այլ բնակավայրերում Սուրբ Սարգիսն նվիրված տոնախմբություններն անցկացվում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Երեւանի քաղաքապետարանի, ՀՀ մարզպետարանների, պետական, համայնքային զանազան կառույցների հովանու ներքո: Տոնակատարություններին իրենց մասնակցությունն են բերում զանազան հաստատություններ, ընկերություններ, անհատ մտավորականներ:

տե՛ս՝ նաեւ էջ 9

Եղանակի հետ

Ձմեռ


Տարվա բոլոր եղանակներն էլ գեղեցիկ են... Չե՞ք հավատում, պոետներին հարցրեք (**տե՛ս՝ էջ 12-13**):

Թեեւ ցուրտ է, ձյուն ու սառույց, բայց ձմեռն էլ իր հմայքներն ունի: Եվ ոչ միայն մանուկների համար: Ձմեռը նաեւ գարնան ավետաբերն է, ու թե առատ է ձյունը, առատ է լինելու նաեւ տարվա հունձը: Տա՛ Աստված:

Իսկ մինչ այդ... Ձմեռը նաեւ փորձություն է... Փորձություն՝ **Երկրի, Ազգի ու Մարդու...** Ձմեռը լինում է նաեւ քաղաքական... Տա՛ Աստված, այն չլինի տեսական, ու չուշանա **Գարունը**:

Հրաժեշտ երգահանին

Հայ հասարակությունը երկրային վերջին հրաժեշտը տվեց անվանի երգահան եւ մշակութային գործիչ, Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստ **Արթուր ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ**:



Կառավարական հանձնաժողովի որոշմամբ՝ հոգեհանգստի արարողությունը տեղի ունեցավ «*Արամ Խաչատրյան*» համերգասրահում:

Հուղարկավորությունը կատարվեց Երեւանի քաղաքային պանթեոնում:

Տե՛ս՝ նաեւ էջ 5

Պետական մրցանակ

Կառավարություն

Սահմանվել է շնորհման կարգը

ՀՀ կառավարության որոշմամբ՝ սահմանվել են ստեղծագործությունները, հայտնագործությունները (գյուտերը) և աշխատանքները պետական մրցանակի հայցման ներկայացնելու, պետական մրցանակներ շնորհելու և հանձնելու կարգն ու ժամկետները:

ՀՀ պետական մրցանակները շնորհվում են լավագույն ստեղծագործությունների, հայտնագործությունների (գյուտերի) և աշխատանքների հեղինակներին: Դրանք շնորհում է ՀՀ վարչապետը՝ համապատասխան որոշմամբ:

Մրցանակը շնորհվում է երկու տարին մեկ անգամ՝ բացառությամբ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ու բարձր տեխնոլոգիաների ոլորտներում համաշխարհային ներդրման համար պետական մրցանակների, որոնք շնորհվում են տարին մեկ անգամ:

Հայաստանի ազգային հերոս, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական մրցանակը հանձնվում է երկու տարին մեկ անգամ՝ յուրաքանչյուր գույք տարվա սեպտեմբերի 18-ին ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի ծննդյան օրը, այդ առիթով գումարված ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ընդհանուր ժողովում:

Մրցանակը ստեղծագործության համահեղինակներին շնորհվելու դեպքում մրցանակի մաս կազմող դրամական պարգևը հավասար բաշխվում է համահեղինակների միջև, յուրաքանչյուրին հանձնվում են նաև կրծքանշան և վկայագիր:

Սահացած դափնեկրի կրծքանշանը և վկայագիրը հանձնվում են նրա ընտանիքին, իսկ դրամական պարգևը փոխանցվում է նրա ժառանգներին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պետական մրցանակի ներկայացման հայց

Պետական մրցանակի ներկայացման հայցը կարող են ներկայացնել «Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների մասին» օրենքով նախատեսված անձինք, մարմինները, կազմակերպությունները, խորհուրդները և ՀՀ զԱԱ նախագահությունը, բաժանմունքները, ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի Վիկտոր Համբարձումյանի անվան ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնը:

Մրցանակի հայցման համար առաջարկությունների ընդունումը ներժվում է, եթե ներկայացվող փաստաթղթերում առկա են կեղծ տեղեկություններ, աշխատանքն արդեն շահել է միջազգային այլ խոշոր մրցանակ (իննգ հարյուր հազար և ավելի ԱՄՆ դոլարին համարժեք դրամական պարգև) կամ միաժամանակ ներկայացվել է նմանատիպ մրցանակի հայցման համար, չեն պահպանվել մրցանակի հայցման համար առաջարկությունները ներկայացնելու համար նախատեսված պայմանները:

Հանձնաժողովը կամ կոմիտեն ներկայացված հայցերն ամփոփում է և ընտրված ստեղծագործությունները ՀՀ պետական մրցանակների շնորհման վերաբերյալ առաջարկությունների հետ ներկայացնում ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Հարունակությունը՝ էջ 3

Կնվազեն բուհերի լրացուցիչ հարկային պարտավորությունները

ՀՀ կառավարության նիստում գործադիր հավանության է արժանացրել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության առաջարկությունը և այն սահմանված կարգով ներկայացրել Ազգային ժողովի աշխատակազմ:

Հարցը գեկուցել է ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը: Նա նշել է, որ ՀՀ հարկային օրենսգրքի 121-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետի համաձայն շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով ծախս են համարվում նաև բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողական համակազմի մինչև 10 տոկոսին ծառայության մատուցման հետ կապված ծախսերը անկախ այդ ծառայությունների դիմաց ուսանողների կողմից հատուցում կատարելու հանգամանքից: Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի համաձայն հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողական համակազմի մինչև տասը տոկոսի՝ օրենսդրությամբ սահմանված դեպքերում ուսման վարձի փոխհատուցման գումարները:

Վահրամ Դումանյանը շեշտել է, որ Աժ պատգամավորներ Գեորգ Պապոյանի, Միքայել Թումանյանի և Արուսյակ Մանավազյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվում է օրենսգրքի վերոնշյալ հոդվածներում համապատասխանաբար «10» թիվը փոխարինել «25» թիվով՝ կարգավորման ժամկետը սահմանելով 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:

ԿԳՄՍ նախարարը ներկայացրել է նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարության դի-



տողություններն ու առաջարկությունները:

«Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայում առկա չեն շահառու համարվող ուսանողներին հասցեական աջակցության այլ գործիքներ, ինչպես նաև այն, որ նախագծով նախատեսվում է ժամանակավոր լուծում առաջարկում ենք քննարկել աջակցության գործիքի սահմանաչափը, ուսանողական համակազմի մինչև 25 տոկոսի փոխարեն սահմանել մինչև 20 տոկոս՝ ակնկալելով, որ մինչև նախագծով սահմանվող միջանկյալ ժամանակահատվածի ավարտը կներդրվեն հասցեական աջակցության այլ գործիքներ, և հարկային օրենսգրքի համապատասխան հոդվածներով սահմանված կարգավորումներն ուժը կորցրած կճանաչվեն»,- նշել է Վահրամ Դումանյանը:

Ըստ նախարարի՝ Կառավարությունը, մի և նույն ժամանակ, առաջարկում է նախագծի 3-րդ հոդվածը վերախմբագրել՝ սահմանելով, որ նախագծով ներկայացվող կարգավորումները, ինչպես նաև մինչև նախագծի ուժի մեջ մտնելը, գործող կարգավորումները գործում են մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը՝ 2023-2024 թթ. ուսումնական տարվա ավար-

տը՝ համարժեք փոփոխություններ նախատեսվելու նաև «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետրուհական մասնագիտական կրթության մասին» օրենքների համապատասխան դրույթներում:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը փաստել է, որ Կառավարությունը տարբեր քայլեր է ձեռնարկում՝ առկա սոցիալական խնդիրներին արձագանքելու համար: Նրա խոսքով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կառավարությունը սոցիալական քաղաքականությունը միշտ զուգակցում է զարգացման քաղաքականության հետ՝ այս նախագծի ընդունման պարագայում շուրջ 7 հազար ուսանողներ հնարավորություն կստանան օգտվելու զեղչային համակարգից՝ առանց բուհերի համար լրացուցիչ հարկային պարտավորությունների:

«Մեր կառավարության քաղաքականությունն է՝ ուսման վարձի պատճառով բարձր ՄՈԳ ունեցող ոչ մի ուսանող չպետք է դուրս մնա բուհից, և նման բոլոր ահազանգերին մենք արձագանքել ենք»,- ընդգծել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Հ. ԳՈՎԱՆՆԻՍՅԱՆ

«Լավագույն ուսանող»-2021

Մեր երկրի տերն ու ապագան

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունում տեղի է ունեցել 2021 թվականի «Լավագույն ուսանող» մրցույթի մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը: Միջոցառմանը մասնակցել են ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը, նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանը, բուհերի ղեկավարներ և ուսանողներ:

Նախարարի տեղակալ, մրցույթային հանձնաժողովի նախագահ Կարեն Թռչունյանը տեղեկացրել է, որ մրցույթում հաղթող են ճանաչվել 34 ուսանողներ, որոնցից 16-ը բակալվրի կրթական աստիճանով, իսկ 18-ը՝ մագիստրոսի: Նրա խոսքով՝ 1-ին տեղը զբաղեցրել է 13 ուսանող, որոնց կշնորհվի 445.000-ական դրամ, 2-րդ տեղը՝ 11 ուսանող, որոնք կստանան 345.000-ական դրամ, իսկ 3-րդ հորիզոնականը զբաղեցրած 10 ուսանողի կշնորհվի 220.000-ական դրամ կրթաթոշակ: «Սա լավ հնարավորություն է ուսանողների համար՝ զինվելու նոր գիտելիքներով և դրանք ծառայեցնելու մեր երկրի զարգացմանը»,- նշել է նախարարի տեղակալը՝ հավելելով, որ մրցույթն անցկացվել է 7 ոլորտներում՝ բնագիտության, հասարակագիտության, հայագիտության, հումանիտար, բժշկության, ճարտարագիտության և մշակույթ-սպորտի:

Շնորհավորելով հանրապետության լավագույն ուսանողներին կարելու ձեռքբերման համար՝ նախարար Վահրամ Դումանյանը նշել է, որ «Լավագույն ուսանող» մրցույթում հաղթող ճանաչվելը հպարտանալու առիթ է, բայց միևնույն ժամանակ պատաս-



խանատվություն է և ձեռք բերած նորովի վերարժեւորելու ու հաջողությունը շարունակելու կարելու նախապայման: Նրա խոսքով՝ մրցույթի նպատակն է բացահայտել ու խրախուսել բուհերի այն ուսանողներին, որոնք ցուցաբերել են բարձր առաջադիմություն և իրենց առավել ակտիվ են դրսևորել համապատասխան մասնագիտական ոլորտներում: Նախարարը կարելու է, որ այս մր-

ցույթի շրջանակում բուհերի ուսանողների միջև բարձրանա մրցակցությունը, ինչն էլ իր հերթին կնպաստի նրանց որակական առաջընթացին, հետաքրքրությունների ընդլայնմանը, ինքնադրսևորվելու հնարավորությունների խթանմանը և կարողությունների բացահայտմանը:

Հարունակությունը՝ էջ 3

Դիմորդ-2022

Երեք գերատեսչությունների քննարկման առանցքում

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունում տեղի է ունեցել աշխատանքային քննարկում, որին մասնակցել են ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը, Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը և Աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը: Հանդիպմանը ներկա են գտնվել նաև ԿԳՄՍ նախարարի տեղակալներ Կարեն Թռչունյանը և Ժաննա Անդրեասյանը, ինչպես նաև վերոնշյալ գերատեսչությունների ներկայացուցիչներ:

Հանդիպման նպատակն էր քննարկել կրթություն-աշխատաշուկա կապի, մասնավորապես՝ 2022-2023 ուստարվա համար բուհերի՝ ըստ մասնագիտությունների պետպատվերի տեղերի բաշխման վերաբերյալ շահագրգիռ գերատեսչությունների առաջարկները:

Վահրամ Դումանյանը նշել է, որ պետք է հստակ ձևակերպել պետական ֆինանսավորմամբ կրթության կարիքները և հստակ սահմանել պետպատվերի նպատակը: Նա շեշտել է, որ պետք է տարեցտարի վերանայել պետական պատվերի քաղաքականությունը և փորձել տեղերի բաշխման ժամանակ ավելի մեծ շեշտադրում կատարել պետության համար առաջնային նշանակության մասնագիտությունների վրա: ԿԳՄՍ նախարարի խոսքով՝ անհրաժեշտ է հստակեցնել, թե պետպատվերի շրջանակում որ մասնագիտություններով կարիք կա պատրաստելու մասնագետների, որոնք հետագայում կհասնեն տնտեսության կարիքները և կմտնեն աշխատաշուկա:

Այդ նպատակով ԿԳՄՍ նախարարությունը դիմել է շահագրգիռ այլ գերատեսչությունների՝ ներկայացնելու համապատասխան առաջարկներ՝ պետպատվերի ձևավորման գործընթացում առավել թիրախային դարձնելու նպատակով: Ըստ այդմ ուղորտային մասնագիտությունների (բարձրագույն և միջին մասնագիտական) և աշխատաշուկայի պահանջարկի բացահայտման ու գնահատման աշխատանքների իրականացման նպատակով ՀՀ Էկոնոմիկայի նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որում ընդգրկված են Էկոնոմիկայի, ԿԳՄՍ և Աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարությունների, ինչպես նաև Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոնի և ԳԱՄ Ա. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ներկայացուցիչներ:



Աշխատանքային խմբի շրջանակում իրականացվել է հետազոտություն, որի նպատակն էր՝ տնտեսության զարգացման միտումների հիման վրա վեր հանել պետության ռազմավարական ուղղություններում բարձր որակավորում ունեցող աշխատուժի պահանջարկը՝ բարձրագույն կրթության պլանավորման համար: Հետազոտության շրջանակում իրականացվել են խորքային հարցումներ, այդ թվում՝ պետական գերատեսչությունների և մասնավոր հատվածի հետ, ինչպես նաև ուսումնասիրվել են մի շարք փաստաթղթեր, աշխատուժի պահանջարկի վերաբերյալ համաշխարհային միտումները, տնտեսական զարգացումների կանխատեսումը Հայաստանի համար, տնտեսության զարգացման արագ աճի պարագայում աշխատաշուկայում սպասվող զարգացումները մինչև 2030 թվականը:

Ըստ այդմ վեր են հանվել առաջիկա 5-10 տարվա համար մասնագիտությունների և առավել պահանջված հմտությունների վերաբերյալ կանխատեսումները մեր երկրի համար, ինչպես նաև Հայաստանում մեծ ներուժ ունեցող ուղղությունները:

Բոլոր հարցվածները շեշտել են կրթության որակի արդիականացման խնդիրը՝ պնդելով, թե առկա բարձրագույն կրթական համակարգը չի բավարարում աշխատաշուկայի պահանջները, քանի որ առկա են որակի անհամապատասխանություն աշխատաշուկայի պահանջների հետ, փափուկ հմտությունների ձեւավորման մեծ բաց, ինչպես նաև միջառարկայական, միջգիտակարգային ուղղություններում ուսումնական ծրագրերի ներդրման անհրաժեշտություն: Հետազոտության

հեղինակներն առաջարկել են սահմանել պետպատվերի՝ նպատակային ուսուցման սկզբունքը, պետության համար ռազմավարական ուղղություններում մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ տրամադրել կրթաթոշակներ և տեսական գիտելիքները գործնականում ամրապնդելու նպատակով ներդնել գործուն պրակտիկայի մոդել՝ ուսումնառության առաջին տարիներից սկսած:

Որպես առաջիկա անելիքներ՝ սահմանվել են զբաղմունքների, մասնագիտությունների, տնտեսական գործունեության դասակարգիչների և որակավորումների շրջանակի համապատասխանեցում միջազգային չափանիշներին՝ հիմք ընդունելով ESCO և ԵՍՄ համակարգերի սինխրոնիզացիան, թափուր հաստիքների հավաքագրման տեղեկատվական հարթակի և աշխատանք փնտրողների համար առցանց հարթակի գործարկում, աշխատուժի պահանջարկի կանխատեսման մոդելի կառուցում, կարճաժամկետ և երկարաժամկետ ուսուցման իրականացման առաջարկների ներկայացում պատկան մարմիններին, ինչպես նաև DACUM մեթոդաբանությամբ ընտրված ուղղություններով շուկայի կողմից հմտությունների ու կարողությունների պահանջարկի վերհանում ուսումնական ծրագրերի արդիականացնելու նպատակով:

Մասնակիցներն անդրադարձել են նաև ոչ ֆորմալ կրթության և կարճաժամկետ ծրագրերի միջոցով մասնագետների վերաորակավորման խնդրին: Հանդիպման ավարտին քննարկվել է հետագա քայլերի հաջորդականության հարցը:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Սահմանվել է շնորհման կարգը

սկիզբը՝ էջ 2

ՀՀ պետական մրցանակների մրցանակակիր ընտրող հանձնաժողովի ձևավորում

ՀՀ պետական մրցանակների մրցանակակիր ընտրող հանձնաժողովը կազմված է 10 անդամից, որոնց լիազորությունների ժամկետը երեք տարի է: Հանձնաժողովի անդամներն իրենց պարտականությունները կատարում են հասարակական հիմունքներով և իրենց կազմից ընտրում են հանձնաժողովի նախագահ:

Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են «Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների մասին» ՀՀ օրենքով նախատեսված նախարարությունների, մարմինների և կազմակերպությունների կողմից սահմանված կարգով և նախատեսված թվաքանակով ներկայացված թեկնածուները:

Հասարակական կազմակերպությունները ներկայացնում են թեկնածու՝ հանշի առնելով նրա բարձր մասնագիտական որակներ ունենալու և ոլորտի հեղինակավոր մասնագետ լինելու կամ հանրային հեղինակություն վայելելու հանգամանքը:

Մրցանակների հավակնորդների ընտրություն

Մրցանակների հավակնորդների ընտրությունն իրականացվում է՝ հիմք ընդունելով ստեղծագործությունների, հայտնագործությունների (գյուտերի) և աշխատանքների արժեքավորությունը և նշանակությունը տվյալ ոլորտի զարգացման համար և այլ չափանիշներ:

Ճշգրիտ և բնական գիտությունների, հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառների մրցանակի թեկնածուների հայտնագործությունները (գյուտերը) և աշխատանքները, ինչպես նաև դրանց կցված նյութերը հանձնաժողովը կարող է ուղարկել անկախ փորձաքննության էլնելով սահմանված չափանիշներից: Փորձաքննությունն անցկացնում են համապատասխան ոլորտի առաջատար կազմակերպություններ կամ առանձին փորձագետներ, որոնց ցանկը յուրաքանչյուր տարի որոշում է համապատասխան հանձնաժողովը:

Մրցանակի դափնեկրի թեկնածուին ընտրելու վերաբերյալ որոշումը հանձնաժողովն ընդունում է փակ քվեարկությամբ, հանձնաժողովի նիստին մասնակցած անդամների ձայների առնվազն երկու երրորդով:

Հանձնաժողովների անդամներն իրենց ստեղծագործությունների, հայտնագործությունների (գյուտերի) և աշխատանքների համար չեն կարող հավակնել օրենքով սահմանված պետական մրցանակներ ստանալուն:

Բարձր տեխնոլոգիաների ոլորտում համաշխարհային ներդրման համար պետական մրցանակի թեկնածուների հավակնորդների ընտրությունն իրականացնում է մրցանակաբաշխության կոմիտեն՝ հիմք ընդունելով ստեղծագործությունների, հայտնագործությունների (գյուտերի) և աշխատանքների արժեքավորությունը, նշանակությունը տվյալ ոլորտի զարգացման համար և այլ չափանիշներ:

Հեղինակ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մեր երկրի տերն ու ապագան

սկիզբը՝ էջ 2

«Սիրելի՛ երիտասարդներ, դուք մարմնավորում եք մնացած բոլոր լավագույն ուսանողներին, քանի որ մեր հպարտությունը հանդիսացող ուսանողական բազմաճյուղային հանրային չի սահմանափակվում ներկա 34 ուսանողով: Նրանք, վստահաբար, ավելի շատ են: Դուք եք մեր երկրի տերը, այն հզորացնող ուժը, մեր ապագան: Կցանկանայի, որ յուրաքանչյուր երիտասարդ ունենար այս գիտակցությունը: Ապագայի կերտման ճանապարհին մենք ձեր լավագույն գործընկերներ ենք, աչակիցն ու հովանավորը: Ձանք մի՛ խնայեք ձեր նախընտրած ոլորտում կայանալու, նոր ասելիքով հանդես գալու, լավագույն ապագան կերտելու համար: Հատկապես մասնագիտական գործունեության դաշտում մեր երկրի առջև դրված խնդիրները պարտավոր ենք լուծելու, որպեսզի մեր ժողովուրդն ավելի բարեկեցիկ ապրի: Խոր ցավով են նշում, որ մեր ուսանողներից շատերն իրենց կյանքը չխնայեցին և հերոսացան Արցախյան պատերազմներում: Դուք այժմ կրկնակի եռանդով պետք է աշխատեք՝ տեր լինելով նաև նրանց գաղափարներին»,- նշել է նախարարը ուսանողներին մարտնչելով անսպառ եռանդ, բարձր պատասխանատվություն, սեր, նվիրում և մեծա-

մեծ նվաճումներ նախընտրած ոլորտում: Լավագույն ուսանողներին ողջունել են նաև Գավառի պետական համալսարանի ռեկտոր **Ռուզաննա Հակոբյանը** և Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի պրոռեկտոր **Կոնստանտին Ենկոյանը**:

Լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների հավաստագրերը, ինչպես նաև նախարարության դրամաշնորհով տպագրված նվերները՝ գրքերը, հանձնել է ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը:

«Այս պարգևն ինձ համար նոր սկիզբ է՝ գնալ իմ ընտրած լուսավոր ճանապարհով և դառնալ լավագույն մանկավարժներից մեկը»,- մեզ հետ զրույցում մրցույթից ստացած իր տպավորություններն է արտահայտել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի ուսանողուհի **Ջուլիետա Մանուկյանը**:

Գավառի պետական համալսարանի «Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի ուսանողուհի **Մանե Դեոյանի** խոսքով՝ մրցանակը խթան է ոչ միայն հաղթողների, այլև մրցույթից դուրս մնացած ուսանողների հա-

մար, որպեսզի նրանք հետագայում ավելի մեծ ջանասիրությամբ տրվեն համալսարանական աշխատանքին:

Գորիսի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ուսանողուհի **Հայկուշ Արզանյանը** վստահեցնում է՝ մրցույթն ազդակ է բոլոր ուսանողների համար առավել խորքային զբաղվելու հետազոտական աշխատանքով և ուսումնառության ընթացքում ակտիվ լինելու:

«Այս մրցույթը նոր խթան է մասնագիտական որակներում առաջընթացի հասնելու առումով»,- ասում է Երեւանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ուսանող **Նարեկ Շալունցը**:

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ուսանող **Սամվել Եղիազարյանը** արդեն երկրորդ անգամ է արժանանում «Լավագույն ուսանող» մրցանակին: «2 տարի առաջ չափազանց մրցանակը դրական առումով մեծ բան է փոխել իմ կյանքում և պարտավորեցրել ավելի մեծ ձգտումներ ունենալուն:

Հանդիսավոր արարողությունն ուղեկցվել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոսներից և ուսանողներից բաղկացած տրիոյի և վոկալ կվարտետի կատարումներով:

Հ. Հ.

Աշխարհի հետ

Երկու նախարարների գրույցը՝ տեսակապի միջոցով

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանը տեսակապի միջոցով գրույց է իրանի Իսլամական Հանրապետության գիտության, հետազոտությունների եւ տեխնոլոգիաների նախարար Մուհամմեդ Ալի Չոլֆիզուլի հետ:



Ողջունելով իրանցի գործընկերոջը՝ Վահրամ Դումանյանը հույս է հայտնել, որ երկու նախարարների առաջիկա համընդհանուր արդեն կանցկացվի դեմ առ դեմ: Նախարարը նշել է, որ երկու օրից լրանում է երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակը, եւ այն լավ առիթ է առկա համագործակցությունն առավել բարձր մակարդակի հասցնելու տեսանկյունից:

համաշխարհային հեղինակավոր մրցույթի (ICPC) շրջանակում ուսանողական թիմերի միջև համագործակցության հնարավորությունը: Մենք բարձր ենք գնահատում նաեւ Իրանի գիտնականների նվաճումները եւ կարելու է համագործակցություններ հետազոտական ինստիտուտի հետ համագործակցություն ծավալելու հնարավորությունը, ինչպես նաեւ մաթեմատիկայի եւ քիմիայի ոլորտում նոր կարգի ստեղծումը,- նշել է Վահրամ Դումանյանը՝ առաջարկելով

խթանել համագործակցությունը նաեւ դպրոցների մակարդակում համատեղ ամառային ճամբարների անցկացման եւ լեզուների ուսուցման շրջանակում:

Ի՞նչ գիտության, հետազոտությունների եւ տեխնոլոգիաների նախարար Մուհամմեդ Ալի Չոլֆիզուլին իր գոհունակությունն է հայտնել երկու երկրների միջև գիտական, հասարակական եւ մշակութային համագործակցության առնչությամբ: Նա տեղեկացրել է, որ Իրանում գործում են 44 հա-

մակարան, որոնք համաշխարհային սանդղակում զբաղեցնում են բավականին բարձր տեղեր, տեխնոլոգիական բազմաթիվ պարկեր եւ գիտելիքահեն ընկերություններ: Ի՞նչ նախարարի փոխանցմամբ՝ Իրանի բուհերի դասախոսները եւ գիտնականները կարող են տարբեր ոլորտներում համագործակցել ՀՀ բուհերի հետ՝ միաժամանակ պատրաստակամություն հայտնելով օգտվել Հայաստանի գիտական եւ մարդկային ներուժից:

«Մենք բարեկամական եւ եղբայրական ձեռք ենք մեկնում Հայաստանին ու պատրաստ ենք սերտ համագործակցություն ծավալել գիտության եւ տեխնոլոգիաների ոլորտում, փոխադարձ օգտագործել նորարարությունների ներուժը՝ իրագործելով բոլոր կառուցողական առաջարկները»,- փաստել է Մուհամմեդ Ալի Չոլֆիզուլը:

Կողմերը քննարկել են նաեւ համատեղ տեխնոլոգիական պարկեր ունենալու եւ համապատասխան մասնագետներ պատրաստելու, երկու երկրների ուսանողների շարժունություն, դիպլոմների փոխճանաչման եւ փոխայցերի կազմակերպման վերաբերյալ հարցեր:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արցախ

«...Հանուն՝ բարու, հանուն՝ Աստծու...»

Օրերս Ստեփանակերտի մշակույթի եւ երիտասարդության պալատում Երեւանի «Մետրո» թատրոնը ներկայացրեց 44-օրյա պատերազմում անմահացած Վարդան Ամալյանի պատմվածքների հիման վրա ստեղծված «Ապրեցնող երկխոսություն» բեմադրությունը: Արցախյան դիտումին ներկա էր նաեւ Վարդանի հայրը՝ ՀՀ վաստակավոր արտիստ, արցախյան ազատամարտի մասնակից Դավիթ Ամալյանը:



Մինչ ներկայացումը Տեր Ներսես քահանա Ասրյանն աղոթք հնչեցրեց: Դիմելով լեփ-լեցուն դահլիճին՝ նա, մասնավորապես, ասաց. «Հաճախակի այցելելով Ստեփանակերտի հուշահամալիր՝ այն զգոցողությունն ունեմ, որ մեր հայրենապաշտ զոհյալների շատ հարազատներ միշտ այնտեղ են, նրանց կյանքի մի մասը տեղափոխվել է այնտեղ: Մենք հասել ենք մի կետի, ուր, որպես քրիստոնյա, զգում ենք, թե ինչ է նշանակում հոգիների անմահությունը, թե ինչ է նշանակում կյանքի մյուս ափ անցած մեր հարազատների հետ կապի չխզումը, մենք հասկանում ենք, որ մի օր մեր հոգիները կրկին իրար հետ պետք է շփվեն: Քրիստոնյայի համար սա է իրականությունը: Չկա «մահ» հասկացություն, կա ժամանակավոր աշխարհ, ուր բնակվում ենք, եւ կա հավիտենություն, որտեղ, հասնելու ենք բոլորս»,- նշեց Տեր Ներսեսը:

րենիքի ազատությանը կյանքը նվիրաբերած Վարդանի տողերի հրաշք հեւթով, ասես, բեմահարթակին նրանք բոլորն էին մեր ազատության անմեռ պայքարի անմահ հերոսները: Հանդիսատեսի արցունքախառն հպարտության զգայուն նյարդն էր տրոփող ու ապրեցնող շնչառությամբ դարձել նրանց գրույցակիցը:

ներկայացումն Արցախում ցուցադրելու կարիքն, իրոք, անհարժեշտ էր: «Մենք ուզում էինք բեմադրության միջոցով ապրեցնող խոսք փոխանցել հանդիսատեսին Վարդան Ամալյանի պատմվածքների բերած փիլիսոփայության շեշտադրումով: Եվ դատելով հանդիսատեսի արձագանքից, դա ստացվել է»,- ասաց Մեհրաբյանը:

«...Մենք պարզապես ավելի լավ կկանավարենք աշխարհը՝ հանուն՝ բարու, հա-

նուն՝ Աստծու»,- Վարդանի այս միտքը խորն է ակոսել հոգիս... 44-օրյա անիծյալ պատերազմի 11 նահատակների ստեղծագործություններն ամփոփող «Հնչող ձայներ» ծողովածուի ընթերցողի հետ սկսած գրույց շարունակվում է:

«Կրթություն» թերթի էջերում ժամանակ առաջ են անդրադարձել ժողովածուին եւ ... մնացել տղաների ստեղծած հզոր աշխարհում, ուր մեզ պարտություն չկա, ուր մեր ամեն երազանքը՝ հայրենիքի պատկերն ունի...

Եվ Վարդանի պատմվածքների բեմական հորինվածքն ինձ համար հնչում էր նաեւ ժողովածուից հառնող իր այս տողերով. «Ի՞նչ է կյանքը... երկրային փորձություն, թե՞ անվերջանալի մի երթ, որը կազմել է Աստված: Նայելով երկնքին՝ դու հասկանում ես, որ կյանքն անքան էլ այն չէ, ինչ մենք ապրում ենք: Դու հասկանում ես, որ ամեն ինչ ավելի խոր է, ավելի բնական եւ անհասանելի:

Ես սիրում եմ կյանքն իր ամեն ինչով՝ վերելքներով եւ վայրէջքներով: Դավաճանությունը չեն սիրում, զգվում են թուլամորթ տղաներից, եւ, ընդհանրապես, թուլամորթ մարդկանցից: Ես ինձ երկու բառով չեմ կարող արտահայտել, քանի որ շատ երազանքներ ունեմ եւ շատ տարիներ ապրելու...»:

Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Ք. Ստեփանակերտ,
մեր սեփական թղթակից

Աշխարհի վրա մի դրախտ երկիր կա, որտեղից, ասես, ժամանակն է սկսվում: Այդ դրախտ երկիրը Արցախն է կոչում, հայի հանգրվան, հայի սուրբ երկիր:

2015 թվականն էր, երբ ավարտեցի Գորիսի պետական համալսարանը, որպես իրավաբան մասնագետ՝ մեկնեցի Արցախ: Այնտեղ սկսեցի իմ առաջին մանկավարժական քայլեր: Ինձ գործուղեցին դրախտաձոր Դրախտիկ համայնք, որը գտնվում է Քաշաթաղի շրջանի հյուսիսում, Բերձոր քաղաքից 50 կիլոմետր հյուսիս: Իրոք որ հրաշագեղ է Արցախը՝ իր յուրովի բնությանը եւ հերոսների փառահեղ անցյալով:

Աստծո պարգև է Արցախը, հայի շունչն ու ստեղծագործ ոգի: 2016թ. Ապրիլի մեկն էր... ուրախ ու զվարթ, կտրված աշխարհից, հոգսերից, դպրոց էինք գնում: Արդեն երկրորդ ժամն էինք պարապել, երբ զանգեցին մեր տնօրենին եւ զգուշացրին, որ բոլոր երեխաներին տուն ուղարկենք: Դպրոցում իրավիճակը մանկավարժական խորհրդի նիստ... իմացանք, որ պատերազմ է սկսվել: Մեր գյուղից նույնպես ջոկատներ կազմվեցին եւ մեկնեցին ռազմաճակատ: Չորս օր անց պատերազմն ավարտվեց: Նե՞նգ թշնամուն հետ շարժեցինք մեր Արցախ երկրից: Մեր

Վերհուշ

քաջ զինվորները կրկին ցույց տվեցին իրենց ոգու արիությունը: Արցախ երկրում դարձյալ խաղաղվեց երկինքը: Իսկ հողը երախտապարտ էր. «Ապրեք, որ պայքարեցիք ինձ համար, իմ ազատության եւ անկախության համար»:

Այսօրվա պես հիշում եմ այն հրաշալի օրերը, ժամերը եւ անգամ վարկյանները, որ անցկացրել եմ Արցախում:

...Դրախտաձորում իմ գործընկերներն ինձ զրկաբաց ընդունեցին: Պատմության ուսուցիչ չունեին... Այստեղ գյուղացիներն զբաղվում են անասնապահությամբ, գյուղատնտեսությամբ, իսկ գարնանը սարերից ու ձորերից բերում էին բոխի, սիճարիկ, ծնեթեկ... Դրախտաձորն առատ է սնկերով: Այգիները լի են խնձորենու, տանձենու, բարբաբիսի ծառերով, ընկույզենիներով, զվեռով... ամեն անկյունում բուրուռ են յասամանները:

...Որպես դասուղեկ՝ հաճախակի էի կազմակերպում միջոցառումներ: Քանի որ մեր գյուղը անտառի մեջ էր, հաճախ կազմակերպում էինք արշավներ: Գյուղը հարուստ էր նաեւ կենդանա-

կան աշխարհով. այստեղ կան գայլեր, աղվեսներ, արջեր, եղինկներ, վայրի այծեր, նապաստակներ...

...Եվ նորից սես ամպեր կուտակվեցին Արցախ աշխարհի երկնքում... 2020թ. Սեպտեմբերի 27-ն էր. սկսվեց Արցախյան 2-րդ պատերազմը: Կրկին զենք վերցրեցինք ու գնացինք հայրենքը պաշտպանելու: Դժբախտաբար, 44-օրյա ընթացքում կորցրեցինք Արցախ աշխարհի մի մասը եւ ունեցանք երեք սերունդ գոհեր:

Եվ Դրախտաձոր գյուղը հանձնվեց թշնամուն... ինչպես Արցախի հազարավոր գյուղեր, անառիկ Շուշին: Այժմ նե՞նգ, տգետ, բարբարոս թշնամին ոչնչացնում է մեր եկեղեցիները, խաչքարերը, մշակույթը, հայի հետքը...

Հույս ունեմ, որ մի գեղեցիկ օր, Աստծո կամքով, կվերադառնան իմ շատ սիրելի Դրախտաձորը եւ նորից կշարունակեն մանկավարժի իմ գործը... Իսկ մինչ այդ ես աշխատում եմ Արարատի մարզի Պարույր Սեւակի միջնակարգ դպրոցում դարձյալ որպես պատմության ուսուցիչ:

Խորեն ՍԻՐԱՎԱՅԱՆ

Ի խնկարկուն

Այնտեղ, որտեղ Արմենն էր, բարությունն էր

Բարության հուշ է թեւածում դպրոցում:

Դպրոցի 2020 թվականի շրջանավարտ, 44 օրյա պատերազմում զոհված Արմեն Խաչատրյանի հիշատակին նվիրված միջոցառումն էր «Փառքդ՝ հավերժ, հիշատակդ՝ անմար, մեր սիրելի Արմեն» խորագրով:

Օրը հիշատակի էր, միջոցառումը՝ խորհրդանշական:

2002 թվականի մարտի 2-ին Լճաշեն գյուղում, Ավետիս Ե. Չեղինե Խաչատրյանների ընտանիքում ծնվեց Արմենը: Ընդունվեց դպրոց, աչքներիս առաջ մեծացավ ու հասուն մարդ դարձավ: Աչքերում միշտ խորինաստ ժպիտ կար. խառնվածքով մեղմ էր ու հանգիստ, նուրբ հունոր ուներ, սիրում էր դասարանում ընկերներին ուրախացնել զվարճալի պատմություններով:

Ուսումնառության ընթացքում Արմենն ակտիվ էր, սիրում էր լնում լողալ, ներգրավվում էր տարբեր միջոցառումների ու նախաձեռնությունների, հանրօգուտ աշխատանքների մեջ, ֆուտբոլի ու շախմատի մրցույթներում լինելով վառ անհատականությունն էր իր մեջ կրելով հայրենասիրության բարձր արժեքներ:

Սիրված էր դպրոցում, ընդունված ընկերների, ուսուցիչների կողմից, անփոխարինելի էր իր նուրբ ու վարակիչ ժպիտով, կայտառ ու խանդավառ կեցվածքով:

Այնտեղ, որտեղ Արմենն էր, բարությունն էր, առաջինն էր միշտ առաջ նետվում:

Դպրոցն ավարտելուց հետո 2020թ. հուլիսի 21-ին մեկնեց բանակ, ծառայության անցավ Ջրականում:

Եվ դպրոցում, եւ ծառայության ընթացքում իր պարտականությունները կատարում էր բարեխղճորեն, ձգտում տիրապետել նոր հմտությունների: Նրա մեծագույն երազանքն էր հայրենիքի համար պիտանի մարդ ու արժանի զինվորական դառնալ:

Ծառայության երեք ամիսների ընթացքում արժանացել էր հրամանատարների գովեստին:

Գրեթե ամեն օր զանգահարում, վստահ, հուսադրող ձայնով համոզում էր ծնողներին ու հաճախակի կրկնում.

«Մամ ջան, պա՛պ ջան, համ-գիստ քնեք, տղերքը պահում են...»:

Օրեր շարունակ Արմենից ծնողները լուր չունեցան:

Միայն հետո իմացան, որ Արմենը պատերազմի առաջին իսկ ժամերից թե՛ մարտերի է մասնակցել ու զնացել սխրանքների:

Ծնողներն զգացել էին, զգացել էին որ... մարեց նրանց արեւը... ու երկինքը կանչեց նրան:

Վերջին անգամ Արմենը ծնողներին զանգահարել էր 2020թ. հոկտեմբերի 9-ին առավոտյան:

Հաջորդ օրը Հայրություն, անհավասար մարտում Արմենն անմահացավ ու զնաց, զնաց միացավ հերոս նահատակ ընկերների բանակին՝ վերցնելով իր անմահության խորհուրդը:

Միջոցառմանը մասնակցում էին Արմենի մայրը՝ **Չեղինե Խաչատրյանը**, հարազատները, Լճաշեն համայնքի աշխատակազմի աշխատակիցներ, Ջորակոչային եւ



զորահավաքային համալրման ծառայության Սեւանի բաժանմունքի պետ **Նաիրի Խաչատրյանը**, տեսուչ **Նաիրի Գուրգարյանը**, ուսուցիչներ, աշակերտներ, ծնողներ:

Միջոցառումն սկսվեց Տերունական աղոթքով:



Դպրոցում Արմենին միշտ ենք հիշելու. չէ՞ որ դպրոցը ոչ միայն վառ է պահելու ու հավերժացնելու մեր շրջանավարտներ **Արմեն Խաչատրյանի, Գեորգ Բաբայանի, Փայլակ Դազարյանի, Հայկ Գապարյանի, Վրույր Վարդանյանի եւ Ռաֆֆի Մանուկյանի** հիշատակը, այլև նրանց օրինակով ուսուցանելու ու դաստիարակելու է գալիք սերունդներին, պահպանելու է նրանց լուսավոր հոգիները, նրանց կյանքի հավիտենական ճամփորդությունն ու անմահության խորհուրդը:

Կարելորդ մերօրյա է գալիք սերունդները հերոս տղաների անուններն անմար պահեն դարերով, ճանաչեն եւ ձգտեն լինել նրանց եւ հազարավոր հերոսների նման քաջ ու արի, որոնք ընկան վասն հայրենյաց կիսատ թողնելով իրենց գարունները:

Ջորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Սեւանի բաժանմունքի պետ Նաիրի Խաչատրյանը Արմենի մայրիկին հանձնեց Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագիրը ու մեղալը՝ շարքային Արմեն Ավե-

տիսի Խաչատրյանին ցուցաբերած արիության եւ խիզախության համար «Մարտական ծառայության» մեդալով հետմահու պարգևատրելու մասին:

Դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ «ՆՁՊ» առարկայի դասասենյակն անվանակոչվել է պատերազմում զոհված դպրոցի շրջանավարտների անուններով, դպրոցի բակում տնկվել են ծառեր նրանց անուններով, պայծառ ու լուսավոր անուններ, որոնք հավերժացան ու գրվեցին դպրոցի հարուստ տարեգրության էջերում:

Աշակերտական խորհուրդն Արմենի մայրիկին նվիրեց որդու դիմակարգ եւ սպիտակ վարդեր:

Խորհրդանշական օրն ամփոփեցին 9-րդ Ա դասարանի աշակերտները, որոնց կատարմամբ հնչեցին Արմենի ու բոլոր սխրագործ տղաների սիրած «Կյանքս՝ կյանքիդ գնով», «Իմ հերոս», «Բալլադ զինվորի մասին», «Դեպի երկինք» հայրենասիրական երգերը՝ ի փառս հերոսացած քաջորդիների, քաջորդիների, որոնք մատաղ սերնդի համար հերոսական խոսուն կերպարներ դարձան, որոնց թափած սուրբ արյանք կանգուն մնաց

Արթուր ԳՐԻԳՈՐՅԱՆ



Հայ մշակութասեր հանրությունն անդառնալի կորուստ կրեց. 63 տարեկան հասակում մեզանից հեռացավ ՀՀ ժողովրդական արտիստ, Հայաստանի երգի պետական թատրոնի հիմնադիր եւ գեղարվեստական ղեկավար, կոմպոզիտոր **Արթուր Գրիգորյանը**:

Արթուր Գրիգորյանը ծնվել է 1958թ. հուլիսի 31-ին, Երեւանում: 1965-75թթ. սովորել է Երեւանի թիվ 34 միջնակարգ դպրոցում: Ջուզախե՝ սովորել է Երեւանի Ս. Չուխաչյանի անվան երաժշտական դպրոցի դաշնամուրային, այնուհետեւ՝ կոմպոզիցիայի դասարանում:

1976-78թթ. եղել է Օրջոնիկիձեի շրջանի պիոներ պալատի եստրադային խմբի ղեկավարը: 1975-79թթ. սովորել է Երեւանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում:

1981-83թթ. եւ 1987թ.-ից դասավանդել է «Հայիստերգ»-ի եստրադային ստուդիայում: 1983-84թթ. աշխատել է գեղագիտական էսթետիկական կենտրոնում:

1984-91թթ. սովորել է Մոսկվայի թատերական արվեստի պետական ինստիտուտի ռեժիսուրայի ֆակուլտետում: 1985-88թթ. եղել է «Պոպուլյար» համույթի երաժիշտ:

1992թ. նշանակվել է Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ գործակալության նախագահ եւ մինչ 1994թ. եղել է Հայաստանի պետական ջազ նվագախմբի գեղարվեստական ղեկավարը:

1994թ. հիմնադրել է Հայաստանի երգի պետական թատրոնը, որի գեղարվեստական ղեկավարն է եղել մինչեւ կյանքի վերջը: 1995-98թթ. եղել է Երեւանի Երիտասարդական պալատի տնօրենը, 2001թ.-ից՝ Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամ, 2009թ.-ից՝ խորհրդատու:

Հեղինակել է «Այր», «777», «Ասուպ», «Ընծա» մրցանակաբաշխությունները, «Հենց այսպես», «Տես» հեռուստահաղորդումները, «Կանաչ գոտի», «Արցախի ձայներ» նախագծերը, Հայաստանի «Ձաքյան» ֆոնդի հովանավորչական ամենամյա հեղինակ-կատարողների մրցանակաբաշխությունը: Նախաձեռնել է ղեկավարել է Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտի եստրադային կուրսը: Հեղինակել է բազմաթիվ երգեր, մանկական մյուզիքլներ, մասսայական միջոցառումներ, փառատոներ, թեմատիկ եւ եստրադային համերգներ:

Արթուր Գրիգորյանն ազգային երաժշտարվեստի անխնայ պահպաններից էր, հայկական երաժշտարվեստի զարգացման եւ տարածման նվիրյալ: Նրա հիմնադրած երաժշտական կրթօջախի ավանդույթների կրողներն ու շարունակողները այսօր մշակութային այնպիսի գործունեություն են իրականացնում ինչպես Հայաստանում, այնպես էլ աշխարհի բոլոր հայ գաղթօջախներում:

Արթուր Գրիգորյանն արժանացել է Հայաստանի եւ Արցախի պետական պարգևների եւ մրցանակների: 1996թ. պարգևատրվել է ՀՀ «Մովսես Խորենացի», 2005թ.՝ Արցախի «Վաչագան Բարեպաշտ» մեդալներով, 2008թ.՝ ՀՀ «Հայրենիքի մատուցած ծառայությունների համար 1-ին աստիճանի մեդալ»-ով: 2003թ. արժանացել է Հայաստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործչի, 2011թ.՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստի կոչման:

Անգնահատելի է Արթուր Գրիգորյանի ներդրումն Արցախի մշակութային կյանքի զարգացման գործում: Նա իր ստեղծագործություններով կերտել է հաջորդ սերունդներին է փոխանցել իր անհավատալի խորը եւ մեծ սերը դեպի Արցախը: Արցախյան առաջին պատերազմի ժամանակ, գտնվելով Արցախում, իր ներկայությամբ եւ կատարումներով կանգնած է եղել հայ զինվորների կողքին, ոգեշնչել եւ գոտեպնդել է նրանց՝ բարձրացնելով ազատամարտիկների մարտական ոգին:

Արթուր Գրիգորյանը բոլորի հուշերում կմնա որպես մեծ արվեստագետ, երգարվեստի տաղանդավոր վարպետ, մանկավարժ, հայկական մշակույթի երախտավոր:



Արթուր ՄՈՒՐԱԴՅԱՆ
ՀՀ Գեղարքունիքի մարզի
Լճաշեն գյուղի
Ա. Տեր-Գրիգորյանի անվան
միջնակարգ դպրոցի տնօրեն

Չեքիաթի տեղն ու դերը տարրական կրթության համակարգում

Բոլոր երեխաները սիրում են հեքիաթներ լսել եւ կարդալ: Չեքիաթի բովանդակության հետաքրքրաշարժությունը, դեպքերի զարգացման հանրապրակայնությունը, հերոսների բնավորության գծերի հստակությունը, հաճախակի կրկնվող սկիզբն ու բազմաթիվ արտահայտությունները, հաճելի ավարտը, մատչելի գաղափարն ու ենթատեքստը հեշտացնում են նրա ընթերցումն ու դարձնում ցանկալի: Այդ է պատճառը, որ թե՛ մեծերը, թե՛ փոքրերը միեւնույն հեքիաթը կարդում են բազմիցս՝ ամեն անգամ նրանում հայտնաբերելով նորը, ուսանելի, գրավիչն ու հետաքրքիրը:

«Չեքիաթները անդունդներ են խորը, անծայր, անվերջ, հարուստ ու շքեղ աշխարհ: Չեքիաթը ամենաբարձր ստեղծագործությունն է. նույնիսկ ամենահամարները հեքիաթները չեն կարողանում ստեղծել, բայց հեքիաթների են ձգտում»,- ասել է Յուլիաննա Թուրանյանը, որը հեքիաթների ամուսնական մշակող էր:

Չեքիաթները բանավոր հյուսվել են ժողովրդի կողմից դարերի ընթացքում: Չեքիաթներում արտացոլված են ժողովրդի երազանքներն ու ձգտումները:

Բոլոր ժողովուրդներն էլ ունեցել են իրենց հեքիաթները, որոնք աչքի են ընկնում բովանդակության ու ձևերի արտակարգ բազմազանությամբ: Այստեղ մախպետը է նշել կենդանական հեքիաթները, որոնց մեջ մարդիկ ոչ միայն արտահայտել են իրենց պատկերացումները կենդանիների մասին, նրանց վարքագծի մասին, այլև այլաբանորեն պատկերել են մարդկային այս կամ այն հատկանիշը: Ավելի խոր ընդհանրացումներ են պարունակում կասարդական հեքիաթները, որոնք սովորաբար պատմում են չարի ու բարու պայքարի, դրական հերոսի հրաշապատում արկածների, փորձությունների եւ հաղթանակի մասին: Գրեթե միշտ հեքիաթն ավարտվում է բարի ուժերի հաղթանակով չար ուժերի նկատմամբ: Ժողովուրդը դրանով արտահայտել է իր իդեալներն ու լավատեսությունը: Կասարդական հեքիաթն ունի մեծ մասամբ հերոսական բովանդակություն. նրա դրական հերոսն իդեալականացվում է, օժտվում անպարտելի ուժով եւ բարոյական բարձր հատկանիշներով: Ավելի նոր ժամանակների արդյունք են իրապատում հեքիաթները, որոնց մեջ արտացոլվել են ժողովրդի կյանքի եւ կենցաղի տարբեր կողմերը, սոցիալական հարաբերությունները: Այս հեքիաթներում ֆանտաստիկ, գերբնական պատկերները վճռական դեր չեն կատարում, բայց պահպանվում են անսովոր դեպքերը, հերոսների զարմանալի արկածները:

Ցանկացած տիպի հեքիաթ լինի դա իրապատում, հրաշապատում, թե կենդանական, ունի շատ խորը կրթադաստիարակչական արժեք, որի միջոցով էլ երեխաների մեջ ձեւավորվում են զարգացնող արժեքներ: Այդ պատճառով էլ հեքիաթի դասավանդումը մեծ տեղ է զբաղեցնում տարրական կրթության համակարգում:

Չեքիաթը՝ որպես գեղարվեստական ստեղծագործություն: Չեքիաթը հայ ժողովրդական բանահյուսության ամենահին, ամենատարածված եւ ամենահարուստ ժանրերից մեկն է: Չեքիաթի ստեղծողն ու պահպանողը միայն ժողովուրդն է: Այն բանավոր, էպիկական – գեղարվեստական արձակ պատմվող հրաշապատում ստեղծագործություն է՝ հիմնված ֆանտաստիկ հնարանքի վրա:

Չարիփակվելով այս կամ այն պատմաշրջանի սահմաններում հեքիաթները իրենց վրա կրում են պատմական բոլոր ժամանակաշրջանների ժողովրդական կյանքի ու մտածողության կնիքը: Նրանք անընդհատ փոփոխվել ու հարստացվել են նոր վտակներով:

Չայ ժողովրդական հեքիաթների մեծագույն մասը խորապես ազգային ստեղծագործություններ են, որոնք տարբերվում են ուրիշ ժողովուրդների հեքիաթներից իրենց լեզվի, կյանքի, կենցաղի, բնության նկարագրով եւ հերոսների հոգեկերտվածքով: Չեքիաթները իրենց ֆանտաստիկ, ռեալիստական սյուժեներով ու կերպարներով արտացոլում են հայ ժողովրդի պատմական զարգացման ընթացքը: Իբրեւ բանահյուսության ամենակենսունակ ժանրերից մեկը՝ հեքիաթները արտացոլում են հայ ժողովրդի աշխարհագրական, հազգացման ու աշխարհայացքի բովանդակությունն ու բնույթը: Ինքնին հասկանալի է, որ հեքիաթներում արտացոլված են ժողովրդի աշխարհայացքի, մտածողության ու հոգեբանության ոչ միայն ուժեղ եւ առաջավոր կողմերը, այլև պատմականորեն անխուսափելի եւ հետամնաց թույլ կողմերը:

Չայ ժողովրդական հեքիաթներն իրենց նկարագրով եւ իրականության արտացոլման եղանակներով միասեռ չեն: Նրանք բաժանվում են հիմնականում երեք խմբի՝ կենդանական, հրաշապատում եւ իրապատում:

Կենդանական հեքիաթները գալիս են վաղնջական ժամանակներից եւ կապված են նրանց ընտելացման առաջին փորձերի հետ: Ապրելով բնության գրկում մարդը շատ հաճախ չփվում էր նաեւ վայրի կենդանիների հետ եւ տնտեսական ու այլ նկատառումներով ձգտում հասկանալ նրանց «լեզուն», նրանց «վարք ու բարքը», նրանց «բնավորությունը»: Կենդանական հեքիաթների կոմպոզիցիան կառուցված է պատահական հանդիպումների վրա եւ աչքի է ընկնում միեւնույն սյուժեի տարրերի հաճախակի կրկնության: Կենդանիների հետ գործող մարդիկ շատ աննշան դեր են կատարում, կարելի է ասել գրեթե չեն մասնակցում ծավալվող իրադարձություններին: Սյուժեն զարգանում է ոչ այնքան պատմելով, որքան դիալոգներով, որոնք աշխույժ են ու սրամիտ: Կենդանական հեքիաթներից են «Բենթին», «Գզզզված ճնճուկը», «Մայր սագի հեքիաթը», «Շունն ու կատուն», «Ամտառի բնակիչները», «Նապաստակին հյուր» եւ այլն:

Չրաշապատում հեքիաթներում ամեն ինչ գերբնական է, հրաշքային: Չենց այդ էլ նրանց

ծագումը տանում է ամենահեռավոր ժամանակները, երբ մարդը դեռեւս գերի էր բնությանը եւ ձգտում էր ազատագրվել նրանից: Չրաշապատում հեքիաթները, սովորաբար, սկսվում են միեւնույն արտահայտություններով՝ «Ժամանակով կար, չկար», «Ժամանակով լինում է, չի լինում» եւ այլն: Այս հեքիաթներում մեծ տեղ են գրավում անակնկալ դրվագները, վերջավորությունը մեծ մասամբ օրգանապես չի կապվում սյուժեի հետ: Չրաշապատում հեքիաթներից են «Չնեմարդը», «Կեռասիկը», «Արեւն ու լուսինը», «Սոխրոտը», «Արեգնազանը» եւ այլն:

Իրապատում հեքիաթները հասարակական կյանքը, մարդկային, դասային ու դասակարգային փոխհարաբերություններն արտացոլում են առավել իրական, առավել ռեալիստական գույներով: Իրապատում հեքիաթների կերպարները գերազանցապես անհատականացված են. այս կամ այն դասին ու դասակարգին նրանց պատկանելը ոչ թե մթագնված է երեւակայական շղարշով, այլ պարզ է ու որոշակի: Իրապատում հեքիաթները աչքի են ընկնում գործողությունների արագ ու նպատակասլաց զարգացմամբ եւ գեղարվեստական մեծ ընդհանրացումների ուժով: Իրապատում հեքիաթներն առաջացել են դասակարգային հակամարտությունների սրման պայմաններում: Պարզությունը, դեպքերի զարգացման արագ ընթացքը, նպատակասլացությունն ու սյուժեների տրամաբանական ավարտը, լեզվի ու ոճի դիպուկությունն ու սարկազմը իրապատում հեքիաթների բնորոշ առանձնահատկություններն են: Իրապատում հեքիաթներից են «Տերն ու ծառան», «Թող ուրիշն անի», «Երեք հարուստ», «Չնարագետ պատանի» եւ այլն:

Չայ ժողովրդական հեքիաթները այժմ էլ չեն կորցրել իրենց գեղարվեստական, պատմաճանաչողական եւ դաստիարակչական նշանակությունը: Նրանք իրենց հարուստ բովանդակությամբ ուսումնասիրության լայն սափարեզ են բացում գիտության գրեթե բոլոր բնագավառների մասնագետների համար: Նրանք առատ եւ անսպասելի մյուս են մատակարարում պատմաբանին ու ազգագրագետին, գրականագետին ու լեզվաբանին, փիլիսոփային ու տնտեսագետին, գրողին, արվեստագետին եւ այլոց:

Չեքիաթի կրթադաստիարակչական արժեքը: Չեքիաթն ունի դաստիարակչական մեծ արժեք, բարոյական արժեքավոր սկզբունքներ, որոնք ոչ թե ներկայացվում են իբրեւ քարոզ, այլ արտահայտվում են հերոսների արարքներով, խոսքերով: Չենց այս հանգամանքն էլ ուժեղացնում է երեխաների հոգու, զգացմունքների ու համոզմունքների վրա թողնվող ազդեցությունը: Չեքիաթն ուսուցման արդյունավետության ապահովման տեսակետից ծանրակշիռ տեղ ունի: Այն նպաստում է մանկան երեւակայության խթանմանը, հետաքրքրասիրության զարգացմանը եւ ընթերցասիրության մշակմանը: Չեքիաթի ընթերցանությունն առնչվում է մաեւ մանկան աշ-

խարհայացքի ձեւավորման սաղմերին: Դեռեւս փոքր հասակից երեխան ծանոթանում է սիրում է ժողովրդական հեքիաթները, առակները, շուտասելուկները, ստուսաելուկներն ու հանելուկները: Չեքիաթների ընդերքը հարուստ է ժողովրդական հանճարի լուսավոր փայլատակունցներով, որոնք արտահայտվում են թեւավոր խոսքերով, աֆորիզմներով, հրապարտերով եւ ասացվածքներով: Չեքիաթներն ու ժողովրդական իմաստուն ասացվածքները նպաստում են տարբերակելու աշխատասիրությունը՝ ծրիակերությունից, ակտիվ աշխատանքային գործունեությունը՝ անգործությունից: Չեքիաթը միաժամանակ օժանդակում է երեխաների մտավոր զարգացմանը եւ նրանց դաստիարակում թերությունների նկատմամբ՝ անհաշտության ոգով: Այն օգնում է բացահայտելու ոչ միայն շրջապատի ու ընկերների անկատարությունը, այլև տեսնելու դրա ծագման պատճառները:

Դարեր շարունակ գոյատեւել է երեխաներին ավանդույթներ, ասքեր, հեքիաթներ, պատմություններ ու ծիծաղաշարժ դեպքեր պատմելու սովորությունը: Չէ՞ որ հեքիաթը նախկինում հենց միայն այդպես, բանավոր կերպով է գոյություն ունեցել եւ միայն հետագայում է բանահավաքների ու գրողների կողմից գրառվել, մշակվել ու գրական, գրքային ձեւ ստացել:

Չեքիաթների ունկնդրումն ուսուցողական արժեք ունի ոչ միայն խոսքի զարգացման, այլև աշխարհաճանաչողական տարաբնույթ գիտելիքների ու տեղեկությունների ձեռքբերման առումով: Այսպես, տարրական դասարանների մայրենի լեզվի դասագրքերում տեղ գտած հեքիաթների մեծամասնությունը կարելի է ներկայացնել տիկնիկային թատրոնի բեմադրությունների ձեւով: Չեքիաթի պատկերների ու երեւույթների միջոցով հեքիաթները երեխաներին տանում են դեպի մտավոր աշխարհ: Դրանց շնորհիվ ընդարձակվում է նրանց մտահորիզոնը եւ երեւակայությունը:

Ամենակարեւորն այն է, որ հեքիաթը ժանրային առանձնահատկությունների շնորհիվ լայն հնարավորություններ է ընձեռում սովորողների ակտիվության եւ ինքնուրույնության զարգացման առումով: Պետք է ձգտել, որ ժողովրդական իմաստության հիանալի մոտիվների բառարանը դառնա սովորողների ակտիվ բառապաշարի անքակտելի մասը: Չանձնարարելի է, որ հատկապես այդ նպատակով աշակերտները պահեն տեսրեր: Տանը, մայրենի դասին նախապատրաստվելիս, նրանք համապատասխան հեքիաթից պետք է դուրս գրեն թեւավոր խոսքեր, իսկ դպրոցում եւ առօրյայում դրանք օգտագործեն իրենց բանավոր եւ գրավոր խոսքում: Տեքստի վրա աշակերտների ինքնուրույն եւ ակտիվ աշխատանքը կազմակերպելու տեսակետից չափազանց արդյունավետ է հեքիաթի որեւէ պահի վերարտադրումը նկարի միջոցով: Չատկապես այս հանձնարարության նկատմամբ աշակերտները մեծ

պատրաստակամություն են ցուցաբերում եւ սիրով ձեռնամուխ լինում դրա կատարմանը:

Չեքիաթի որեւէ ուշագրավ պահի նկարագրում կամ հերոսներից մեկի բնութագրումը նշանակում է երեւակայությամբ վերապրել հեքիաթի բովանդակությունը: Այստեղ տեղի է ունենում խոսքի եւ գույների արվեստի միաձուլում, ինչն էլ նպաստում է եւ երեխայի գեղագիտական դաստիարակությանը, եւ ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Յուրաքանչյուր երեխա անհատականություն է: Ուստի անհրաժեշտ է պայմաններ ստեղծել նրա անհատական տաղանդի ու հմտությունների զարգացման համար: Երբ երեխան իր մտքերն ազատ արտահայտելու հնարավորություն է ստանում, դա ոչ միայն օգնում է ուսուցչին ավելի լավ ճանաչելու նրան, այլև նպաստում է երեխայի ինքնաճանաչողությանն ու ինքնահաստատմանը:

Չեքիաթների ուսումնասիրությունը ճշտում է կոնկրետացնում է երեխաների պատկերացումները մարդկային բարոյական հատկանիշների վերաբերյալ եւ մեծապես նպաստում է նրանց մեջ այդ հատկանիշների արմատավորմանը:

Չեքիաթի դասավանդումը: Չեքիաթը տարրական դասարանների ընթերցարաններում ամենից հաճախ հանդիպող նյութերից մեկն է, ուստի դրա դասավանդման մեթոդիկան, առանձնահատկությունների քննարկումը ուսուցողական տեսակետից հատուկ հետաքրքրություն է ներկայացնում:

Չեքիաթները դասավանդման իրենց յուրահատուկ ձեւն ունեն, որը պայմանավորված է նրանց ժանրային առանձնահատկություններով: Չեքիաթներում իրական ու երեւակայական հանդես են գալիս միախառնված վիճակում, եւ դա նրա ժանրային առանձնահատկություններից մեկն է: Դասավանդման ընթացքում հեքիաթի ուսումնասիրությունն այնպես պետք է տանել, որ դրանք թե՛ իրենց փոխադարձ միասնության մեջ, թե՛ առանձին-առանձին հասնեն երեխաների գիտակցությանը:

Չեքիաթի դասավանդումն ունի երկու հիմնական փուլ՝ բովանդակության կամ սյուժեի հաղորդում եւ հեքիաթային կամ երեւակայական կողմի բացահայտում: Նրանք երկուսն էլ խիստ կարեւոր ու անհրաժեշտ են նյութի յուրացման ու նրանից բխող կրթական ու դաստիարակչական նպատակների իրականացման համար եւ երբեք չեն կարող փոխարինել միմյանց:

Չանձնարարելի է, որ հատկապես այդ նպատակով աշակերտները պահեն տեսրեր: Տանը, մայրենի դասին նախապատրաստվելիս, նրանք համապատասխան հեքիաթից պետք է դուրս գրեն թեւավոր խոսքեր, իսկ դպրոցում եւ առօրյայում դրանք օգտագործեն իրենց բանավոր եւ գրավոր խոսքում: Տեքստի վրա աշակերտների ինքնուրույն եւ ակտիվ աշխատանքը կազմակերպելու տեսակետից չափազանց արդյունավետ է հեքիաթի որեւէ պահի վերարտադրումը նկարի միջոցով: Չատկապես այս հանձնարարության նկատմամբ աշակերտները մեծ

Աշխարհի հետ

«Աշակերտական/ուսանողական ընկերություն» գերմանական մոդելը՝ Հայաստանում

«Աշակերտական/ուսանողական ընկերություն» գերմանական մոդելը իրական ընկերություն է, որը կրթական հաստատություններում հիմնում են աշակերտները...

րի մոտ ձեռնարկատիրական մտածելակերպի զարգացումը համարվում է ծրագրի գործողությունների առանցքային ուղղություններից մեկը: «Աշակերտական/ուսանողական ընկերություն» գերմանական մոդելի ներդրման ծրագիրը Հայաստանում մեկնարկել ենք դեռևս 2018 թվականից: Մեր նպատակն էր՝ ծրագրի միջոցով նպաստել աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը, ինչպես նաև մասնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների մոտ ձեռնարկատիրական մտածելակերպի զարգացմանը և գործարար գաղափարների իրականացմանը՝ մասնագիտական գիտելիքների միջոցով կատարելագործելու նրանց գործարար հմտությունները, դառնալու ինքնագրադներ ու աշխատաշուկային համապատասխան կարգեր»,- ծրագրի մանրամասներն է ներկայացնում Մարինե Ժամկոչյանը:



րություն» ծրագրում առավել մեծ թվով կրթական հաստատություններ ներգրավելու նպատակով հիմնադրամը երեսան է հրավիրել գերմանացի փորձագետների, որոնք ՄԿՈՒ հաստատությունների և հանրակրթական դպրոցների տնօրեններին ներկայացրել են մոդելի ներդրման, ինչպես նաև այն հիմնելու սկզբունքները՝ հաշվի առնելով հայաստանյան պայմաններն ու ուսումնական հաստատությունների հնարավորությունները:

մշակել է նաև վերոնշյալ մոդելի ներդրման ուսուցչի ձեռնարկ, որը ուղեցույց կհանդիսանա նաև մյուս ուսումնական հաստատությունների համար՝ նմանատիպ ընկերություններ հիմնելու գործընթացում:

լում, որ «Աշակերտական/ուսանողական ընկերություն» մոդելի տարածման ու ընդլայնման նպատակով փորձի փոխանակման միջոցառումներ, ուսուցողական դասընթացներ են կազմակերպվում մարզերի տարբեր դպրոցների աշակերտների ու ՄԿՈՒ հաստատությունների ուսանողների և դասախոսների համար, ստեղծվում են գործարար կապեր այդ հաստատություններում գործող ընկերությունների և գործատուների միջև:

«Աշակերտական/ուսանողական ընկերություն» մոդելի, Հայաստանում դրա ներդրման և առաջխաղացման հարցերի շուրջ գրուցել ենք «Բիզնես և կրթություն գործընկերություն» հիմնադրամի նախագահ Մարինե Ժամկոչյանի հետ:

Նրա խոսքով՝ «Աշակերտական/ուսանողական ընկերություն» մոդելի ներդրման նպատակով «Բիզնես և կրթություն գործընկերություն» հիմնադրամը կազմակերպել է ուսուցողական այց գերմանիա՝ «ՄԿՈՒ-համագործակցություն» ծրագրում ընդգրկված հաստատությունների տնօրենների մասնակցությամբ: Ուսուցողական այցի ընթացքում վերջիններս ծանոթացել են գերմանական կրթական համակարգում գործող «Աշակերտական/ուսանողական ընկերություն» («Pupil/Student company») մոդելին և ձեռք բերել գործնական գիտելիքներ ու փորձ, որոնք հետագայում կիրառել են իրենց ՄԿՈՒ հաստատություններում:

Վերոնշյալ աշխատանքների համատեքստում «Բիզնես և կրթություն գործընկերություն» հիմնադրամը մշակել է «Աշակերտական/ուսանողական ընկերությունների» գործունեության վերաբերյալ հայեցակարգ և «Աշակերտական/ուսանողական ընկերություն» մոդելն ուսումնական հաստատություններում ներդրելու մեթոդաբանություն, որոնք ներկայացրել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն: Հիմնադրամը

«Մեր հիմնադրամի աջակցությամբ և ֆինանսավորմամբ շուրջ 20 «Աշակերտական/ուսանողական ընկերություններ» են ստեղծվել երեսանում, ինչպես նաև վարչաձևի, Շիրակի, Լոռու, Տավուշի մարզերում գործող դպրոցներում ու ՄԿՈՒ հաստատություններում: Ստեղծված ընկերությունները գործունեությունը բազմազան է և տնտեսության զարգացող ճյուղերին համընթաց: Ուսանողները ձեռնարկատիրական գործունեություն են իրականացնում սննդի սպասարկման, գյուղատնտեսության, մասնագիտական տարբեր ծառայությունների, ինչպես նաև արեւային էներգիայի կայանների ստեղծման ու սպասարկման և այլ ոլորտներում»,- ասում է մեր գրուցակիցը և հավե-

Մարինե Ժամկոչյանի խոսքով՝ այս ընկերությունների գործունեությունը կանոնակարգելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք օրենսդրական և իրավական խնդիրներ, այդ թվում ուսանողների առողջության և անվտանգության պահպանման, ապահովագրության, հարկային և այլ իրավական հարցեր, որոնք պահանջում են համակարգային իրավական կարգավորում:

Հեղինակ՝ ՅՈՒՆԻՍԵՖ

Հեքիաթի տեղն ու դերը տարրական կրթության համակարգում

սկիզբը՝ էջ 6

Երբեմն էլ հեքիաթների դասավանդումը հակառակ ընթացքով է տարվում. այսինքն՝ նախ գաղափար է տրվում հեքիաթի ժանրային առանձնահատկությունների մասին, հետո այն մշակվում ըստ բովանդակության: Սակայն եթե սկզբից և եթե աշակերտներին բացատրում ենք հեքիաթի էությունը, բացահայտում իրականի և անիրականի փոխհարաբերությունը, դրանով խիստ թուլացնում ենք հեքիաթի գեղարվեստական և դաստիարակչական ներգործությունը, որը տվյալ մյուսի դասավանդման հիմնական նպատակներից մեկն է:

տիչ ընթերցման միջոցով ապահովել նրա գեղարվեստական ու դաստիարակչական ներգործությունը, սովորեցնել լավ կարգալ, բացատրել անժանոթ բառերն ու մտքերը, հեքիաթի բովանդակությունը մանրամասնորեն ու համառոտ, փոփոխելով ու ստեղծագործորեն վերարտադրել, գործող անձերն ու նրանց կատարած գործողությունները նկարագրել կամ բնութագրել, հարցերով ամփոփել հեքիաթի վերաբերյալ երեխաներին հաղորդած տեղեկությունները և այլն: Երբ հեքիաթի բնագիրը բազմակողմանիորեն մշակված ու յուրացված կլինի, միայն այդ ժամանակ կարելի կլինի անցնել հեքիաթի երեւակայական կողմի բացահայտմանը:

- բարձրաձայն ընթերցանություն մեկնաբանություններով,
- բառային աշխատանք
- բնագրի ընթերցում արտահայտիչ ընթերցանության կարողությունների ձեւավորման նպատակով,

տիարակության առավել արդյունավետ հնար է, քան այլ մեթոդներ, որոնք ուղղված են երեխաների զգայական աշխարհի զարգացմանը: Հեքիաթը երեխայի կողմից ընկալվում է ամենավաղ տարիքից: Դրանում ամփոփված են վարքի կանոնների պահպանմանը վերաբերող տեղեկատվություն, մարդկության կողմից դարերի ընթացքում մշակված բարոյական չափանիշներ: Հեքիաթները զգայական առումով խոր են վերապրվում երեխայի կողմից, իսկ դրանց շնորհիվ ու ոճական ինքնատիպությունը թուլացնում են վախվորած երեխայի լարվածությունը: Հեքիաթների կիրառմամբ կարելի է արդյունավետորեն ներազդել երեխայի արժեքային պատկերացումների ձեւավորման վրա: Ցանկացած տարիքում երեխաները հաճույքով են լսում հեքիաթներ: Հենց հեքիաթը կարող է դառնալ մանկավարժական բարձրագույնը կանխարգելիչ մեթոդ: Հեքիաթների միջոցով երեխայի մեջ դաս-

տիարակվում է սեր դեպի հայրենիքը, ծնողները, ընկերասիրություն, պայքարելու ընդունակություն հանուն իրենց նպատակների և երազանքների իրականացման, ատելություն ու արհամարհանք կեղծի, խաբեության և դավաճանության նկատմամբ:

- աշխատանք հեքիաթի երեւակայական կողմի, հիմնական մտքի, լեզվի և ոճի առանձնահատկությունների, դաստիարակչական գաղափարի բացահայտման, ենթատեքստի կրահման ուղղությամբ,
- պատմելու նախապատրաստում, պատմում,
- ամփոփում:

Երեխաներին անչափ դուր է գալիս հեքիաթը ստեղծագործելով, փոփոխելով պատմելը: Առավել եւս օգտակար է հեքիաթին շարունակություն հյուսելը, որը նպաստում է ոչ միայն խոսքի զարգացմանը, այլև երեւակայության թռիչքին:
Եզրակացություն: Այսպիսով՝ հեքիաթներին ծանոթացումը դաս-

որ հեքիաթի ուսուցումը մեծ տեղ է զբաղեցնում տարրական կրթության համակարգում, և ցանկացած հեքիաթի արտահայտած գաղափարը արդիական է մնում բոլոր ժամանակների համար՝ անկախ նրա ստեղծման ժամանակաշրջանից և վայրից: Ուստի, կրթադաստիարակչական աշխատանքի բարձրագույն համար պետք է այդ գործընթացը համեմել բազմաթիվ հեքիաթներով:

Հայարկի ԳՐԻԳՈՐՅԱՆ
Կոտայքի մարզի
Լեռնանիստի
Ս. Նազարյանի անվան
միջնակարգ դպրոցի դասվար

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Մասիս քաղաքի Կահրամ Բաբայանի անվան հ. 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկոսություն (21 դասաժամ), մաթեմատիկայի (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ փետրվարի 21-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա փետրվարի 24-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Կահրամ Բաբայանի անվան հ. 2 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Մասիս, Դպրոցականների 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0236) 4-26-02, (093) 34-33-77 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Նոր ուղու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (5 դասաժամ), Հայոց եկեղեցու պատմության (6 դասաժամ), երաժշտության (2 դասաժամ), կերպարվեստի (2 դասաժամ), տեխնոլոգիայի (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են փետրվարի 9-ից մինչեւ փետրվարի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա փետրվարի 24-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արարատի մարզի Նոր ուղու միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ք. Գինվես:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 85-00-32 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Հատիսի Կ. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկոսության (12 դասաժամ), ֆիզիկայի (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են փետրվարի 9-ից մինչեւ փետրվարի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա փետրվարի 24-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Կոտայքի մարզի Հատիսի Կ. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ք. Գատիս, 1/1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 35-91-89 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երեւանի Ն. Աղբալյանի անվան հ. 19 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (15 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ փետրվարի 21-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա փետրվարի 24-ին՝ ժամը 15:00-ին, Երեւանի Ն. Աղբալյանի անվան հ. 19 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Տերյան 54:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 58-73-50 հեռախոսահամարով:

«Հայաստանում ձեր առջեւ կբացվեն աներեւակայելի հնարավորություններ»

Ձեսիկա Սերվան Իտալիայի Բոլոնիայի համալսարանի 2021-2022 ուստարվա «Overseas» ծրագրի շրջանակում մագիստրոսական կրթություն է ստանում Երեւանի պետական համալսարանում: Այս ծրագիրն իրականում շատ մեծ է Երազմուս ծրագրին, ուղղակի ֆինանսավորումն ամբողջությամբ իրականացնում է Բոլոնիայի համալսարանը:

-Խնդրում են պատմեք՝ ինչու որոշեցիք ընտրել Հայաստանը՝ ուսանողական ծրագրին մասնակցելու նպատակով:

-Այս գեղեցիկ, բայց միաժամանակ անհայտ երկիրն ընտրելու համար կային եւ կրթական, եւ սոցիալ-հոգեբանական պատճառներ: Նախեւառաջ, իմ մագիստրոսական ուսումնասիրությունն ուղղված է միջազգային համագործակցության եւ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտին, ուստի ես ուզում էի որոշակի գիտելիքներ ունենալ մարդու իրավունքների խախտումների մասին, որոնք, ցավոք, հայ ժողովրդի նկատմամբ իրականացվել են անցյալ դարից ի վեր: Այնուհետեւ, ես հայտնաբերեցի բազմաթիվ դասընթացներ Երեւանի պետական համալսարանում, որոնք համահունչ էին Մերձավոր Արեւելքի ուսումնասիրության մեջ խորանալու եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության մասին ավելի իմանալու իմ նպատակներին հետ: Երկրորդը՝ Մերձավոր Արեւելքին այսօր մոտ լինելու ցանկությունն ինձ իսկապես համոզեց ընտրել Հայաստանը: Եվ ամենակերպով, ոչ պակաս կարեւոր պատճառ էր նաեւ այն, որ ինձ գերեց վաղեմից, բնությունից, համեղ ուտելիքներից եւ լավ զինուց ստեղծված այս զարմանահրաշ երկիրը:

-Նախապես գիտե՞լիք ինչ երկիր եք ուղևորվում եւ ինչպե՞ս եք պատրաստվել այդ այցին:

-Շատ քիչ, բայց տեղեկացված էի Հայաստանի պատմության մասին, քանի որ անցյալ տարի մասնակցել էի Հայաստանում մարդու իրավունքների եւ ժամանակակից հակամարտության մասին իմ համալսարանում կազմակերպված կոնֆերանսին, բայց, իհարկե, դա բավարար չէր այստեղ ապրելու համար: Ուստի, նախքան ժամանելը համացանցում կարդում էի նյութեր, հետաքրքրվում այստեղի բարքերի մասին, ինչպես նաեւ նախապես կազմել էի ամենաինտերաքթիվ եւ համեղ ուտեստներ համտեսելու վայրերից բաղկացած, այսպես կոչված, «պարտադիր կատարման» ցանկը:

-Նկարագրեք ձեր առաջին տպավորությունները:

-Իմ առաջին զգացողությունը եղել է Հայաստանի տաքությունը: Խոսքը գնում է ոչ միայն օդոստոսի վերջին ինձ ընդունած երկրի տաք ջերմաստիճանի, այլեւ մարդկանց բարության ու ջերմության մասին: Այստեղ մարդիկ մշտապես առաջարկում են համեղ ուտեստներ, գեղեցիկ պատմական վայրեր այցելելու եւ այլն: Ես հիացած եւ զարմացած եմ այն փաստից, որ այս ամենը տեղի է ունենում եւ մարդաբաղադրում, եւ հատկապես փոքրիկ գյուղերում, որտեղ մարդիկ միշտ պատրաստ են օգնել:

-Ուսուցումը Հայաստանի բուհերում արդյո՞ք շատ է տարբերվում Ձեր հարազատ բուհում ուսուցումից:

-Շատ անմոռանալի հիշողություններ կան, անկասկած, Էրազմուս ուսանողական ցանցի երեւ-



-Կրթական համակարգն այստեղ բավականին տարբեր է՝ հատկապես ուսանող-դասախոս հարաբերությունների տեսանկյունից: Իտալիայում ավելի ֆորմալ բնույթ է այն կրում, իսկ Հայաստանում՝ ավելի անձնական եւ ոչ ֆորմալ: Ավելին, միջազգային ուսանողների քիչ քանակությունը ստեղծում է շատ տեղական միջավայր: Դասերի եւ բնօրինակների առումով ես քիչ թե շատ նման մոտեցումներ են գտել իմ երկրի բուհական համակարգի հետ: Բուհը կազմակերպում է բազմաթիվ բնարկուններ եւ սեմինարներ, որոնք թույլ են տալիս բաց բանավեճեր անցկացնել դասախոսների հետ: Ավելին, առաջադրանքները հաճախ բարդորեն, շարադրանքները եւ բանավոր բնօրինակները նույնպես առկա են երկու համալսարաններում:

-Ի՞նչ դժվարությունների եք հանդիպել այստեղ:

-Առաջին դժվարությունները հիմնականում կապված էին ինձ ընդունող համալսարանի կազմակերպչական աշխատանքների հետ, որոնք բավականին տարբերվում են Բոլոնիայից: Օրինակ՝ այստեղ ես անձամբ մշտապես կայի մեջ եմ գտնվում դասախոսներից յուրաքանչյուրի հետ, եւ դասընթացները կազմակերպվում են ամիսապես: Ես սովոր չէի մեծ մոտեցմանը: Այստեղ նաեւ առկա են լեզվական խոչընդոտներ, քանի որ հայ ուսանողները հազվադեպ են ընտրում անգլերենի դասընթացներ: Ընդհանուր առմամբ, ԵՊՀ-ն շատ լավ համալսարան է, ես շատ արագ ընտելացա եւ իմնա արդեն դասախոսներին ուղղում եմ ինձ հուզող բոլոր հարցերը: Մի քանի այլ դժվարությունները հանդիպել եմ իմ պարած վայրում, որի հեռավորությունը քաղաքի կենտրոնից անհարմարություններ է պատճառում, հատկապես զբաղված օրերին:

-Խոսե՞նք այն ամենավաղ իրադարձությունների մասին, որոնք Ձեզ պատահեցին առաջին շաբաթներին:

-Շատ անմոռանալի հիշողություններ կան, անկասկած, Էրազմուս ուսանողական ցանցի երեւ-

անյան թեկնածու թմի կազմակերպած ճամփորդությունները, ինչպես նաեւ այլ միջազգային ուսանողների միջոցառումներից: Այս երկիրը բացահայտելն ինչպես միայնակ, այնպես էլ ընկերների հետ իմ լավագույն հիշողությունն է: Հանդիպումներ երեւանյան տաք գիշերներում, Կասկադի տեսարանը վայելելը, գիշերվա յուրահատուկ լույսերի փայլը եւ ապագայում միշտ հիշելու եմ:

-Որտե՞ղ եք անցկացնում Ձեր ազատ ժամանակը, օգտվե՞լ եք արդյոք մշակութային կյանքից:

-Ես այստեղ ընկերացել եմ Իսպանիայից, Շվեյցարիայից, Չեխիայից եւ Լատվիայից ժամանած մի քանի միջազգային ուսանողների հետ: Ես նաեւ շփում եմ հաստատել իմ հանրակացարաններից շատ այլ ուսանողների հետ, որոնք նոր են ժամանել աշխարհի տարբեր մասերից, օրինակ՝ Պորտուգալիայից, Բրազիլիայից, Թաիլանդից, Իրանից եւ Լիբանանից: Դասապրոցեսներից դուրս ազատ ժամանակս անցկացնում եմ նրանց հետ՝ որոշ փաբերում գրուցելով, ինչպես նաեւ քայլում եմ քաղաքի կենտրոնում, բացահայտում եմ նոր վայրեր, հանգստանում եմ շատրվաններով լի գեղեցիկ զբոսայգիներում: Ընդհանուր առմամբ, ինձ դուր է գալիս մարդաբաղադրային կյանքը՝ կենսունակ, ակտիվ, բայց եւ միաժամանակ հանգիստ ու հանգստացնող:

-Ի՞նչ խորհուրդ կտաք նրանց, ովքեր պատրաստվում են գալ Հայաստան՝ սովորելու:

-Բոլոր նրանց, ովքեր ցանկանում են գալ Հայաստանում սովորելու, ես խորհուրդ կտամ չչենտրոնանալ այն փաստի վրա, որ այն միջազգային կրթական տեսանկյունից հայտնի վայր չէ, այլ դրա փոխարեն փորձել խորասուզվել նրա հին ու ջերմ մշակույթի մեջ: Երբեմն անսպասելի վայրերը կստեղծեն լավագույն հիշողություններն ու փորձառությունները: Փորձեք մտածել առանց սահմանների, եւ ձեր առջեւ կբացվեն աներեւակայելի հնարավորություններ:

Հ. ՀՊԿՅԱՆԻՍՅԱՆ

Սիրո մե՛ր հովանավորը. Սուրբ Սարգիս զորավար

Սուրբ Սարգիս զորավարը իր որդու՝ Սարտիրոսի եւ 14 քաջ մարտիկների հետ նահատակվել է՝ հանուն քրիստոնեական հավատքի:

Արիության համար Սուրբ Սարգիսը Մեծն Կոստանդինոս կայսեր (285-337) կողմից կարգվում է իշխան եւ սպարապետ՝ Հայաստանին սահմանակից Կապադովկիայում: Նա ոչ միայն գերազանց սպարապետ էր, այլեւ հիանալի քարոզիչ: Օգտվելով կայսեր հոծարությունից՝ իր իշխանության տակ գտնվող քաղաքներում քանդում է մեծքրիստոնեական տաճարները, տարածում քրիստոնեությունը: Երբ Հուլիանոս Ուրացոյի թագավորության օրոք (360-363) սկսվում են Քրիստոսի եկեղեցու հալածանքները, Սուրբ Սարգիսը, աստվածային հայտնությանը հրաման անելով հեռանալ կայսրության սահմաններից, իր որդի Սարտիրոսի հետ գալիս, ապաստանում է քրիստոնյա Հայաստանում, ուր թագավորում էր Տիրան արքան: Մեծն Տրդատի թողնելու արդյունքում Տեղեկանալով, որ Հուլիանոսը մեծ զորքով շարժվում է Պարսկաստանի վրա, Հայոց արքան, ձգտելով իր երկիրը գերծ պահել հարձակման վտանգից, հորդորում է Սարգիսին ծառայության անցնել Շապուհի մոտ:

Շապուհը սիրով ընդունում է Սուրբ Սարգիսին եւ նշանակում նրան զորագնդերի հրամանատար: Ձորակամների շատերը, տեսնելով փայլուն զորավարի բարեպաշտությունն ու վարքով վկայած նվիրումն առ Աստված, իր աղոթքներով Տիրոջ գործած հրաշքները, հրաժարվում էին հեթանոսությունից եւ դառնում քրիստոնյա: Սակայն Շապուհը պահանջում է նրանից պաշտել կրակը եւ զոհ մատուցել: Ձորավարն անմիջապես մերժում է այն՝ ասելով. «Երկրպագելի է մեկ Աստված՝ Ամենասուրբ Երրորդությունը, Ով ստեղծել է երկինքն ու երկիրը: Իսկ կրակը կամ կուռքերը ի բնե աստվածներ չեն, հողեղեն մարդը դրանք կարող է փչացնել»: Այդ խոսքերից հետո Սուրբ Սարգիսը կործանում է բազմից: Չայրացած արքան իր հարձակվում է Սուրբ Սարգիսի եւ նրա որդու վրա: Առաջինը նահատակության պատկան ընդունում է նրա որդին՝ Սարտիրոսը:

Սուրբ Սարգիսը բանտարկվում է եւ անբեր մնալով իր հավատքի մեջ՝ գլխատվում: Նահատակվելուց հետո Սուրբ Սարգիսի մարմնի վրա լույս է ծագում: Քրիստոնեական հավատքի համար նահատակվում են նաեւ Սուրբ Սարգիսին հավատարիմ տասնչորս զինվորները: Հավատացյալները նահատակների մարմիններն ամփոփում Համիան քաղաքում:

Սուրբ Մեսրոպ Մաշտոց վարդապետը Սուրբ Սարգիսի մատուցած բերքը բերում է Կարբի (Աշտարակի շրջան)՝ տեղում կառուցելով երանելու անունը կրող եկեղեցի:

Առաջավորաց պահք

Սուրբ Սարգիսի տոնին նախորդում է Սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից հաստատված Առաջավորաց պահքը: Պահքը տեւում է հինգ օր (այս տարի՝ փետրվարի 7-11-ը ներառյալ):

Սուրբ Սարգիս. երիտասարդների եւ սիրո բարեխոս

Ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանի ուսումնասիրությունների համաձայն՝ Սուրբ Սարգիսը հովանավորել է Սասունցի Դավթին եւ Սասնա բոլոր հերոսներին ոչ միայն ռազմի դաշտում, այլ նաեւ սիրո մեջ:

Սուրբ Սարգիս Ձորավարի տունը Հայաստանում ընդունված է մշել ոչ միայն եկեղեցական ծեսով, աղոթքով, այլեւ ժողովրդական սովորույթներով, որը մեզանում նվիրական ավանդություն է: Սուրբ Սարգիս զորավարը երի-

տասարդների արագահաս բարեխոսն է: Նրա միջնորդությամբ հրաշքներ են տեղի ունենում: Այդ օրը երիտասարդներն աղոթում են Սրբին, որ իրենց աղոթքները հասցնի առ Աստված: Սուրբ Սարգիսը սիրո երազանքն իրականացնող Սուրբ է:

Սուրբ Սարգիսի մասին բազմաթիվ ավանդապատումներ կան: Ահավասիկ դրանցից մեկը:

Աղքատ Աշուղ Ղարիբը սիրում է մի մեծահարուստի աղջկա՝ Շահ-Սանամին: Վերջինս եւս սիրում է նրան, բայց Աշուղն աղքատ էր, եւ աղջկա հայրը արգելում է նրանց ամուսնանալ, քանի որ մտադրված էր նրան կնության տալ մի մեծահարուստի: Աշուղ Ղարիբը որոշում է մեծ կարողություն կուտակելու համար գնալ օտարություն՝ աշխատելու: Սակայն, մինչեւ այդ, Աշուղ Ղարիբն իր սիրած էակից խոստում է առնում՝ յոթ տարի սպասել իրեն: Պայման է դնում, որ եթե ուշանա անգամ մեկ օր, աղջիկը թող ամուսնանա հոր ցանկությամբ:

Այդ յոթ տարիները շատ դժվար են անցնում Աշուղ Ղարիբի համար: Նա գրկված էր իր գեղեցիկուհուն տեսնելու հնարավորությունից, որեւէ լուր չունեւ նրա մասին, սակայն չէր հուսահատվում, այլ կարողով սպասում այն օրվան, երբ նրանք կհանդիպեն, ընտանիք կկազմեն եւ ամբողջ կյանքը կապրեն միասին:

Յոթ տարի շարունակ գիշեր ու գոր աշխատելով՝ Աշուղ Ղարիբը կարողություն ստեղծեց եւ տունդարձի ճամփա ընկավ: Ճանապարհը լի էր փորձանքերով եւ

խոչընդոտներով: Թվում էր, թե Աշուղ Ղարիբն իր հույսը պետք է կորցնի. չի հասնի իր սիրած էակին: Նա ազնիվ սրտով եւ արդար մտքով աղոթում է Սուրբ Սարգիսին՝ հայցելով արագահաս Սրբի օգնությունը:

Սուրբ Սարգիսը, լսելով սիրահարված Աշուղի աղոթքը, իր արագահաս ծերմակ նժույգով բարձրացրած մրրիկի մեջ իսկույն հայտնվում է, Աշուղ Ղարիբին նստեցնում ձիու գավակին եւ մեկ ակնթարթում հասցնում Շահ-Սանամի մոտ: Աղջկա հայրը, տեսնելով Աշուղ Ղարիբի կամքը, կատարված հրաշքը, նրանց անկեղծ սերն եւ նվիրվածությունը, օրհնում է երկուսի միությունը:

Ժողովրդական սովորություններից է նաեւ, երբ Սուրբ Սարգիսի տոնին նախորդող գիշերը երիտասարդներն աղի բլիթ են ուտում, որի հետ կապում են իրենց փեսացուի կամ հարսնացուի երազահայտնությունը: Այդ օրը հիշատակելի սովորություններից է փոխհնդով մատուցարանը դնել տան տանիքին կամ պատշգամբին եւ սպասել Սուրբ Սարգիս զորավարի ձիու պայտի հետքին: Ըստ ավանդույթի՝ Սուրբ Սարգիսը պետք է հրեշտակների ուղեկցությամբ անցնի եւ ուն մատուցարանի մեջ դրված ալյուրի կամ փոխիմդի մեջ թողնի իր սպիտակ (մաքրություն, անաղարտություն է խորհրդանշում) ձիու պայտի հետքը, այդ տարի կիրականանա երիտասարդի երազանքը:

Տոնի առթիվ սիրահարված երիտասարդները միմյանց բացիկներ եւ քաղցրավենիք են նվիրում:

Գարեգին Բ Ամենայն Հայոց հայրապետի տնօրինությամբ՝ Սուրբ Սարգիս զորավարի տոնը հռչակվել է երիտասարդների օրհնության օր: Այս տարի այն կնշվի փետրվարի 12-ին: Այդ օրը Սուրբ Սարգիս Ձորավարի անունը կրող եկեղեցիներում կմատուցվի Սուրբ Պատարագ, որից հետո կկատարվի երիտասարդների օրհնության կարգ:

Սուրբ Սարգիսի տոնի կապակցությամբ, այս տարի եւս, ինչպես ավանդաբար, միջոցառումների ընդարձակ ծրագիր է նախապատրաստել Արարատյան Հայրապետական թեմը:



Աղոթք Սուրբ Սարգիսի բարեխոսության

Գերագույն պատվի՝ արժանացար՝
Բարեխոսելու
Բանն Աստծուն,
Աղոթքի՝ ընդունող,
Խնդրանքների՝ կատարող,
Արագահաս
Սուրբ Սարգիս,
Բարեխոս մեր անձերի
համար ի Քրիստոս:
Նրան՝ Բարձրյալին,
վայել է փառք, իշխանություն
եւ պատիվ,
Այժմ եւ միշտ եւ
հավիտյանս հավիտենից,
Ամեն:

Ըստ Փափատու Բուզանդի

Բյուզանդական Վաղես կայսրն արիստակաճ աղանդի հետեւորդ էր եւ հալածում էր քրիստոնյաներին: Դրա համար պատժվում է եւ 378 թվականին սպանվում Աստուծոց եղած հրաշքներով: Նրան սպանում են քրիստոնեության համար պայքարած սուրբ նահատակները, որոնց միանում է նաեւ Սուրբ Սարգիսը:

Սասունցի Դավթի հանդիպումը Սուրբ Սարգիսի հետ
(Քաղվածք «Սասնա ծեր» էպոսից)

Դավթի եղ տեղեն ետ դարձավ ու գնաց, կայնավ խանութ խանութի փանջարի առեջ, ըսեց.
- Խանութ խանութ, ես կերթամ կռիվ:
Քչեց, գնաց, շատ, քիչ՝ Աստված գինա, մեկ էլ տեսավ յառջեւանց թոզ ու դուման կիգա:
Էկավ, տեսավ օր սրբի Սարգիսն է:
Դավթի գնաց, օր սրբի Սարգիսին համբուրեք: Սրբի Սարգիս ըսեց.
- Հանե քո Սրբի Նշան, ես համբուրեմ, նոր դու ընծի համբուրե:
Հանեց Սրբի Նշան, համբուրեց սրբի Սարգիս, էն լէ սրբի Սարգիսին համբուրեց:
- Դե գնա,- ըսեց,- Աստված խըտ քրդի էղնի: Ու քչեց ձին:
Քեռի Թորոսիկ մնաց աղոթք էնելու:

«Լույս՝ մանկաց»-ն Արցախում

Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի նախաձեռնությամբ եւ դանիա-հայկական բարեգործական առաքելության աջակցությամբ՝ անցյալ տարվա դեկտեմբերի սկզբին է տրվել «Լույս՝ մանկաց» կիրակնօրյա դպրոցների մեկնարկը:

Յենց առաջին փուլում դպրոցները պետք է գործեին Ստեփանակերտի Սուրբ Հովանի Մայր տաճարին կից եւ Մարտակերտ շրջկենտրոնի Սուրբ Կարապետ եկեղեցու երիցատանը: Համավարակի պարտադրած կարանտինը, որ երկարաձգվել էր մինչեւ դեկտեմբերի 24-ը, կիրակնօրյա դպրոցների պարապմունքները տեղափոխեց այս տարվա հունվար:

Հոգեւոր հայրերի խոսքով՝ նման դպրոցների գործունեությունը լայն ընդգրկում ունի: Հիմնական խնդիրն ազգային-եկեղեցական ավանդույթների հենքով հայ քրիստոնեական արժեքահամակարգը մատաղ սերունդին փոխանցելն է:

Ծրագրում ընդգրկվել են 8-12 տարեկան 60-ից ավելի երեխաներ: Սկզբնական շրջանում ուսուցանվում են նկարչություն, հոգեւոր դաստիարակության հիմունքներ:

Աշխատանքի արդյունավետությանն էին ուղղված փետրվարի 5-6-ը կազմակերպված կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների վերապատրաստման դասընթացները:

Մասնակիցներին դիմելով օրհնությամբ ու քաջալերանքով թեմի առաջնորդ



Տեր Կրթանես եպիսկոպոս Աբրահամյանը կարեւորել է նման դպրոցների դերը հատկապես մեր խառնակ ժամանակներում եւ շնորհակալությամբ՝ շեշտել բոլոր այն մարդկանց ջանքերը, ովքեր աջակցել են ծրագրի իրականացմանը: Թեմակալ առաջնորդի տեղեկացմամբ՝ այս տարի կիրակնօրյա դպրոցներ կբացվեն Արցախի 10 կրթօջախներում:

ԱՀ ԿԳՄՍ նախարար **Լուսինե Ղարախանյանը** ողջույնի իր խոսքում մշել է, որ այսօր բոլորս ունենք հոգեւոր զարթոնքի կարիք: «Կրթական համակարգի նպատակները չեն կարող հեռանալ Հայ Առաքելական եկեղեցուց: Եթե մենք հասել ենք 21-րդ դար, ապա դա միայն ազգային արժեքահամակարգի միջոցով, որի առանցքը մեր եկեղեցին է», - մշել է նախարարը:

Երկօրյա պարապմունքներն ընթացել են կազմակերպիչների թեմատիկ ելույթներով եւ կիրակնօրյայի ուսուցիչների ինքնուրույն աշխատանքների ներկայացմամբ:

«ՀԱԵ առջեւ ծառայած խնդիրները», «Հոգեւոր դաստիարակության դերն ու կարեւորությունը», «Աստված սեր է»: թեմաներին են անդրադարձել Արցախի թեմի ԶԴԶԿ-ի տնօրեն, սարկավագ **Գոռ Գյուրջյանը**, դանիա-հայկական բարեգործական առաքելության տնօրեն **Նանե Խաչատրյանը**, դասընթացավար **Սուսաննա Տեր-Հովհաննիսյանը**:

Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Փոճիր մտապահել

Բանաստեղծներն են հուշում

սկզբը՝ նախորդ համարում

132) Մնջախաղ

Լապտերները

Գիշեր է: Անձրև է մաղում: Կաթիլները երևում են, երբ ընկնում են լապտերների լույսի տակ, եւ թվում է, թե փողոցի երկայնքով շարված լապտերները արտասվում են: Ինչի՞ մասին:

Անձրևոտ գիշերներին լապտերներն արտասվում են միայն այն մասին, ինչ չի հաջողվել մարդկանց, որովհետև իրենք ընդամենը լապտերներ են եւ չունեն սեփական թախիծ:

Եւ ամբողջ գիշերը նրանք արտասվում են մենակությունից, նրանից, որ անձրևոտ է, եւ որ վաղը ոչ թռիչքային եղանակ կլինի, ու ինչ-որ մեկն անպայման կհաստ կթողնի հանդիպումը, չի հասցնի համբուրել...

Եւ քանի որ վաղը ոչ թռիչքային եղանակ կլինի, այս գիշեր կարտասվեն փողոցի երկայնքով կանգնած լապտերները:


Գրպանահատը

Ես գրպանահատ եմ: Ես գրպանահատների արքան եմ:

Ես հարուստ եմ եւ երջանիկ: Գրեթե երջանիկ:

Միայն թե ափսոս, որ ոչ ոք գրպանում իր սիրտը չի պահում:

Լեոնիդ Ենգիբարյան



Մնջախաղը թատերական արվեստի տեսակ է, որում գեղարվեստական կերպարի ստեղծման հիմնական միջոցը մարդկային մարմնի պլաստիկան է, միմիկան եւ ժեստերի լեզուն: Այն գեղարվեստական ստեղծագործության հնագույն տեսակներից մեկն է. մնջախաղի այս կամ այն տարրերը առկա են մշակույթի բոլոր նախնական դրսևորումներում եւ հանդիսանում են տարբեր կրոնական ու ազգագրական ծեսերի կարևոր մաս:

Մնջախաղը լայն տարածում ուներ հին Հայաստանում: Դրա վարպետին անվանում էին «ամեն ինչ ներկայացնող». դերասանը պետք է ոչ միայն վերափոխվեր աստվածների, հերոսների եւ այլ կերպարների, այլև պարտավոր էր արտահայտել ցանկացած մարդկային կրթեր ու բարքեր: Մնջախաղերը, սովորաբար, կատարվում էին արտիստների երկու խմբերով. մեկը ժեստերի օգնությամբ բացահայտում էր ոտանավորների բովանդակությունը, մյուսը ներկայացումն ուղեկցում էր երգով ու նվագով:

Որպես թատերական արվեստի առանձին տեսակ՝ մնջախաղը Հռոմում հայտնվեց կայսր Օգոստոսի օրոք: Հռոմեացի պարող Փիլադես Կիլիկեցին հանդես էր գալիս մենախաղերով, որոնց սյուժետային հիմքը առասպելներն էին: Նրա ժամանակակից Բատիլոս Ալեքսանդրիացին գերադասում էր զվարճալի պատումները: Ամտիկ ժամանակների մնջախաղի զլխավոր տարբերիչ գիծը ժամանակակիցից այն էր, որ այնտեղ դեմքի մկանմունքի շարժի դեր չկար. դերասանները դիմակներով էին հանդես գալիս: Դերի բոլոր նրբությունները մարմնի շարժումներով էին հաղորդվում, կային պայմանական նշաններ, որ բոլորը գիտեին: Բայց, չնայած գեղարվեստական միջոցների այս սահմանափակությանը, հռոմեացի արտիստները հասնում էին մեծ արտահայտչականության: Օգտագործվող դիմակների բերանները փակ էին (դրանով տարբերվում էին ողբերգական դիմակներից), բայց, միաժամանակ, ունեին մեծ գրավչություն:

Մնջախաղը շատ սիրված էր կայսերական պալատում: Հուստինիանոսի ժամանակներից թատերական ներկայացումներն արգելվեցին՝ որպես եկեղեցական բարոյականությանը հակասող: Բայց մնջախաղի արվեստը չոչնչացավ: Միջին դարերում այն պահպանվեց գուսանների եւ ծաղրածուների շնորհիվ:

Նոր ժամանակներում մնջախաղը թատերական, էստրադային, կրկեսային ժանր է, որի արտահայտչամիջոցներից օգտվում են նաեւ բալետը եւ կինոն: Սկզբունքորեն մնջախաղային է Չարլի Չապլինի արվեստը կինոյում:

Փոքր չէ նաեւ մնջախաղի դերը բալետում, որի միջոցով դերասանը արտահայտում է հերոսի զգացմունքները խոսակցությունների ընթացքում, տեղի ունեցողի բուն իմաստը: Բալետային ներկայացումների բովանդակությունը բացահայտվում է դրամատիկապես արտահայտիչ, ճկուն կերպարների միջոցով, բայց այստեղ երաժշտությունը առաջնային է ու լակն. այն դառնում է պարողի շարժումները եւ գործողությունները որոշող ծրագիր:

Ժամանակակից եվրոպական մնջախաղի վառ ներկայացուցիչ է Վահրամ Ջարյանը, ով ներկայումս Ֆրանսիայի քաղաքացի է: Նրա հայտնի գործերից են «Նռան գույնը կամ 7 կոլաժ»՝ նվիրված Սերգեյ Փարաջանովին եւ Չարլի Չապլինի կերպավորումը՝ ֆիլմից հատուկ մշակված ներկայացման մեջ:

... Նկարում՝ մնջախաղի ու կրկեսի մեծ վարպետ Լեոնիդ Ենգիբարյանի արձանը ծաղկածորում:

133) Արեւային ժամացույց

«Ես արթնացնող մի ժամացույց եմ՝ Ձեր ձեռքով լարված»:

Պ. Սեւակ

Հայաստանի բազմաթիվ վանքերի պատերի վրա կան արեւային ժամացույցներ, Մատենադարանի ձեռագրերում էլ կան այդպիսի ժամացույցների բազում նկարագրություններ: Այդ ժամացույցները կարելի է բաժանել երկու խմբի:

Այնպիսիք, որոնց օգնությամբ չափվում է ժամանակը, հաշվի առնելով առարկաների ստվերի ուղղության փոփոխությունը ցերեկվա ընթացքում. սրանք կոչվում են գիտցողներ:

Այլուսակներ, որոնց օգնությամբ չափվում է ժամանակը, հաշվի առնելով առարկաների ստվերի երկարության փոփոխությունը ցերեկվա ու տարվա ընթացքում. այդպիսի աղյուսակ-ժամացույցները անվանում են ստվերաչափեր:

Հայաստանում հիմնականում օգտագործվում են ուղղաձիգ գիտցողներ, որոնց թվատախտակի հարթությունն ուղղահայաց է հորիզոնի հարթությանը եւ անցնում է



արեւելքի ու արեւմուտքի կետերով: Դրանք փորագրվել են շենքերի հարավային պատի վրա, թվերի փոխարեն օգտագործելով հայկական այբուբենի տառերը:

Թվատախտակի համարակալումը սկսվում է առավոտյան պահից, հետզհետե մեծանալով՝ կեսօրից դառնում է ժամը 6-ը եւ վերջանում 11 ժամով: Պատճառն այն է, որ հայերը, սկսած վաղ ժամանակներից, օրվա սկիզբ համարել են ոչ թե արեւամուտը, կեսգիշերը կամ կեսօրը, ինչպես շատ ժողովուրդների մոտ է, այլ ցերեկվա սկիզբը: Ժամագծերը նշվել են թվատախտակի թեւերին եւ թե ստորին երեսներին: Գարնանը (այսինքն՝ գարնանային գիշերահավասարից մինչեւ ամառային արեւադարձ) եւ ամռանը (այսինքն՝ ամառային արեւադարձից մինչեւ աշնանային գիշերահավասար), երբ Արեւակը գտնվում է հյուսիսային կիսագնդում, օգտվում են վերին, իսկ աշնանը (այսինքն՝ աշնանային գիշերահավասարից մինչեւ ձմեռային արեւադարձ) եւ ձմռանը (ձմեռային արեւադարձ-գարնանային գիշերահավասար) ստորին եզրից: Ժամագծերը տարվում են իրարից հավասար հեռավորությունների (150) վրա, եւ կեսօրվա ժամագիծը ուղղվում է դեպի հյուսիս:

Եկեղեցու պատերին Արեւի ժամացույցներ լինելու հանգամանքով է մեր ժողովրդի մոտ ընդունված՝ եկեղեցին ժամ կոչելու ավանդությունը:

Ստվերաչափերում եւս թվերի փոխարեն գրված են հայոց այբուբենի տառերը. դրանցից առաջին ինը նշանակում են միավորներ, հաջորդ ինը՝ տասնավորներ եւ այլն:

Ստվերաչափով ժամանակը ճշտելու համար պետք է ձախ ձեռքը ափով վերեւ բերել հորիզոնական դիրքի, իսկ ցուցամատն ուղղել արեւելք-արեւմուտք կողմ: Հետո հարկավոր է ծեղիկ վերցնել ու մեծ մատով պահել այն ուղղաձիգ դիրքում ափի միջին գծի առջեւ: Ծեղիկի ստվերը ցույց է տալու ցերեկային ժամը հետեւյալ կերպ. եթե ստվերը ընկնում է մինչեւ ծայրը, ապա հիմա առավոտվա 6-ն է, եթե ստվերը միջին մատի ծայրին է՝ ապա ժամը 7-ն է, եթե «վաթըն հասել է մատնեմատին ժամը 8-ն է, ճկույթին 9-ն է, ճկույթի միջին մասին 10-ը, ճկույթի հիմքին 11-ը: Կեսօրին ստվերը ընկնելու է ափի միջին գծի ուղղությամբ: Օրվա երկրորդ կեսին պետք է օգտագործել այդ ձեռքը եւ հաշվառել ժամանակը՝ հակառակ ուղղությամբ:

Հայ գիտնական Պարիս Հերուհին ստեղծել է մի գործիք, որը միաժամանակ էլ գիտցող է, եւ ստվերաչափ: Այն էլ ժամացույց է, եւ օրացույց: Ունի երեք հիմնական սանդղակ՝ Գրիգորյան օրացույց, Հին հայկական տոմար, Հնագույն հայկական տոմար: Հին հայկական տոմարը Բուն հայոց օրացույցն է, որը մտցվել է Հայկ Նահապետի հրամանով՝ ի հիշատակ Բելի դեմ տարած հաղթանակի: Սկիզբ է առել մ.թ.ա. 2492թ.-ից: Հնագույն հայկական տոմարը, ըստ Հերուհու, սկսվել է 21 հազար տարի առաջ եւ եղել է արեգակնային օրացույց:

... Նկարում՝ Արեւի ժամացույցը Գյումրու Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու պատին: Ամենափրկիչը կառուցվել է Անիի Մայր տաճարի նմանությամբ, 1860-ականներին:

134) Էներգիա

Բառը հունարեն է, որ ազդեցություն, գործունեություն է նշանակում: Այն գիտության մեջ ընկալվում է՝ որպես ընդհանուր քանակական չափ, որ մի անբողջության մեջ է կապում բնության բոլոր երեւույթները, մատերիայի շարժման տարբեր ձեւերը: Էներգիան վիճակի սկալյար ֆունկցիա է, որն ունի աշխատանքի չափողականություն եւ պահպանվում է փակ համակարգերում:

Էներգիան չի ծագում ոչնչից եւ չի անհետանում, այն միայն մի ձեւից անցնում է մյուսին: Էներգիան նաեւ կարելի է բնութագրել այսպես. դա աշխատանք կատարելու ունակություն է. որքան մեծ աշխատանք կարող է կատարել մարմինը, այնքան մեծ է ներգիայով է օժտված այն:

Մատերիայի շարժման տարբեր ձեւերից էլնելով դիտարկում են էներգիայի տարբեր ձեւեր՝ մեխանիկական, ներքին, էլեկտրամագնիսական, քիմիական, միջուկային եւ այլն: Բայց դա պայմանական բաժանում է:

Հարաբերականության տեսությունը ցույց է տվել, որ մարմնի էներգիան անմիջականորեն կապված է նրա զանգվածի հետ եւ հավասար է զանգվածի ու լույսի արագության քառակուսու արտադրյալին: Ցանկացած մարմին էներգիա ունի, որը կարող է անցնել մի ուրիշ ձեւի՝ մասնիկների փոխակերպումների ժամանակ (տրոհումներ, միջուկային ռեակցիաներ եւ այլն):



Համաձայն դասական ֆիզիկայի ցանկացած համակարգի էներգիան փոխվում է անընդհատ եւ կարող է ընդունել տարբեր ցանկացած արժեք: Քվանտային տեսությունը պնդում է, որ միկրոմասնիկների էներգիան, որոնց շարժումը տարածության սահմանափակ ծավալում է (օրինակ՝ ատոմի մեջ գտնվող էլեկտրոնները) կարող է ընդունել միայն որոշ ընդհատ արժեքներ: Այսպես, ատոմներն արձակում են էլեկտրամագնիսական էներգիա դիսկրետ չափաբաժիններով՝ լուսային քվանտներով կամ ֆոտոններով:

Էներգիայի մի քանի ձեւերի մասին համառոտ:

Կինետիկ էներգիան այն էներգիան է, որով օժտված է մարմինը շարժման շնորհիվ: Կամ՝ դա այն աշխատանքն է, որը կարող է կատարել շարժվող մարմինը մինչեւ կանգ առնելը:

Պոտենցիալ էներգիան մարմինների փոխազդեցությամբ (դիրքով) պայմանավորված էներգիան է:

Գրավիտացիոն էներգիայով օժտված է գրոյական մակարդակից որոշ բարձրության վրա գտնվող եւ ծանրության ուժի ազդեցությանը ենթարկվող մարմինը:


Առաձգականության էներգիան դեֆորմացված մարմնի էներգիան է. այդպիսի մարմինը իր էներգիայի հաշվին ինքը կարող է աշխատանք կատարել:

Բանաստեղծներն են հուշում

սկզբը՝ էջ 10

135) Զգացմունք եւ միտք

«Կյանքն է՝ ամպի փախչող ստվեր,
վայրկյանն է՝ միշտ իրական.
Բախտի կռանը կանքն է թեւ,
բայց դիպվածն է տիրական:
Զգացմունքն է գերիշխանը,
խելքը՝ նրա լույս ծառան.
Բայց դու խելքը վրադ պահի՛ր,
ինչպես պողպատ կուռ վահան»:
Ավ. Իսահակյան



Զգացմունքներն անմիջական ապրումներ են բավարարվածության, ուրախության, զայրույթի, թախծի, վախի եւ այլն, որ արտացոլում են անհատի վրա ազդող երևույթների ու իրավիճակների արժեքն ու նշանակությունը: Զգացմունքներն, այդպիսով, վարքի ու հոգեկանի դրսևորման մեխանիզմների հիմքն են: Սերտ կապված են մտածողների ու պահանջմունքների հետ: Ունեն նախապատմական բնագոյային բնություն: Պարունակում են տեսակի կենսաբանական փորձը՝ վնասակար ազդեցություններից ու վտանգավոր իրավիճակներից խուսափելու համար: Օրինակ՝ օձերից ու երկար վզի վրա եղած փոքր գլխից (ինչպես սագերի մոտ է) վախը ուղեղային կառուցվածքի մակարդակով «դրված» է մարդու, կապիկների, այլ կենդանիների մոտ:

Բայց մարդու զգացմունքները պարունակում են նաեւ մշակութային-պատմական փորձը, նրանք փոփոխվում են, զարգանում եւ հարստացվում են կյանքի ընթացքում սեփական եւ այլոց ապրումների փորձով եւ ձեռնարկում են ավելի բարդ զգացմունքներ:

Զգացմունքները կապված են մտածողության հետ (զարմանք, հետաքրքրաշարժություն, հուճուր, ինտուիցիա): Ունեն գիտակցվածության տարբեր աստիճաններ: Անգիտակից զգացմունքները կարող են դառնալ կոնֆլիկտների, ներողությունի, հոգեկան հիվանդությունների պատճառ:

Զգացմունքները հաճախ արտահայտվում են միմիկայով եւ ժեստերով. դա հատկապես նկատելի է մարդանման կապիկների մոտ, որոնք չեն կարողանում զսպել իրենց զգացմունքները:

Միտքը որեւէ բնագավառի վերաբերյալ ըմբռնումների, գիտելիքների ամբողջությունն է, կամ էլ ընդհանրապես՝ մտածողություն, գիտակցություն:

Մարդուն բնութագրող գծերից է նրա մտքի խորությունը: Դա բնորոշում է նրա իմացության աստիճանը, ինչը նրան թույլ է տալիս թափանցել երեւույթների ու խնդիրների էության մեջ, բացահայտել դրանց իմաստը, ծագման ու զարգացման օրինաչափությունները:

... Նկարում՝ Օգյուստ Բողեն՝ «Մտածողը»:

136) Բջիջ

«Սիրտս դատարկվեց
Ոչ թե քո սիրուց, այլ իմ արյունից,
Որ սնուցում էր բջիջ առ բջիջ
Երկուսիս միջև տաքուկ մեծացած
Այն ջերմությունը, որն, ուժ առնելով
Մեր կրակներին, այնպես զորացավ,
Որ դարձավ հսկա սիրահարություն,
Բայց սեր չդարձավ...»
Մետաքս

Բջիջը օրգանիզմի գլխավոր կառուցվածքային ու ֆունկցիոնալ տարրն է, տարրական կենդանի համակարգ: Կենդանի առանձնյակները կազմված են մեկ (միաբջիջ) եւ շատ բջիջներից (բազմաբջիջներ): Այսպես. նորածին մարդու մարմինը բաղկացած է տարբեր տեսակների մոտ 2*10¹² բջիջներից: Բջիջների չափերը լինում են 1 մկմ-ից մինչեւ 20 սմ (որոշ ամեբաներ): Բջիջների տեսքը բավականին բազմակերպ է եւ կախված է նրանց ֆունկցիաներից: Տարբերում են սեռական (գամետներ) եւ սոմատիկ (մարմնի) բջիջներ:


Գամետներն ունեն քրոմոսոմների հապլոիդ հավաքակազմ: Երկու սեռի գամետներն էլ կարող են բացարձակապես միատեսակ լինել ըստ ձևի (իզոգամիա) կամ տարբերվել ըստ չափերի (հետերոգամիա) եւ շարժունակության (ծվաբջիջների ու սպերմատոզոիդների կազմավորմամբ):

Բոլոր օրգանիզմների բջիջները նույնական են իրենց հիմնական օրգանիզմների հավաքակազմով, քիմիական կազմով ու նյութափոխանակությամբ: Սովորաբար, նրանք պարունակում են ցիտոպլազմա, միջուկ եւ այլ օրգանելիներ (վակուոլներ, Գոլջի ապարատ, լիզոսոմներ, միտոքոնդրիալներ, ռիբոսոմներ, ցենտրիոլներ եւ այլն):

Բուսական բջիջները տարբերվում են կենդանականներից ցելյուլոզե խիտ թաղանթներով եւ պլաստիդների առկայությամբ: Վերջիններից տարբերում են լուսասինթեզ իրականացնող կանաչ քլորոպլաստները, նարնջագույն ու կարմիր քրոմոպլաստները եւ անգույն էլեկտրոպլաստները (օրգանական նյութերի պահեստավորողները):

Համաձայն ժամանակակից տեսություններից մեկի հիմնական բջջային օրգանիզմները ծագել են տարբեր բակտերիաների միաձուլումից:

Բջիջներն ընդունակ են ինքնավերարտադրման, որի հիմքում ընկած են ԴՆԹ-ի ինքնապատճենավորման ընդունակությունը եւ քրոմոսոմների խիստ հավասարաժեք բաժանումը:



Հազվադեպ կարող է առաջանալ գենի կառուցվածքի մասնակի փոփոխություն՝ մուտացիա, որը փոփոխում է սպիտակուցների հատկությունները:

... Բջիջը կայուն է նաեւ մեղրահացի ծակոտի փոսն է, որի մեջ մեղուները մեղր են լցնում կամ մայր մեղուն ձու է դնում ձագ հանելու համար:

Վեցամկյուն բջիջը բոլոր բազմամկյուն կառույցներից ավելի դիմացկուն է եւ ամուր: Եթե մեղվատան կառույցը վեցամկյուն չլիներ, մեղրի ճնշմանը չէր դիմանա: Այդ կացարանը նրա համար ծառայում է որպես օրորոց, տուն եւ շտեմարան:

... Նկարում՝ բջջի սխեմատիկ պատկերը:

137) Հեքիաթ

«... Աշխարհն էլ ասես
մի հեքիաթ լինի՝
Անսկիզբ, անվերջ,
հրաշք դյութական:
Եվ ո՞վ է հյուսել հեքիաթն այս վսեմ,
Հյուսել աստղերով,
Եվ ո՞վ է պատմում
բյուր-բյուր ձեւերով՝
Անդուլ ու անխոնջ՝
այսպես թովչանքով»:
Ավ. Իսահակյան

Հեքիաթը բանահյուսական ֆոլկլորային կամ գրական ստեղծագործություն է անհավանական, սովորաբար կախարդական սյուժեով: Հեքիաթի նկատմամբ պատմի պատմականության, ակնհայտ հորինվածության վերաբերյալ առարկություններ, պահանջներ չկան: Դրանք հիմնականում առօրեական պատմություններ են խրատական ու իմաստուն, հրաշքի, հերոսականի ու կենցաղայինի խառնուրդ: Հեքիաթում պատմվում են մտացածին իրադարձություններ, որոնց մեջ հաճախ միահյուսվում են երեւակայական ուժերի միջամտությունը:

Ֆոլկլորային հեքիաթները ժողովրդական ծեսերի, սովորությունների, հավատալիքների, երգանքների ու մոգոմած պատմությունների ամբողջությունն են ազգային դրոշմը կրող:

Գրական հեքիաթը էպիկական ժանր է, նպատակաուղղված հորինվածք, որ սերտորեն կապված է ժողովրդական ակունքների հետ, բայց՝ հստակ հեղինակային:

Հեքիաթի հերոսը համարձակ է, անվախ, որ հակադրվում է մութ, չար ուժերին: Նա հաղթահարում է իր ճանապարհի բոլոր խոչընդոտները, հասնում է նպատակին, նվաճում է իր երջանկությունը, կամ փրկում աշխարհն ու մարդկանց:

Այժմ մի քանի հանրահայտ հեքիաթների մասին:

- Անդրեսենի «Ջրահարսը» հեքիաթը պատմում է փոքրիկ ջրահարսի մասին, որ պատրաստ է հրաժարվել ծովի իր կյանքից, որպեսզի ստանա մարդկային հոգի եւ արքայազնի սերը:

- Շարլ Պերոյի «Կարմիր գլխարկը» հեքիաթ է՝ փոքրիկ աղջկա եւ մեծ, վատ գալի մասին: Հետագայում տարբեր հեղինակներ այս հեքիաթի իրենց տարբերակն առաջարկեցին: Գրիմն եղբայրները հեքիաթին ավելացրին դրական ավարտ. այս տարբերակում փայտահատները աղմուկ են լսում եւ սպանում են գալիին, բացում են նրա փորը եւ փրկում տատիկին ու Կարմիր գլխարկին:

- Օսկար Ուալդի «Եսասեր հսկան» բնության եւ սիրո, դրանց վերափոխիչ ուժի մասին պատմող հեքիաթ է. եսասեր մարդու սիրտն այնչափ չի դիմանում տեսնելով իր այգին կենդանացած փոքրիկների ուրախ ճռվողունն ու խանդավառությունը...

- Անտուան դը Սենտ Երզուպերի, «Փոքրիկ իշխանը»: Հերոսը ծնունդ է առել տիրությունից եւ իր մեջ մեռնող աղքատ ազնվական ընտանիքի միակ հետնորդից, ում ոսկեհեր մագերի համար ընտանիքում կոչել են «Արեւ-թագավոր»: Սկսած մի փոքրիկ մեջքերում այդ բարի, պայծառ հեքիաթից. «Գնա եւ մի անգամ եւս վարդերին նայիր: Այդ ժամանակ կհասկանաս, որ ընդ միակն է աշխարհում: Եվս մեկը. «Խորհրդավոր ու առեղծ»:

- Ինքնատիպ հեքիաթներ է գրել Լուիս Բերոլը՝ «Ալիսան հեքիաթների աշխարհում», «Ալիսան հայելիների աշխարհում»: Բերոլը մասնագիտությամբ մաթեմատիկայի ուսուցիչ էր, ու զարմանալի չէ, որ նրա գրքերում շատ են ֆիզիկական ու մաթեմատիկական պարադոքսները: Հատկապես երկրորդ գրքում ամեն ինչ (այդ թվում եւ՝ ֆիզիկայի օրենքները) հայելային արտապատկերման մեջ են. որպեսզի մոտենա

Սեւ թագուհուն, Ալիսան ոչ թե պետք է քայլի դեպի նա, այլ նրանից, ժամանակը հոսում է հակառակ ընթացքով (մի թրվագում հանցագործը ձերբակալվում է մի հանցագործության համար, որը նա պետք է կատարեր հաջորդ երեքշաբթի): Ինչքան արագ ես վագում, այնքան երկար ես մնում քո տեղում (մեծ արագության դեպքում ժամանակը մեծ է, հեռավորությունը փոքր)...

Քերուի հեքիաթների ամենահմարավոր պլեգորիկ տարրները շատ-շատ են: Դրանցում, համարում են, ծածկագրված շատ բաներ կան ժամանակի հասարակական հարաբերությունների վերաբերյալ: Բայց ամենազարմանալին թերեւս այն է, որ դրանցում բազմաթիվ բնագիտական ու տրամաբանական հայտնագործությունների կանխագուշակումներ կան:

- Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազարը» հանրահայտ արեւելյան հեքիաթի խիստ ուշագրավ տարբերակ է, հեքիաթ-դրամա: Պիեսը վախկոտի՝ ճակատագրի կամ հանգամանքների բերմամբ տիրակալ դառնալու մասին է: Ալարկոտ ու անխելք Նազարը միայն իր բախտին է ապավինում, կարեւորություն չտալով այնպիսի որակների, ինչպիսիք են քաջությունն ու հնարամտությունը:



- Սկսած մի հատված հանձարեղ Լեոնարդո դա Վինչիի հրաշալի, բանաստեղծական անուրջներով լի «Կարապը» հեքիաթից: «Կարապը ծկուն պարանոցը խոնարհեց ջրի հայելու վրա: Նա անթաթք հայացքով զննեց ինքն իրեն: Նայեց, նայեց ու հասկացավ իր մարմնով անցնող ցուրտ սարսուղի պատճառը: Այժմ մա գիտեր ու համոզված էր. ժամը հասել է... Պետք է հրաժեշտ տա կյանքին...

Կարապի փետուրները զարմանալիորեն ձյունածեղմակ էին... Դրանք նույնքան գեղեցիկ էին, որքան ջահելության օրերին... Նա կարողացել էր կյանքի բոլոր փորձություններից ու ծախսերից անհեղափոխ պատվով դուրս գալ... պահպանել փետուրների անաղարտությունն ու վայելչագեղությունը...

... Հրաժեշտի երգով կարապն էր երգում, ու... քնքուշ, թախծանուշ երգը դեռ երկար ժամանակ լսվում էր շրջակայքում...: Մարեց միայն արեւի վերջին շողերի հետ...»:

... Նկարում՝ Ի. Գինցբուրգի «Հեքիաթ» քանդակը: Երազկոտ մայրը, խոնարհված աղջկան, հեքիաթ է պատմում, իսկ երեխան, հագին մի շապիկ, համակ ուշադրություն է դարձած:

Ի. Գինցբուրգը նաեւ Թեոդոսիայում Հ. Ալվազովսկու արձանի հեղինակն է:

Զարուհի ՊԵՏՐՈՍՅԱՆ
Շիրակի մարզի Արթիկի հ. 3 ավագ դպրոցի ուսուցչուհի, բնագետ

Արիստ ԴԵՏՐՈՍՅԱՆ
Շիրակի մարզի Արթիկի հ. 2 հիմնական դպրոցի ուսուցչուհի, բանասեր

Խաչատուր ԱՐՈՎՅԱՆ

«Վերք Հայաստանի»

Գլուխ առաջին (հատված վեպից)

Բարեկենդան էր: Չինն էկել, դիզվել, սար ու ձոր բռնել էր: Պարզըկա գիշերը է՛նպես էր գետինը սառցորել, որ ամեն մեկը ոտը կոխելիս հազար տեղից տրաքտրաքում, ծռծռում, ճքճքում էր ու մարդի ջանը սրտացնում, ձեն տալիս: Ամեն մեկ ծառի ճղքներից, ամեն մեկ տան բաշից հազար տեսակ սառցի լուլա, հազար տեսակ ձնի քուլա կախ էր էլել ու բիզ-բիզ իրար վրա սառել: Դենց գիտես՝ սար ու ձոր կամ նո՛ր էր ծաղկել, կամ նո՛ր ծերացել, մահվան դուռն ընկել՝ շունչն էր մնացել, որ տա ու աշխարհիս բարով մնա ասի: Դուռ, գազան, անասուն, սողուն՝ որը փետացել, էստեղ-էնտեղ վեր էր ընկել, որն էլ վաղուց, ամսով առաջ բունը մտել, ձենը կտրել, պաշարը վայելում, գարնան գալուն սպասում: Գետերի, առվերի երեսները սառիցը մեկ գազ էկել, հաստացել, իրար վրա դիզվել, էնպես էր ջրի, աղբրի բերնին հուլ տվել, որ մոտըներին կանգնողը միմիայն նրանց խուլ ձենն էր լսում, որ սառցի տակին տխուր, տրտում քլքլում էր ու էլ ետ էստեղ-էնտեղ կամաց-կամաց ձենը կտրում, պապանձվում, սառչում:

Արեգակը էս առավոտ որ գլուխը քնի տեղիցը ու աղոթարանիցը չի՛ բարձրացրեց ու աչքը աշխարհի վրա քցեց, շողքը սարերի գագաթին, դաշտերի գլխին է՛նպես էր պեծին տալիս, պսպղում, փայլում ու սառցի, ձնի հետ խաղում, ծիծաղում, կանաչ ու կարմիրն տալիս, որ հենց իմանաս, թե ավագ, գմուռ, յախուք ու հազար տեսակ-տեսակ անգին քարեր ըլեին դաշտերի, սարերի գլխին, երեսին, դռնին փռած: Սարերի սառը բուքը, ձորերի դաշնաշունչ քամին է՛նպես էր մեյդան բաց արել, գոռում, փչում, հոսան անում, ձնի թեփը իրար գլխով տալիս, որ ծամփորդի քիթ ու պոռունկը կպցնում, ծաքացնում, երեսը պատռում, գլխին, երեսին հազար անգամ խփում, աչք ու բերան լցնում, շատին կամ ձորերն էր քցում, խեղդում, կամ ձնումը թաղում, շունչը կտրում, կամ ոտ ու գլուխ փետացրած՝ ծամփից խռկում, սար ու ջուլ քցում, խեղդում կամ քարեքար տալիս:

Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ձմեռվա իրիկունը

Թարգմանություն Ա.Ս.Պուշկինից

Հողմը մեզով երկինքն առնում,
Գալարում է բուքը ձյան,
Մին՝ մանկան պես լաց է լինում,
Մին՝ ոռնում է գերթ գազան:
Մին՝ վայրենի սուլում պես-պես,
Աղմըկում է տանիքում,
Մին՝ ուշացած ծամփորդ, ասես,
Լուսամուտն է նա թակում:

Մեր խրճիթը, աղքատ ու հին,
Ե՛վ մըթին է, ե՛ւ տըխուր.
- Ի՞նչ ես նըստել պատի տակին,
Իմ պառավըս, էդպես լուռ:
Հոգնե՛լ ես դու փոթորիկի
Ոռնոցներից խելագար,
Թե՞՞ նիրհում ես քո իլիկի
Բըզզոցի տակ միալար:

Արի խմե՛նք, բարի ընկեր,
Իմ սեւ, ջահել օրերի,
Խըմենք դարդից, բաժակըդ բե՛ր,
Սիրտներըս բաց կը լինի:
Երգի՛ր, ո՞նց էր ապրում խաղաղ
Հավքը ծովի էն ափին,
Երգի՛ր, ո՞նց էր աղջիկը վաղ
Ջուրը գնում մինչ արփին:

Հողմը մեզով երկինքն առնում,
Գալարում է բուքը ձյան,
Մին՝ մանկան պես լաց է լինում,
Մին՝ ոռնում է գերթ գազան:
- Արի խմե՛նք, բարի՛ ընկեր
Իմ սեւ, ջահել օրերի,
Խըմենք դարդից, բաժակըդ բե՛ր,
Սիրտներըս բաց կը լինի:

Եղիշե ՉԱՐԵՆՑ

Ինչքան որ հուր կա իմ սրտում՝ թուրըրը քեզ.
Ինչքան կրակ ու վառ խնդում՝ թուրըրը քեզ.
Թուր՝ըրը տամ ու նվիրեմ, ինձ ո՛չ մի հուր թող չմնա՝
Դու չմրսես ձմռան ցրտում՝ թուր՝ըրը քեզ...



Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ


Առաջին ձյունը

-Վա՛յ մայրի՛կ ջան, տե՛ս,
Բակն ու դուռը լի
Ինչքա՛ն ըսպիտակ
Թիթեռ է գալի...
Եսքան շատ թիթեռ
Չեմ տեսել ես դեռ:
- Չէ՛, իմ անուշի՛կ,
Թիթեռներ չեն էդ.
Թիթեռներն անցան
Ծաղիկների հետ:
Էդ ձյունն է գալի,
Փաթիլն է ձյունի,
Որ կարծես սպիտակ
Թիթեռնիկ լինի:

Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ

Վայում է քամին՝ ցուրտ, ձմեռնամուտ,
Չոր տերեւները շուրջս է դիզում.
- Ո՞վ է իմ սիրտը տրորում անգութ,
Սեւ մազերիս մեջ ձերմակ է հյուսում:

Ձյունը պատանքով ծամփես է ծածկում,
Սիրտս գերեզման՝ մռայլ եւ անհույս,
... Հատ-հատ իմ թաղման զանգերն են գարկում,
Ու մի սիրտ վրաս լալիս է քնքուշ...



Համո ՍԱՀՅԱՆ

Ձմեռնամուտ

Արագած սարն է ամպի մեջ լռել,
Եվ թելերն ամպոտ հողմերը նրա
Մի բեկոր ձմեռ դաշտերից բերել
Շաղ է տվել թաց մայթերի վրա:

Ցուրտ քամիներն են սուրում սարերից,
Բայց իր գարնան մեջ սիրտս այնքան է տաք,
Որ չի տարբերում ձյո՞ւն է ոտքիս տակ,
Թե՞՞ ծաղիկներ են թափվել ծառերից:

Շուշանիկ ԿՈՒՐԴԻՆՅԱՆ

Փաթիլն ուզեց

Փաթիլն ուզեց ինձի գգվել, գուրգուրել.
Իմ թշերը պաղ շուրթերով համբուրել.
- Ես գարուն եմ, դու ցուրտ ձմեռ, ա՛յ փաթիլ.
Քո համբուրից դու կը դառնաս խեղճ կաթիլ:

Սառ հողի տակ մի օր կը հանգչեն ես արձակ.
Իջիր վրաս երբ կամենաս համարձակ.
Իմ սեւ թմբից էլ չես հալչի, ա՛յ փաթիլ,
Անջերմ, անկյանք ես կը դառնամ խեղճ կաթիլ:

Տիեզերքի տապ ու կիզող համբուրից
Որպես ծաղիկ թոշնած ու զուրկ եմ բուրից.
Ողջըս դանդաղ պիտի հյուսվի ու հալչի
Ոչ մի շրթի համբուրյոն էլ ինձ չի դիպչի...



Վահան ՏԵՐՅԱՆ

Ձմռան գիշեր

Տխրությունս անուշ է, որպես
Յեռավոր, հեռավոր կարկաչուն.
Այնպես մեղմ է իմ սերն ու այնպես
Անուշ է նա իմ սիրտը տանջում:

Չեմ ուզում ոչ անցյալը հիշել,
Ոչ գալիք օրերին նետել հույս,
Յանգիստ է իմ շուրջը եւ գիշեր,
Ու սիրտըս չի տենչում արշալույս:

Անդորրել է աշխարհը բոլոր,
Դուրսը ծյուն է գալիս, փողոցում
Գիշերը եւ հանգիստ է, եւ խոր,
Ու սիրտըս առավոտ չի ուզում:

Մաքուր է իմ հոգին, ու հիմա
Օրհնում եմ վիճակըս երկրային,
Ընդունում եմ սիրով կյանք ու մահ
Ու սիրտըս պարզում եմ աշխարհին...

Անշար է իմ հոգին ու հանգիստ,
Գիշերը անդորր է, դուրսը ծյուն.
Ննջեցե՛ք հավիտյան, վերք ու վիշտ,
Ծավալվի՛ր, լուսեղեն մենություն...

Գուրգեն ԲՈՐՅԱՆ

Ձմռան երգ

Տեսե՛ք, տեսե՛ք,
Ձյուն է գալիս
Փաթիլ-փաթիլ,
Սպիտակ,
Անտառ ու դաշտ,
Փողոց ու տուն
Առել իրեն
Գորգի տակ:

Ջան, ջա՛ն ձմեռ,
Յագար բարով,
Ինչ ուրախ եմք
Մենք այսօր,
Չնագնդի
Ու ձնե մարդ
Մենք կշիներք
Ամեն օր:

Քո նվերը,
Սպիտակ է,
Ճերմակ, փափուկ,
Գեղեցիկ,
Տե՛ս, ինչքան լավ
Պար են բռնել
Օդում՝ ինչպես
Թիթեռնիկ:

Տեսե՛ք, տեսե՛ք,
Ձյուն է գալիս
Փաթիլ-փաթիլ,
Սպիտակ,
Անտառ ու դաշտ,
Փողոց ու տուն
Առել իրեն
Գորգի տակ:

Վահան ԹԵՔԵՅԱՆ

Ձյունը

Օ՛հ, հանդիպո՛ւմըս քեզի, ձյունին ներքեւ, այն գիշեր,
Թեթեւ ու լուռ՝ երկինքն իջնող ձյունին, հարսի պես...
Տարի մ'ամբողջ ես փախեր էի քեզմե, քեզ սիրեր,
Ու միայն ձյունը հիմա զիս կը մղեր դեպի քեզ...

Որքա՛ն գորով, զմայլանք, արգահատանք ու տենչանք
Քեզի համար տակավի՛ն հոգիս մեջ ունեի.
Որքա՛ն հրձվանք խաբուսիկ եւ իրական տառապանք՝
Արթնության մեջ ու քրնի քեզմե եկած էր ինձի...

Եվ հիմա դո՛ւն էիր, դո՛ւն որ ձյունին տակ, ինձի հետ
Կը խոսեիր շունչ շունչի, ու կուտայիր ինձ վաղվան
Յույսը գարուն երկնքին, պարտեզներուն ծաղկավետ...

-Եվ դողալով գացի տուն... Բայց իրոք դո՛ւն էիր ան.
Ձայնդ ու խոստումը՝ դ՛ ինչպե՛ս զքեզ տարբեր կ'ընեին.
Ստուգության մեջ ինչպե՛ս կ'որոնեի հույսս հին...



Մատթեոս ԶԱՐԻՖՅԱՆ

Կը ձյունե

Յոգիս կեսգիշեր մ'է ձմեռային,
Ուրկե տակավին երկինք կընային
Յիվանդ ու անտեր
Քանի մը լապտեր...

Բայց ալ կը ձյունե՛ ճամբուն վրա Յույսին
Ուր հոգի տվող սերեր կը մըսին:
Սեւ ճամբորդ մ'հեռվեն
Կուգա համորեն...


Գուրգեն ՄԱՅԱՐԻ

Ձմեռ

Թափվի՛ր, ճերմակ, թափվի՛ր, ձյուն,
Թափվիր իմ սրտում,
Ծածկիր անտառ ու կածան,
Ջրադացը հին, հյուղ ու ծառ,
Գյուղակն իմ սրտում:

Թափվիր դանդաղ ու թեթեւ,
Այսպես թափվում էիր դու,
Երբ ես ջահել էի դեռ
Յույզերով հորդուն:-
Այսպես թափվում ես հիմի,
Յանդիսավոր ու հանգիստ,
Ասես պարիսպներին հին
Յայկական վանքի:

Թափվիր, փռվիր իմ սրտում,
Ճերմա՛կ երագ, ճերմա՛կ ձյուն...



Պարույր ՍԵՎԱԿ

Վառարանի առաջ

Իսկ քարածո՛ւխը...

Երբ նա վառվում է
Չմեռվա ցրտին,
Յին վառարանում,
Եվ ձյունն է դրսում կրկնում ինքն իրեն,-

Լինում է այնպես,
Որ՝ մեկ էլ տեսար՝
Սոսափն եմ լսում ա՛յն անտառների,
Որոնք բյուրիազար տարիներ հետո
Այս քարածուխին պիտի վերածվեն.
Եվ գագանների ոռնոցն եմ լսում
Այդ անտառների անեզրության մեջ.

Եվ ձայնը նաեւ
Իմ նախա-նախա-նախապապերի,
Որ որս են անում այդ անտառներում,
Որ մերկանդամ են
Եվ ունեն դեռ պոչ,

Բայց անկարող են այլերս ապրել
Լռին խավարում կույր անձավների,
Ինչքան էլ դրանք թվան ապահով:

Ու հասկանում եմ,
Որ սերվել եմ ես
Դե՛ռ այն ժամանակ, հե՛նց այն ժամանակ...

Մեծերի մեծ կրթերը

Մերիլին Մոնրո և Ջոն Գ. Բենեդիկ



1954 թվականի ամռանը դերասան Փիթեր Լուուֆորդը իր գործակալ Զարոգ Ֆելդմանի տանը երեկո կազմակերպեց Մասաչուսեթս նահանգի երիտասարդ, պատվախնդիր սենատոր Ջոն Ֆիցջերալդ Բենեդիկի և նրա տիկին Ջեյնի պատվին: Այն ժամանակներից, երբ Լուուֆորդն ամուսնացավ Պատրիսիա Բենեդիկի Ջոնի քրոջ հետ, դարձավ Բենեդիկների հարուստ և ազդեցիկ կլանի անդամ, որտեղ, սակայն, միշտ չէր իրեն բարեհարմար զգում: Սակայն անցավ բավական կարճ ժամանակ, եւ Փիթերը դարձավ սենատոր Բենեդիկի, մերձավորների համար՝ ուղղակի Ջեյնի, միանգամայն անփոխարինելի մարդը: Ժամանակ առ ժամանակ Լուուֆորդը այդ անուղղելի կնամուխն ծանոթացնում էր նորանոր կանանց հետ և նրա համար սիրային տեսակցություններ էր դասավորում:

Լուուֆորդն ամեն ինչ արեց, որ Ֆելդմանի մոտ կազմակերպված երեկոյին Ջոն Բենեդիկի հետ իրավիճակ լինի նաեւ Մերիլին Մոնրոն: Այդ ժամանակ Մերիլինը դեռեւս ամուսնության մեջ էր ամերիկյան բեյսբոլի աստղ Ջո դի Մաջոյի հետ: Սակայն նրանց ամուսնությունն արդեն ճեղք էր տվել, ընդ որում՝ նաեւ այն պատճառով, որ Ջոն այն տիպական պարզ և ազնիվ տղան էր, որն այդպես էլ չկարողացավ սիրել Գլորիան: Ու նրա աշխարհիկ կյանքը: Ահա եւ հիմա էլ նրան զրեթե քարշ տալով ստիպված էին բերել այս երեկոյին, որտեղ նա վերջնականապես դուրս եկավ փերից՝ նկատելով, թե ինչպիսի համառությամբ էր Բենեդիկն զննում իր կնոջը: Դեռ ամուսնացած Մերիլինը կասեց. «Նա ոչ մի վայրկյան աչքն ինձնից չէր կտրում, եւ ինչ-որ պահ սկսեցի անհարմար զգալ»: Ներկաներից մի քանիսը հիշում են, որ ամուսինները կռվում էին: «Արդեն վերջ, բավական է, գոռում էր Դի Մաջոն: Գնացի՛ր այստեղից»: Նա ամբողջ ուժով բռնեց հակառակվող Մերիլինի ձեռքից և քարշ տվեց դեպի ելքը: Գոգնելով վիճելուց՝ նա գնաց միայնակ, իսկ Բենեդիկն շարունակեց սքանչանալ Մերիլինին:

Մի քանի օր անց Դի Մաջոյի տանը հեռախոսազանգ հնչեց: Լսափողը վերցրեց Ջոն. «Լուու Եմ»: Դեռախոսագծի մյուս ծայրում լուռ էին, եւ նա գայրոյթով շարտեց լսափողը: Ավելի ուշ, նրանց առաջին գաղտնի հանդիպումներից մեկի ժամանակ, Ջոնը նրան կասեց. «Դու պետք է գուշացնես ինձ, որ կարողանամ զանգել չբախվելով ամուսնուդ հետ»:

Ընդհուպ մինչեւ 1955 թվականի սկիզբը եւ նույնիսկ Դի Մաջոյից ամուսնալուծվելուց հետո Մերիլինը ոչ ոքի չէր պատմում ոչ Բենեդիկի հետ իր հարաբերությունների, ոչ մշտապես Նյու Յորք այցելությունների մասին: Սիրել Բենեդիկին եւ

օգտվել նրա փոխադարձ սիրուց՝ նշանակում էր նրա հետ կիսել մի գեղեցիկ գաղտնիք: Իսկ ո՞ր կինը, ներառյալ եւ Մերիլինը, երբեւէ չէր երագել ամեն ինչ կիսել Միացյալ Նահանգների ամենահարպուրիչ տղամարդկանցից մեկի հետ: Երբ Բենեդիկն փրահատեցին պատերազմի ժամանակ մեջքին ստացած լուրջ վերքի պատճառով, ոչ ոքի չզարմացրեց, որ նրա հիվանդասենյակը գարդարում էր պերճաշուք կիսավարտիքով առասնակած ձգված Մերիլինի պատկերով մի հսկայական պաստառ:

50-ական թվականների ամբողջ ընթացքում Մերիլինը չէր դադարեցնում իր մտերմիկ շփումները Բենեդիկի հետ: Նույնիսկ նրա հարսանիքը գրող Արթուր Միլլերի հետ 1956 թվականին փաստորեն չազդեց «Ջեյնի» հետ իր հարաբերությունների վրա: 1960 թվականի հունվարին, երբ Բենեդիկն առաջադրեց իր թեկնածությունը Սպիտակ տան ընտրություններում, Մերիլինը միացավ այն դերասան-դերասանուհիներին, ովքեր աշխատանք էին տանում նրա նախընտրական արշավում և նրանում ներդրում էին անձնական դրամական ավանդներ: Նա հոգնած, ջղային և անվերջ տխուր տեսք ուներ. անսպասելի վիճուհից հետո նա բժիշկներից իմացավ, որ արդեն երբեք չի կարող երեխա ունենալ: Արթուր Միլլերի սցենարով նոր ֆիլմի նախապատրաստումը, որի ռեժիսորը Ջոն Դյուսոնն էր, Քլարե Գեյբլի հետ բախումները. այս բոլորը ճնշում էր նրան և մղում դեպի ալկոհոլը, քնաբերները և խթանիչները:

Սակայն Բենեդիկն չհեռացավ նրա կյանքից, եւ Մերիլինը շարունակում էր նրան հետամուտ լինել Կոնեկտիկուտի ազարակատնից մինչեւ Նյու Յորքի բնակարանը կամ հյուրանոցային այն համարը, որտեղ նախագահի թեկնածուն կազմակերպել էր իր շտաբ-գրասենյակը: Իսկ ի՞նչ էր խոստացել նա իրեն: Դեռավոր է, որ նա օգտվել էր իր միանությունից, միշտ հեքիաթների հավատալու իր պարզամիտ պատրաստակամությունից: Ոչ մի մեծ բան չկար: Մերիլինի բնավորության մեջ գրավիչ շատ բան կար: Նրա հետ՝ ոչ մի կեղծավորություն, ոչ մի խորամանկություն: Նրա հետ Ջեյնը կարող էր հանգստանալ, լինել ինչպիսին որ կա, նրան կարող էր վստահել ամենաթաքուն գաղտնիքները: Դասականապես այդ շրջանում Մերիլինի ճանապարհին սկսեցին հանդիպել շատ արտասովոր դեմքեր: Ֆրենկ Սինաթրան կլանի բարեկամը եւ մաֆիայի կնքահայրը, Սեմ Մունի Ջանկանան, որին մեծ երգիչը ներքաշեց Բենեդիկների շրջանը եւ որը բացահայտ օգտվում էր քաղաքագետներից «գաղից դեպի ցեխ» իջեցնելու իշխանությունից, Ջուդիթ Բենեդիկը՝ Բենեդիկի շրջապատի գլխավոր դեմքերից մեկը, որ նույնպես պատկանում էր Ջանկանային եւ Սինաթրային միջավայրին:

Ժողովրդավարական կուսակցության համազունարի բացման երկրորդ օրը 1960 թվականի հունիսի 13-ին Ջոն Բենեդիկն, ինչպես միշտ՝ Ջուդիթ Բենեդիկի ուղեկցությամբ (Ջեյնի Բենեդիկն ստիպված էր տանը մնալ երկրորդ հղիության ժամանակ առաջացած բարդությունների պատճառով), Մերիլին Մոնրոյին եւ նա մի քանի մերձավորների հրավիրեց «Բեվերլի Գրիվ» օթելի իր համարում ընթրելու: Բայց նախ Մերիլինն ու Բենեդիկն առանձնացան: «Ջեյնը շատ ժողովրդավար է (դա ակնարկ է ապագա նախագահի քաղաքական պատկանելության մասին) եւ խորաբախված», - խոստովանեց է Մերիլինը Փիթեր Լուուֆորդին: «Բենեդիկն իրեն կորցրել էր, - թունոտ նկատում է Լինա Պեպիտոնեն, որը որոշ ժամանակ ծառայել էր աստղին, - Մերիլինը ինձ խոստովանել է, որ նա անընդհատ շոյել է իր ազդերը եւ ճնշել գոտկատեղը: Այն երեկո, ինչպես նա

ասել է, Ջեյնի ձեռքը հաղթահարել է արգելված սահմանագիծը եւ հայտնվել նրա շրջագրեստի խորքերում: Բայց հայտնաբերելով, որ նրա հագին վարտիք չկա, սարսափելի շփոթվել է, կարմրել եւ ձեռքը կտրուկ հետ քաշել: Իսկ Մերիլինը միայն զրնգում ծիծաղել է»:

Փիթեր Լուուֆորդը նույնպես ներկա էր այդ տեսարանին: Բենեդիկի փեսան Մերիլինի հանդեպ անկեղծ բարեկամություն էր տածում, սակայն վախենում էր, որ միանգամայն անհավասարակշիռ, հուսահատություններում ու սիրային անհաջողությունները շամպայներով եւ թմրադեղերով թաղելու միշտ պատրաստ երիտասարդ դերասանուհին կարող էր վնասել մի մարդու, որն ուներ ԱՄՆ-ի նախագահը դառնալու բոլոր հնարավորությունները: Ուրեմն ինչո՞ւ էր Մերիլինն այդպիսի եռանդով քաղաքական գրականություն ուսումնասիրում, եթե ոչ Միացյալ Նահանգների ապագա առաջին տիկնոջ դերի համար պատրաստվելու համար:

Բենեդիկն հաշվի չէր առնում աշխարհի ամենահայտնի կնոջ հոգեւոր փխրունությունը: 1960 թվականի նոյեմբերին դառնալով նախագահի նա նույնիսկ դադարեց ապահարգանի մասին մտածել: Սակայն շարունակում էր կանանց փեշերի հետեւից քարշ գալ եւ հաճախ էր Լուուֆորդին խնդրում նրա տունն իրեն տրամադրել կար-



Ջոն Բենեդիկի հանդիպումների համար:

Մերիլինի հետ ամեն ինչ այլ կերպ եղավ: Նրա ամեն մի շարժմանը մանուկ ազահորեն հետևում էր, իսկ նրա մասին հողվածները լի էին կծու հեգնանքով: Ման-հեթենի հոգեբուժարանում նրա գտնվելը դարձավ պետական կարեւորության գործ: Այն համարեց առանց այդ էլ պատկառելի գործի հատրոյակը, որը վարում էր Էդգար ուվերը՝ Դեյտաքնությունների դաշնային բյուրոյի (ԴԴԲ) շեֆը, մի մարդ, որը երգվել էր ճգմել Ջոն Ֆիցջերալդ Բենեդիկին: Նրա եղբայր Ռոբերտին (արդարադատության նոր նախարարին), ինչպես նաեւ երկիրը տանել ռասայական, սոցիալական եւ հոգեւոր բարեփոխման:

Բայց ինչպիսի՞ն էր Բենեդիկի բարոյական կերպարը: Այդ հարցը Լուուֆորդը իրեն չտվեց, եւ երբ նախագահը նրան հրամայեց գտնել Մերիլինին, նա գտավ: Դանձնարարությունը թեթեմեթից չէր՝ սկզբում հարկավոր էր արթնացնել Լուս Անջելեսի արվարձան Բրենթվուդի շրջանի իր նոր բնակարանում քնած դերասանուհուն: Նրա հետ մեկտեղ պարում էր բուժքույր-հիվանդապահուհի Յունիս Մյուրեյը, որ Մերիլինին էր կցված իր հոգեբույժ, դոկտոր Ռինսոնի կողմից: Դերասանուհու համար այդ բնակարանը իր ապաստարանն էր, իր բույնը, մի տեղ, ուր նա կարող էր առանձնանալ Բե-

նեդիկի հետ: Լուուֆորդը երկար բախեց սենյակի դուռը: Վերջապես հայտնվեց դեռեւս քնաթաթախ Մերիլինը: «Շտապիր», - ասաց բորբոքված Փիթերը: Երկար պատրաստվելուց հետո փայլող Մերիլինը նորից հայտնվեց դռների մեջ, նրա պլատինագոյն հիասքանչ մագեր իրավաբան էին սեւ փարթան կեղծամի տակ:

Բենեդիկն այդ ժամանակ հյուրընկալվել էր Փալմ Սփրինգզում դերասան եւ երգիչ Բինգ Քրոսբիի մոտ: Այդտեղից մի քանի կիլոմետրի վրա Ֆրենկ Սինաթրան, որի մոտ պետք է գնար Բենեդիկն, սաստիկ գազազել էր, որովհետեւ վերջին պահին նա հանկարծ միտքը փոխել էր կանգ էր առել Քրոսբիի մոտ: Սինաթրան, նախապես ստանալով մաֆիայի օժանդակությունը եւ միլիոնավոր դոլարներ ներդնելով այն մարդու նախընտրական արշավում, որին համարել էր իր բարեկամը, այդպես էլ չներեց Ջոնին՝ այդ դավաճանության համար: Քրոսբիի մոտ շատ ազդեցիկ ժողովրդավար-քաղաքագետներ էին հավաքվել, բայց միակ բանը, որ ուզում էր Բենեդիկն ցրվել ու զվարճանալ էր: Իրավաբան Ֆիլիպ Վեսթոնը պատմում է. «Ես անմիջապես նկատեցի, որ հյուրերը բաժանվեցին երկու խմբի՝ մի մասը հավաքվեց լողավազանի մոտ, մյուսը, որ ավելի փոքրաթիվ էր՝ նախագահի համար պատրաստված քրեքում: Այնտեղ էր նաեւ Մերի-



լինը, եւ բոլորն այդ մասին գիտեին: Ինձ ապշեցրեց այն, որ ոչինչ չէր արված նրա ծպտվածությունը պահպանելու համար: Այդ կեղծամային դիմակահանդեսը պարզապես երեխայություն էր: Բենեդիկն, թվում էր, կատարելապես լիցքաթափվել էր: Նրա հագին թեթեւ սվիտեր էր՝ «վզով» օձիքով, իսկ Մերիլինի հագին՝ տունիկայի նման մի բան: Մերիլինը մի քիչ տարօրինակ տեսք ուներ: Նրանք միասին երկու դավադիրների տպավորություն էին թողնում: Այդ գիշերը նրանք միասին անցկացրին»:

Ժամանակ Կարմենը դերասանուհու ազգականուհին, պնդում է, որ «Մերիլինը երբեք չէր դադարում հավատալ, որ կարող է հասնել մինչեւ Բենեդիկի մակարդակին ինչպես ֆիզիկականի, այնպես էլ բանականի առումով: Նա հույս ուներ դառնալու իսկական լեդի, որի համար անհարմար չէր զգա»:

Չնայած խորհրդականների նախագագումներին եւ քաղաքագետների ճնշմանը՝ Բենեդիկն Մոնրոյի հետ չխաբեց կապերը: Դե ինչպե՞ս կարող էր նա հրաժարվել այդ հրաշալի եակից, որ ալեկոծում էր նրան որպես տղամարդու, ազահորեն որսում էր նրա ամեն մի խոսքը եւ թեթեւացնում նրա դժվարին պարտականությունների ծանրությունը:

շարունակությունը՝ էջ 15

Մերիլին Մոնրո և Ջոն Բ. Բենեդի

սկզբը՝ էջ 14

1962 թվականի ամռանը Մերիլինի անու-
նը հայտնվեց Քենեդիի պատվին Ֆիջի Բելի՝
Նյու Յորքի աշխարհիկ կյանքի դեմքերից մե-
կի կազմակերպած համադրված ընթրիքի
հրավիրվածների ցուցակում: Ընթրիքը նշա-
նակված էր ժամը 19-ին: Բայց արդեն 20-ն է,
20.30-ը, իսկ Մերիլինը չի ներկայանում: Վեր-
ջապես՝ ժամը 21-ին, ինչ-որ մեկը նրա մոտ՝
տուն է գնում: Նա իր սենյակում է՝ զարդասե-
ղանի մոտ: Նրա հագին միայն գամասեղով
կոշիկներ են: «Աստված իմ, Մերիլին: Ի՞նչ եք
անում: Նախագահն արդեն ձեզ սպասելուց
ուժասպառ է եղել»: Մերիլինը կախում է գլու-
խը, հոգոց հանում և սրբում արցունքները:
«Ախր ի՞նչ հազմեն»: Պահարանից հանելով
հագուստների դուռը և ծռնովելով՝ նա
խցկվում է տորեդոյի նման իրանը կիպ գր-
կող շրջագետի մեջ, դնում է կեղծամը՝ այս
անգամ վարդագույն, և մուգ ակնոց: Ժամը
22-ն է: «Ես պատրաստ եմ»: Ծուրջ հիսուն
լուսանկարիչներ դարանակալել են Ֆիջի
Բելի տան մատույցներում՝ որեւէ երեւելի
մարդու նկարելու հույսով:

Վերելակում Մերիլինը հանց կեղծամն
ու ակնոցը և ժպտալով գնաց Քենեդիի մոտ,
որը նրան բերկրանքով դիմավորեց: «Ող-
ջույն»: Սարդկանց այդպիսի բազմության
մեջ նրանք իրենց զգում էին որպես առերես-
ման բերված հանցակիցներ: Այդ շքեղ դահ-
լիճում մթնոլորտը լարված էր: Գլուխները վա-
ղուց հոգեղ էին խորտկվելից և մարտիմի-
րջ: Նախագահի համար պատրաստված նը-
բնտիր ընթրիքը դարձավ ոչ պիտանի...

Ջոն Բենեդիի քառասունհինգամյակը
Նյու Յորքի Մեդիսոն Սքվեր արդենում տո-
նելու ժամանակ Մերիլինը պետք է հայտն-
վեր փոխ ժողովրդավարական կուսակցու-
թյան խորհրդանիշի վրա և երգեր «Happy
birday to you, Mr. President!» («Ծնունդը
շնորհավոր, պարոն նախագահ»): Նրա հա-
զին պետք է լիներ Ջին Լյուիսի ֆիրմայի շո-
ջագետը, որ Սառլեն Դիտրիխի զգեստի
կրկնօրինակն էր: Փիթեր Լուսֆորդը, որ կա-
տարում էր արարողապետի դերը, Մերիլին-
ին բեմ կանչեց: Մեկ անգամ... երկրորդ ան-
գամ: Ոչ ոք չկար: Նա մեկ անգամ ևս փոր-
ձեց, արդեն գրգռված: «Իսկ այժմ, տիկնայք
և պարոնայք, մեզ լքած Մերիլին Մոնրոն»: Այդ
սարսափելի կատակը (հիմնված անգլե-
րեն late բառի երկնաստության վրա՝ այն
կարող է նշանակել «ուշացած» կամ էլ «մեզ
լքած» մեռած) Մերիլինին ստիպեց դուրս
գալ իր զարդասենյակից... Դեռ, չնայած
Մերիլինի բոլոր պատրվակներին, Լուսֆոր-
դը նրա մոտ ուղարկեց Ռոբերտ Քենեդիին:
Արդարադատության երիտասարդ նախա-
րարը ևս յոթ երեխաների հայրը նրա հետ
մնաց շուրջ քառորդ ժամ: Դե ինչպե՞ս, նա
քաջալերեց դերասանուհուն՝ ասելով, որ
նախագահը գոհ է մնացել, բայց, հնարավոր
է, նա ուրիշ պատճառներ էլ ուներ, որպեսզի
մնար նրա հետ... «Ռոբերտ Քենեդին կար-
ծես խենթացել էր, նրա շուրջը վազվզում էր
չուված աչքերով՝ կարծես հիպոստացած նրա
զրգռիչ շրջագետից»,- պատմում է ներ-
կաներից մեկը: (Այդ դեպքից հետո Մեդիսոն
Սքվեր արդենում, ինչպես գրել է պատմա-
բան Արթուր Շլեզինգերը, Մերիլինը և Ռո-
բերտը մի քանի անգամ հանդիպել են: Ի՞նչն
էր նրա մեջ գրավում Ռոբերտին: Գնարավոր
է, հուսալքման և գայթակղելու ցանկության
միջեւ հավասարակշռությունը պահող մար-
դու առեղծվածը):

Այնուամենայնիվ, Մերիլինը մի քանի
ժամով առանձնանում է Ջոնի հետ: Մերիլին-
ը դեռ չգիտեր, որ նրան տեսնում է վերջին
անգամ: 1962 թվականի հունիսը նրա հա-
մար եղավ պարտությունների ամիս: Նրան
հեռացրին բեմադրիչ Ջորջ Բյուքորի
«Something Got to Give» («Ինչ-որ բան
պետք է տալ») ֆիլմի նկարահանումներից,
որն, ի դեպ, այդպես էլ չավարտվեց: Գետ-
զ

հետ նա ավելի էր կախվածության մեջ
ընկնում ակտիվից և հաբերից: Եվ վերջա-
պես նկատեց, որ Ջոնը խուսափում է իրե-
նից: Նա դադարեցրել էր պատասխանել իր
նամակներին և հեռախոսազանգերին: Նա
բեռ էր դարձել մի մարդու համար, որը հույս
ուներ վերընտրվել երկրորդ ժամկետով:
Այն, ինչն ինքը համարել է իսկական սեր,
եղել է սոսկ նրա տղամարդկային ինքնասի-
րությունը շոյող արկած:

Եվս մեկ անգամ նա դառնությամբ հա-
մոզվեց այն բանում, որ երբեք սիրված չի լի-
նի, այլ ընդմիջտ կմնա սոսկ տարփանքի
առարկա: Սակայն Ջոնը կրկին հայտնվեց և
նրան հրավիրեց մի փակ երեկոյի: Բայց սեր
Մերիլինն իմացավ, որ այնտեղ են հրավիր-
ված նաև երկու հանրահայտ «կանչովի աղ-
ջիկներ», հրաժարվեց գնալ: Նրա տանը սկ-
սեց ավելի հաճախ հայտնվել Ռոբերտ Քենե-
դին: «Երբ ես գնում էի Մերիլինի մոտ, - պատ-
մում է ժամետ Կարմենը, - դուռը գրեթե միշտ
բացում էր Բոբին: Ինձ ապշեցրին Մերիլինի
գրառումներով նոթատետրերը: Նա ինչ-որ
բան էր գրել Ֆիդել Կաստրոյի, Ջիմի Դոնի
(բեռնատարների վարորդների արհմիության
կաշառակեր առաջնորդը, որ սպանվեց 1975
թվականին) և այլ հետաքրքրական ան-
հատների մասին: Մերիլինը լսում էր Բոբի
հեռախոսազրույցները և հետո դրանք
գրանցում: - Դրանք պարզապես թափփ-
ված ուրվագծեր են, - ասում էր նա ինձ, - հնա-
րավոր է, երբեւէ ես իմ գրանցումները կարգի
կրեմն: Նա այդպես էլ մտքից չէր հա-
կնում իր վիթխարի ծրագրերը, և
դա ինձ վախեց-
նում էր»:

Իսկ այդ ժա-
մանակ ԳԴԲ-ի
գործակալներն
արդեն գործի էին
անցել: Մերիլինի
հեռախոսը սկսե-
ցին լսել: Դեկտեմբերի
24-ի ուշ երեկո-
յան Սպիտակ
տան օվալաձև
դահլիճում չորս
մարդ էր հավաք-
վել՝ նախագահը,
նրա եղբայրը և
ԳԴԲ-ի երկու ներ-
կայացուցիչ: Ծա-
նոթ է արդյոք պարոն
նախագահը դերասա-
նուհի Մերիլին Մոնրոյի
հետ: Քենեդին տա-
տանվում էր: Ինչ-որ
բան հայտնի է արդյոք
պարոն նախագահին
այն ինքնակենսագրու-
թյան մասին, որն այդ
դերասանուհին պատ-
րաստվում է իրատարակել:
Մերիլինը իր
ինքնակենսագրության
բնագիրը պետք է թե-
լադրեր երրորդ անձի,
որը ԳԴԲ-ին արդեն
տեղեկացրել է դերասա-
նուհու այդ մտադ-
րության մասին: Դայտնի՞
է արդյոք պարոն
նախագահին, որ միս
Մոնրոն մտադիր է
ֆիլմ նկարահանել
ինքնակենսագրության
վրա՝ «Նախաձեռնի
ընթացքի» մասին: Զար-
ժե՞ արդյոք անհավաղ
դադարեցնել այդ
նախագիծը: Նախագահը
տվեց իր համա-
ձայնությունը, այդ
ժամանակ, գործակալ-
ներից մեկի խոսքերով,
նա շնջաց: «Պահապ-
նիր նրան, Տեր»:
ԳԴԲ-ի մարդկանց
հեռա-
նալուց հետո, մինչև
առավոտյան ժամը 6-ը
Ջոնը և Ռոբերտը երես
առ երես գրուցեցին:
Նրանք շվարած և ճնշված
էին: Այդ դրամա-
տիկական գիշերվա
հաջորդ օրն իսկ Ռոբեր-
տը դադարեցրեց իր
«այցելությունները»
Մե-
րիլինի տուն:

«Մերիլինի հեռախոսն
ունկողնովում էր, -
ասում է Միքի Սոնգը՝
Քենեդիների ընտանե-
կան վարսավիրը: - Նա
ինքն այդ մասին ինձ
ասաց: «Ես ինքս էլ եմ
հատուկ համակարգ
տեղադրել, որ գրանցեմ
իմ և Բոբիի խոսակ-
ցությունները»:- Խոստովանեց
նա ինձ»:
Քենեդի եղբայրները
օգտագործում էին

Մերիլինին: Եվ այժմ
ցանկանում էին
ագատվել նրանից:
Բայց Մերիլինը դեռ
ուներ պայքարելու
ուժեր, և նա պատ-
րաստվում էր դա ցուցադրել:
«Այն ամենը, ինչ
նա ուներ, - շարունակում
է ժամետ Կարմենը,-
ձայնագրիչի ժապավեններ
և գրառումներով նոթատետրեր
էին: Համոզելով Փեթ
Լուսֆորդին՝ Փիթեր
Լուսֆորդի կնոջը՝
իրեն Բոբիի մոտ
բարեխոսելու համար,
նա վերջնականապես
ամրապնդեց եղբայրնե-
րին լիովին ծախելու
իր վճիռը»:

Մահից մի շաբաթ
առաջ Մերիլինը
Թաիո լճի ափին գտնվող
«Քալ Նեադա» հյուրանոցային
համալիրում էր, որը
պատկանում էր Ֆրենկ
Սինաթրային և «կնքա-
հայր» Սեմ Ջանկանային:
Մերիլինը խմում էր,
լաց լինում և չարանում
Քենեդի եղբայրների
վրա, որոնց համար,
իր խոսքերով, «ինքը
սոսկ մարմին եղավ»:
Ջանկանան «երկու
հարյուր մարդասպաններից
բաղկացած ծանդայով»
գանգատեց, որին
Մերիլինը մի գիշերով
իր ծառայություններն
առաջարկեց, ցնծության
մեջ էր: Մերիլինի
միջոցով ինքը կարող
էր հասնել նույնիսկ
նախագահին և հիշեցնել
նրան իր կայուն
նվիրվածության մասին:
Նա պատրաստ-
վում էր արդյոք սպանել
Մերիլինին և դրա-
նով իսկ վարկաբեկել
Ռոբերտ Քենեդիին,
որն այդտեղից շուտով
պետք է մեկներ Կա-
լիֆոռնիա: Նրա մարդկանցից
չորսը մշտապես
հետևում էին Լուս
Անջելեսի նրա բնա-
կարանին, որին նայում
էր նաև Փիթեր Լուս-
ֆորդը և մի մասնավոր
հետախույզ: «Բո-
բի Քենեդին Կա-
լիֆոռնիայում չի
եղել, - հավաստեց
նում է դերասանը: - Եվ
ես չեմ լրտեսել Մերիլին-
ին տանը»: Սակայն
Լուս Անջելեսի քաղաքա-
պետը և նույնիսկ
նրա խոսքերը են նրա
խոսքերը: «Բոբի
Քենեդին եղել է
«Բեվերլի Հիլզ» օթելում:
Գլխով և երգով, որ
նա հանդիպել է Մերիլինի
հետ, իսկ Լուսֆորդը
հնարավոր ամեն ինչ
արեց, որ Բոբին հնա-
րավորին չափ շուտ
թողնի Լուս Անջելեսը:
Քենեդիի բավական
ջանասեր փեսայի հա-
մար Մերիլինի կյանքի
վերջին ժամերը իս-
կական մոծավանց են
եղել: Մերիլինի մշ-
տական զանգերը, Բոբի
իրարացումը, հրամանը
(ի՞նչ նպատակով), որ
ուղղաթիռը պատրաստ
լինի ցանկացած պահի
թռչելու Լուս Անջելեսի
օդանավակայանից:

1962 թվականի օգոստոսի 5-ի
առավոտյան, ժամը 11-ին
Փիթեր Լուսֆորդն ար-
դեն փակվեց իր բնակարանում:
Նա հարբած էր: Գնարավոր
է այն պատճառով, որ
արդեն գիտեր Մերիլինի
մահվան մասին: Իսկ
գուցե նրան խղճի խայթ
է տանջել, որ ինքը Մերիլինի
տանը ոչնչացրել է Քենեդիի
դեմ բոլոր հանցանշանները:
Արդյոք նա՞ չտարավ
դերասանուհու մահից
առաջ գործությունը,
որտեղ նա բացատրել
էր իր մահվան պատճառները,
որոնք վարկաբեկում
էին Քենեդի եղբայրներին:

Պաշտոնական վարկածի
համաձայն դերասանուհու
մահը վրա է հասել ինքնա-
պանության արդյունքում:
Գրեթե քսան տարի
պահանջվեց բոլոր փաստերը
վերականգնելու և կատարվածի
նոր, առավել ճշմարտանման
վարկած առաջադրելու հա-
մար: Ողբերգության պահին
Մերիլինը գտնվել է ոչ իր
սենյակում, այլ պառկած է
եղել հյուրասենյակի բազմոցին:
Ծմրված անկողնու վրա
դիակի լուսավարմանը, ան-



շուտ, մասնակից է եղել
Փիթեր Լուսֆորդը:
Երբ Յուճիս Մյուլեյնը
ասում էր, որ Մե-
րիլինին գտել է իր
մահճակալի վրա, նա
կան սխալվում էր, կան
ստում: Պատմում է
Ջեյմս Գոլդ կանցով
եկած շտապօգնության
մեքենայի վարորդը:
«Երբ մենք տեղ հա-
սանք, նա դեռ կենդանի
էր, բայց գտնվում
էր կոնայի մեջ: Ես
և գործընկերս նրան
հատակին դրեցինք,
որ արհեստական
շնչառություն տանք:
Մեր անհաջող շարժումից
նա ընկավ հատակին
կողքի վրա, այդ ժա-
մանակ նրա ազդրի
վրա կապտուկ հայտն-
վեց, որը նրա դեռևս
ողջ լինելու նշանն
էր: Դեռ «Ես բժիշկ
եմ» բացականչությամբ
ներս վազեց նրա
հոգեբույժ դոկտոր
րինսոնը: Նա կտրեց
նրա պարծենկոտ
և ինձ դուր չեկավ:
Նա փոքր ծամարուկից
ներարկիչ հանցեց
և Մերիլինի կրծքավանդակից
նե-
րարկում կատարեց:
Նա մեկ անգամ
շունչ քաշեց և ուրիշ
ոչինչ: Ամեն ինչ
ավարտված էր:
Նա մահացավ:
Ես երկար ժամանակ
կարծում էի, որ
րինսոնը նրան
արդենակինի
չափաբաժին ներարկեց,
բայց հիմա ստույգ
գիտեմ, որ այն
ներարկիչի մեջ
թույն կար»:

Դոկտոր Գրինսոնի
որդին՝ Դանիել Գրին-
սոնը պնդում է իր
հոր անմեղսականությունը:
«Իմ հայրը
պարզապես
հավաստել է
նրա մահը»:
Փեթ Նյուկոմին
Մերիլինի մա-
նուկի քարտուղարին,
որը վրա է եղել
նրա հոգեվարքին,
Քենեդի եղբայրներն
առաջարկեցին
վերցնել երկարածակետ
արձակուրդ:
1966 թվականին
դատախազ Ֆրենկ
Յոզանը ապօրինի
բռնագրավեց
Մերիլինի ձայնագրու-
թյունները և դրանք
տեղավորեց չիրկիզ
պահարանում:
Այդ ժապավենները
լսելու հնարավորություն
ունեցած մեկը
հաստատում է, որ
դերասանուհու մահվան
գիշերը Ռոբերտ
Քենեդին նրա մոտ
է եղել:

Մերիլինի հուղարկվողությունը
տեղի ունեցավ օգոստոսի 6-ին:
Ջո դի Մաջոն ար-
գելեց Լուսֆորդին և
նրա ընտանիքին ներ-
կայանակ հոգեհանգստին:
Ինքը՝ Լուսֆորդը
մեռավ 1983 թվականին՝
խարտիշահեր աստղի
մշտական մոծավանդակից
հալածված և ալկոհոլից
տառապած: Մինչև
վերջ էլ նա ժխտեց իր
մասնակցությունը Մերիլինի
գործին:

Մի անգամ երեկոյան
դերասանուհու մահից
մի քանի ամիս անց,
վարսավիր Միքի Սոնգին
հրավիրեցին մի երեկոյի,
որտեղ հյուրերի մեջ
էր նաև Ռոբերտ Քենեդին
իր տիկնոջ՝ Էթելի հետ:
«Գիտե՞ք ում պակաս
են հիմա գոյում», -
հարցրեց Սոնգը: «Ո՞ւմ»:
«Մերիլին Մոնրոյի», -
պատասխանեց նա
թախտոտ ձայնով:
Ծանր լուրջությամբ
նա պահանջեց նախապես
այս դրամայի գործող
անձանց վրա: Իրանա,
որն ընդմիջտ կմնա
այն մարդու հիշողության
մեջ, ով տիրապետում
է նրա ճակատագրա-
կան գաղտնիքի մեկնության
բանալուն:

Թարգմանությունը՝
Ռոսակ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Փորձիր լրացնել


Գիտություն, գրականություն, պատմություն...

Ուղղահայաց

1. Գրիգոր Եփրեմյան (1865-1916), ռուս վերջին ցար Նիկոլայ 2-ի եւ թագուհի Ալեքսանդրա Ֆեոդորովնայի սիրելին, բախտախնդիր: Մուշեղանոց կրոնավորի քողի տակ վարել է շվայտ, անբարո կյանք, որի համար ստացել է... մականունը եւ որը հետագայում դարձել է նրա ազգանունը: 2. Այս դու կկու, ...կկու, քանի փոքրիկ ձագ ունես դու: 3. Հալալ մարդու սիրտը ուրախ, ...ը միշտ բաց է ըլլում, Վայ էն մարդին, որ համ զըլջում, համ էլ անկուշտ լաց է ըլլում: (Ե. Չարենց): 4. Որոշ ծառատեսակների (հացենի, կաղնի եւն) վրա գոյացող քաղցրահամ նյութ: 5. Եվ լուսինն ինչպես ջեննեթի մատաղ...կուրծքը՝ չքնաղ, լուսավառ: Մերթ ամաչելով պահվում էր ամպում եւ մերթ թրթռում փայլում էր պայծառ: 6. ...Նավարացի (1492-1579), Նավարայի թագուհի գրող: Առավել հայտնի ստեղծագործությունը՝ «Հեպտամերոնը» (գրված է Բոկաչչոյի ազդեցությամբ) պատկերում է 16 դ. կեսի ֆրանսիական ազնվականության բարքերն ու ապրելակերպը: 9. Ժամանակի չափման արտահամակարգային միավոր: 10. Յար, քեզանից հզոր չկա սիրո վառման մարտերի մեջ, ով որ տեսնի ուշքը կերթա, դու ...ու գառ վարդերի մեջ (Հավաասի): 12. Կույրիչեւ քաղաքի նախկին անվանումը: 13. Հայ գուսան, ՀՍՍՀ ժողովրդական արտիստ: Հայաստանի գրողների միության եւ կոմպոզիտորների միության անդամ: Նա ժամանակակից գուսանական արվեստի դասական ներկայացուցիչներից է: Աշակերտել է նշանավոր աշուղ Թիֆլիսին: 15. Ղեւնդ... (1820-1901), հայ բանաստեղծ, բանասեր, պատմաբան, աշխարհագրագետ, թարգմանիչ: Իր գրական հսկայական ժառանգությամբ ավելի քան 45 հատոր, նա մեծապես նպաստել է հայրենական գիտության զարգացմանը: 18. Երկնքի ամենապայծառ աստղը՝ 1,5 տեսանելի աստվածին մեծությունը: Լուսատվությունը 22 անգամ մեծ է արեգակնայինից, հեռավորությունն արեգակից՝ 2,7 պարսել: 22. Թանկարժեք քար, արհեստականորեն միստավորված ալմաստ: 23. Գետ Հայկական լեռնաշխարհում: Միավորվելով Եփրատին՝ առաջանում է Եփրատ գետը: 25. Կարլ Գուստավ... 1845-1913, շվեդ ինժեներ եւ գյուտարար, ազգությամբ ֆրանսիացի: 1889-ին՝ կառուցել է ակտիվ շոգե-տուրբին: Առաջինն է կիրառել ընդարձակվող ծայրափողակ, ճկուն լիսեռ: 26. Գյուլնարա, գորգագործ աղջիկ, քո երկրի բորբ արեւի տակ հասնում է ...ու մարինջ, բուրուն են դաշտերը թովիչ (Գ. Սարյան): 27. Մեռավ... ու պատմության սիրտը մի պահ դադարեց ու շողացիր հորիզոնում դու արեւի նման մեծ (Ն. Չարյան): 28. Հայ գրող Հմայակ Սահակի Ոսկանյանի գրական անուն: 29. Քաղաք Շվեյցարիայում, Ժնևի լճի ափին: Այդ քաղաքում բազմիցս գումարվել են միջազգային կոնգրեսներ եւ կոնֆերանսներ: 33. Հայկական ազգային կերակուր: Նախկինում համարվել է ծիսա-տոնական կերակուր: 35. Հնագույն քաղաք Տավրիկեում (Ղրիմ): Հիշատակված է Ստրաբոնի «Աշխարհագրության» մեջ՝ որպես սկյութների թագավորական բերդ: 38. Քաղաք ՌՍԽՍՀ Կրասնոյարսկի երկրամասում, նավահանգիստ Ենիսեյի ափին: 39. Ղազարոս Ստեփանի ... (1840-1911), հայ նշանավոր գրող, մանկավարժ, հրապարակախոս: Առանձնապես գնահատելի են նրա ուսումն մայրենի լեզվի Ա, Բ, Գ, Դ տարիների համար դասագրքերը, որոնցից առաջինը շուրջ 40 տարի (1875-1916) եղել է ամենատարածված այբբենարանը հայ դպրոցներում: 41. Արարատ Սահակի... (1899-1877), հայ ականավոր լեզվաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (1940, ՀՍՍՀ ԳԱ) ակադեմիկոս: Նրա հայոց լեզվի դպրոցական գրքերը գործածության մեջ են եղել ավելի քան 30 տարի: 42. Կոնստանդին Աղապարոնի ... (ծն. 1928), հայ կոմպոզիտոր, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, 1956-ից Հայաստանի էստրադային նվագախմբի գեղարվեստական ղեկավար: 46. Սիմոն Դենի... (1781-1840), ֆրանսիացի հայտնի մաթեմատիկոս եւ ֆիզիկոս: Լուծել է առաձգականության տեսության մի շարք խնդիրներ: «Աշխարհը գեղեցիկ է երկու բանով՝ մաթեմատիկա ուսանելու եւ այն ուսուցանելու հնարավորությամբ» ասույթի հեղինակ: 47. Շարա Սկրտիչի ... (1893-1965), հայ նշանավոր երգիչ, տենոր, հետագայում՝ բարիտոն, թատերական ու երաժշտական-հասարակական գործիչ: ՀՍՍՀ ժողովրդական արտիստ: 1938-47-ին ղեկավարել է Սայաթ-Նովայի անվան հայկական գուսանական երգի անսամբլը: 49. Լեոն... (ծն. 1930), ամերիկացի ֆիզիկոս-տեսաբան: 1972-ին Ջ. Բարդինի, Ջ.Ռ. Շրիֆերի հետ արժանացել է Նոբելյան մրցանակի: 50. Զափածո ստեղծագործության հնագույն ժանրերից՝ գովասանական կամ փառաբանական բովանդակությամբ: 51. Անտիկ փիլիսոփայության կատեգորիա, որն արտահայտում է իրականության օրինաչափությունների ընդհանրացված ըմբռումը: 52. Անհանգստի, անջեռ, մշտավառ, մշտաբորբ:

Հորիզոնական

7. Հարություն... (ծն. 1894), անգլիական պետական եւ քաղաքական գործիչ: 1940-45-ին պաշտոններ է զբաղեցրել Ու. Չեչիլի կառավարությունում: 1957-1963-ին պրեմիեր մինիստր: 8. Լեմվել Հակոբի ... (ծն. 1929), հայ նշանավոր աշխարհագրագետ, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: ՍՍՀՄ աշխարհագրական ընկերության գիտական խորհրդի անդամ: Պարգևատրվել է Վավիլոնի անվան մեդալով: 11. Հողմերի աստված Եոլտի որդին, Նեփեյեի ամուսինը: 13. Ամպերը եկել են սարերը պատել, ձորերը լըցվել, իրար փաթաթվել, հազար չար ու շառ, հազար... հազար ջահելներ վըխտում են հիմի (Վ. Թումանյան): 14. Եղիա Գասպարի... (1897-1938), հայ հեղափոխական, հրապարակախոս: Եղել է Խորհրդային Հայաստան թերթի գլխավոր խմբագիր: 16. - Որսկան ախպեր, սարեն կուգաս, սարի... կըփընտրես. ասա, յարաբ դուն չտեսար իմ ...ըս, իմ բալես (Ավ. Իսահակյան): 17. Ադիբ... (1856, Դամասկոս-1885, ալ-Հադաս, Լիբանան), արաբական գրող, հասարակական-քաղաքական գործիչ: Ծագումով հայ, Կարինից գաղթած Ջուլմաթյանների ընտանիքից: Արաբական նոր գրականության ռահիվրաններից: 19. Ռուսական ժողովրդական բանահյուսության ժանր, հերոսական եւ սոցիալ-կենցաղային բովանդակությամբ էպիկական երգ: 20. Երբ հանգչում են ...ի ջահերը, եւ արծաթյա կարապի պես լուսընկած



փայլալույս է ավազանի ջրերը, շշմուռ է սյուզի նման էլ-Սաման (Ավ. Իսահակյան): 21. Պերեց Դավիդովիչ (1895-1952), հրեա սովետական գրող: Կույտ (1922) պոեմը, որը Գորոդիչեւում պետությունների կազմակերպված հրեական ջարդերի մասին է, լի է տագնապով ու ցավով: 24. Պայմանական միավոր բնական երեւոյթների (քանո արագության, ամպամածության, երկրաշարժ) ուժը, աստիճանը չափելու համար: 26. Ղուշ, իմ գլխով անց կացի, Արի, թռիր, անց կացի, Գնա... աչքով տես, անուշ բարեւ բեր ընծի ժողովրդական երգ: 29. ...Ֆիլիպ (1773-1850), Ֆրանսիայի թագավոր 1830-48-ին: Բուրբուրների դինաստիայի Օռլեանյան ճյուղից: 30. Պատմական նահանգ Իսպանիայի հյուսիսում: 31. Օվկիանոսի որդին, Խոյի հայրը: Ըստ առասպելի, երբ երկրի վրա ջրհեղեղ եղավ, ...ը մարդկանց լեռներից վայր բերեց եւ կառուցեց Արգոս քաղաքը: 32. Դրամական միավոր, տարածված էր Մերձավոր Արեւելքի մուսուլմանական երկրներում: Ներկայումս նա դրամական միավոր է Հորդանանում, Իրաքում, Թունիսում եւ մանրադրամ Իրանում: 33. Կուբայի Հանրապետության մայրաքաղաքը: 34. Ռոբերտ Արշակի... (ծն. 1915), հայ երաժշտագետ, կոմպոզիտոր: ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1962): Կազմել ու խմբագրել Կոմիտասի աշխատությունների ակադեմիական հրատարակությունը: Պարգևատրվել է «Պատվոց նշան» շքանշանով: 36. Կենդանիների կաթնագեղձերի արտազատուկի՝ խիժի եփած կամ մակարդած ձեւը: 37. ...Կարապետի Ավետիսյան (ծն. 1928), հայ հայտնի նկարիչ: ՀՍՍՀ վաստակավոր նկարիչ: Անհատական ցուցահանդեսներ է ունեցել Երեւանում, Մոսկվայում, Վիլնյուսում 1970: 40. ...ու աղեղ, հնագույն հեռահար գեղ: 43. Սարիա Գավրիլովնա... (1854-1915), ռուս դերասանուհի պրոֆեսիոնալ բեմերը՝ 1869-ին բարեկամական կապեր է ունեցել հայ թատրոնի գործիչների հետ: Ծանր հիվանդ Պ. Աղանյանին նյութապես օգնելու համար Պետերբուրգում կազմակերպել է բեմեֆիս: 44. Քաղաք Հարավային Իսպանիայում, Սիերա-Նադալայի հյուսիս-արեւմտյան լանջին: Տուրիստական կենտրոն է: 45. Հույն գիտնական, աստղագիտության հիմնադիրներից 180-125մ.թ.ա., (Հռոդոս): Կատարել է երկնքի առաջին համակարգված դիտումներն ու հետազոտությունները: 48. Սարգիս... (եւ մահվան թիվը անհայտ): 14 դարի առաջին կեսի հայ մանրանկարիչ: Կիլիկիայի մանրանկարչության դպրոցի խոշոր ներկայացուցիչ: 50. Հագեցած աղիկիկ ածխաջրածին՝ C8H18: Անգույն, բնորոշ հոտով հեղուկ է: 52. Լեռնային ամենաբարձր շրջանը Արեւմտյան Եվրոպայում՝ Ֆրանսիայի, Իտալիայի, Շվեյցարիայի, Գերմանիայի եւ Ավստրիայի տերիտորիաներում: 53. Պետություն Արեւելյան Աֆրիկայում, մայրաքաղաքը՝ Կամպալա: 54. Ատոմային միջուկները կազմող տարրական մասնիկների՝ պրոտոնի եւ նեյտրոնի ընդամուր անվանումը: 55. Աբնաս Պարթենոս աստվածուհու տաճարը Աթենքում: Գարտարապետներ Իկոնինոս եւ Կալիկրատես, քանդակային հարդարանքը՝ Ֆիդիասի: 56. Ստեփանոս Եսայու ... (1812, Թիֆլիս-1879, Մոսկվա), հայ ականավոր հրապարակախոս, լուսավորիչ, մանկավարժ, փիլիսոփա, արեւելագետ, գրականագետ: Հիմնադրել է (1858-ին) եւ խմբագրել է «Գյուլիսափայլ» ամսագիրը: «Մայրենի լեզու» հայտնի բանաստեղծության հեղինակ:



Շախմատ եւ գիտություն

Ինտուիցիան մեր կյանքում...

«Ինտուիցիա»-ն լատիներեն բառ է, որը նշանակում է լարված, սեւեռուն նայել ինչ-որ առարկայի վրա, մտասեւեռվել: Այն իրերը, երևույթները, գաղափարները անմիջական հայեցողությամբ ըմբռնելու իմացական գործընթաց է առանց նախնական տրամաբանական կշռադատության եւ ապացուցման:

Ինտուիցիան կապված է երեւակայության հետ, ինչպես նաեւ հիմնված է կենսափորձով ձեռքբերված տեղեկատվության գիտակցական կամ ենթագիտակցական մշակման եւ նոր իրադրության մեջ դրա կիրառման գործընթացների վրա: Ինտուիցիայով ստացված արդյունքները հետագայում վերլուծության ենթարկելիս պարզվում է, որ դրանք բխում են գիտությանն արդեն հայտնի փաստերից ու տեսակետներից: Ա. Ռուբինշտեյնի կարծիքով՝ այն, ինչ ընդունված է անվանել ինտուիցիա, դա, փաստորեն, չգիտակցված փորձն է: Մարդը վաղուց սովորել է օգտագործել իր ենթագիտացական մտածողությունը: Նշանավոր շատ գիտնականներ նշել են, որ իրենց ստեղծագործական գործընթացում մեծ տեղ է գրավել հեծց ինտուաիցիան:

Մաթեմատիկոս Ստեյկովը գրում է. «Այդ գործընթացն արտահայտվում է ենթագիտակցաբար: Սովորական տրամաբանությունն այստեղ ոչ մի մասնակցություն չի ունենում, եւ արդյունքը ստացվում է շնորհիվ ինտուաիցիայի, միտքը փայլատակում է հանկարծակի՝ առանց որեւէ ջանքերի...»

Ակադեմիկոս Ա.Ֆ. Իոֆֆեն մի առիթով կատակով ասել է, որ գիտնականները մարդկանց խաբում են. նրանք տրամաբանորեն ներկայացնում են այն, ինչին իրենք հասել են ոչ տրամաբանական ուղով:

Ուսումնասիրելով նշանավոր շախմատիստների խաղացած պարտիաների մեկնաբանությունները, ոոնցում առկա են բազմաթիվ կոմբինացիաներ, կարելի է համզել այն եզրակացության, որ գիտնականի ասածի մեջ քիչ չէ ճշմարտությունը: Մեզանից ո՞վ չի հայտնվել արտակարգ իրադրու-

թյուններում, երբ պահանջվել է անհապաղ, շատ դեպքերում՝ պատասխանատու որոշումներ ընդունել: Մինչդեռ մեր ունեցած գիտելիքները, կարողությունները կամ կենսափորձը միշտ չէ որ բավարար են լինում հստակ եզրահանգման համար: Նման դեպքերում առաջին պլան են մղվում ստեղծագործական երեւակայությունն ու ինտուիցիան: Դրանք են, որ օգնում են մեզ սովորական փաստերի ու երևույթների վրա նայել նոր ձևով, տարբերել դրանց մեջ հատկություններ, որոնք մինչեւ այդ չէին նկատվել որեւէ մեկի կողմից:

Շախմատային ստեղծագործության մեջ ամեն ինչ նորովի է, բայց դա չի նշանակում, որ ինտուիտիվ որոշումը ծնվում է ինքնաբերաբար: Ընդհակառակը, որպես օրենք, ստացվում է ինտենսիվ մտավոր աշխատանքի շնորհիվ, որը ոչ միշտ է գիտակցվում շախմատիստի կողմից:

Հոգեբանական գիտությունների դոկտոր, գրոսմայստեր Նիկոլայ Կրոգինուս արդարացիորեն նշում է. «Ինտուիցիան խորհրդավոր ուժ է, որի առաջացումն անբացատրելի է եւ որի հուշած որոշումները ճիշտ են ստացվում: Ինտուիցիան կախված է շախմատիստի գիտակցված մտավոր աշխատանքից եւ առաջանում է գիտակցված տրամաբանական վերլուծության վրա եւ ստուգվում է դրա կողմից: Շախմատում ինտուիցիայի մեծ նշանակությունը կասկածներ չի առաջացնում»:

Ինչո՞վ է զբաղված շախմատիստը պայքարի ժամանակ. եթե կարճ պատասխանենք՝ իհարկե լավագույն որոշումների փնտրությունը:

Հունգարացի գրոսմայստեր Լայոշ Պորտիշի կարծիքով լավագույն որոշումները ծնվում են ճշգրիտ հաշվարկից: Մինչդեռ ռուսաստանցի գրոսմայստեր Դավիդ Բրոնշտեյնը գտնում է, որ լավագույն քայլը երեւում է առաջին հայացքից, եւ հարկավոր չէ մանրակրկիտ հաշվարկ կատարել:

Ի դեպ, գրեթե բոլոր առաջնակարգ շախմատիստների մոտ

զարգացած է ինտուիցիան, իսկ դա վկայում է ինտուիցիայի կարողությունը նաեւ շախմատում: Ներկայացնենք համրահայտ մարդկանց կարծիքները՝ ինտուիցիայի մասին.

- «Ինտուիցիան շատ հզոր բան է, ավելի հզոր, քան ինտելեկտը» (Սթիվ Ջոբս):

- «Տարօրինակ բան է ինտուիցիան, դրանից հնարավոր չէ հրաժարվել եւ միեւնույն ժամանակ այն հնարավոր չէ բացատրել» (Ազաթա Քրիստի):

- «Ինտուիցիան երբեք չի դավաճանում նրան, ով պատրաստ է ամեն ինչի» (Իմանուիլ Կանտ):

- «Ինտուիցիան դա մի բան է, որն առաջ է անցել ճշգրիտ գիտություններից: Մեր ուղեղը, անկասկած, ունի շատ զգայուն նյարդային բջիջներ, ինչը թույլ է տալիս մեզ զգալ ճշմարտությունը նույնիսկ այն դեպքում, երբ այն դեռեւս մատչելի չէ տրամաբանական եզրակացություններին կամ այլ մտավոր ջանքերին» (Նիկոլա Տեալա):

- «Ինտուիցիան ամբողջականությունն է ձեր մտքերի, լավ գեներտիկայի, կրթության, լավ ժառանգականության եւ յուրաքանչյուր բարին ու գեղեցիկը, որը եկել է Ձեր նախնիներից, ճիշտ ժամանակին է գալիս օգնության «հիշողության գրադարանից»: Ինտուիցիան հիմնված է փորձի եւ գիտելիքի վրա» (Հմայակ Հակոբյան):

- «Աղոթքը դա Աստուծոյն դիմելն է, իսկ ինտուիցիան՝ գրոյսը Աստուծու հետ» (Ունեն Դայեր):

- «Ինտուիցիան դա մի հոգեւոր պարզեւ է, որը հնարավոր չէ բացատրել, այն պարզապես ցույց է տալիս մեզ ճանապարհը» (Ֆլորենս Ծին):

«Բժիշկն առանց ինտուիցիայի հաջողության չի հասնի» (Պարագելս):

Ինչեւէ, ինտուիցիան զարգացող երեւոյթ է, եւ մոտ ապագայում այն, թերեւս, կդառնա ավելի բացատրելի:

Գագիկ ՀԱՎՈՐՅԱՆ
ԽՍՀՄ եւ ՖԻԴԵ-ի վարպետ,
պրոֆեսոր,
մեր շախմատային մեկնաբան

Հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍ «Բերրի բազմագործառնության պետական ջրվեժ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ «Մեքենաների եւ մեխանիզմների էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում» մասնագիտության «Էլեկտրական տրանսֆորմատորների նորոգման հնտություններ» մոդուլը պարապող դասախոսի (2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակում 48 ժամ), «Մեքենաների եւ մեխանիզմների էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում» մասնագիտության արտադրական ուսուցման վարպետի (1 դրույթ) թափուր աշխատատեղերն զբաղեցնելու համար:

Մրցույթն անցկացվում է ՀՀ ԿԳՄ Նախարարի 2020 թ. դեկտեմբերի 24-ի՝ «Նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման եւ անցկացման կարգ հաստատելու մասին» թիվ 48-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Մրցույթին մասնակցելու համար անձնընկերայացնում է ներքոնշյալ փաստաթղթերը՝

- 1) դիմում (Չեւ 1),
- 2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),
- 3) անձնագիր,
- 4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
- 5) ինքնակենսագրություն (Չեւ 4),
- 6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- 7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ու ժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
- 8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ՝ զինվորական գրքույկ,
- 9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Թափուր տեղի մրցույթին կարող է մասնակցել այն անձը ով համապատասխանում է պետական կրթական չափորոշիչներով սահմանված պահանջներին:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ վերադարձնում: Եթե ցանկյն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, Մասնակից կարող է, մինչեւ ընդունման ժամկետի ավարտը, վերաքննել թերությունները համալրել ցանկը:

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ ԿԳՄՍ «Բերրի բազմագործառնության պետական ջրվեժ» ՊՈԱԿ-ում մինչեւ 2022թ. փետրվարի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչեւ ժամը 16:00-ն, բացի շաբաթ, կիրակի եւ օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնակյան եւ հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա փետրվարի 28-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ ԿԳՄՍ «Բերրի բազմագործառնության պետական ջրվեժ» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ՀՀ Տավուշի մարզ, ք. Բերդ, Թեկելյան 43: Տեղեկությունների համար զանգահարել (0267) 2-13-32, (0267) 2-25-88, (094) 95-25-52 հեռախոսահամարներով, էլեկտրոնային հասցեն՝ berdqolej@mail.ru:

Հայտարարություն

«Ամասիայի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ «Խոհարարական գործ» մասնագիտության գծով արտադրական ուսուցման վարպետի, համատեղությամբ՝ մասնագիտական մոդուլներ դասավանդողի (աշխատանքային ծանրաբեռնվածությունը 2021-2022 ուսումնական տարում 0.5 դրույթ վարպետ, մասնագիտական մոդուլների դասավանդումը՝ շաբաթական 3 դասաժամ), «Համակարգիչների շահագործում» մասնագիտության գծով արտադրական ուսուցման վարպետի, համատեղությամբ՝ մասնագիտական մոդուլներ դասավանդողի (աշխատանքային ծանրաբեռնվածությունը 2021-2022 ուսումնական տարում 0.5 դրույթ վարպետ, մասնագիտական մոդուլների դասավանդումը՝ շաբաթական 8 դասաժամ), «Անըլերեն լեզու» առարկայի դասախոսի (աշխատանքային ծանրաբեռնվածությունը 2021-2022 ուսումնական տարում շաբաթական 12 դասաժամ) թափուր տեղերի համար:

Համապատասխանության նկատմամբ սահմանված պահանջներն են՝

- տվյալ մասնագիտության մասնագիտական աշխատանքի փորձ է միջին կամ բարձրագույն համապատասխան մասնագիտական կրթություն, կամ տվյալ մասնագիտական գաղղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ, եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն չի իրականացվում:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- 1) դիմում (Չեւ 1),
- 2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),
- 3) անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),
- 4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
- 5) ինքնակենսագրություն (Չեւ 4),
- 6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- 7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ու ժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
- 8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ՝ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),
- 9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթն անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին: մասնակից Հաստատության կողմից նախապես կազմված բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդելիք առարկային (մոդուլին) եւ մանկավարժական գործունեությանը, վիճակահանությանը ընտրում է Հարցատուս, որը բաղկացած է ինչգ հարցից, որում կարող են ներառվել նաեւ 1-3 գործնական հարցեր եւ կարող է անձին տրվել մինչեւ ինչգ հարակից հարց, որը նույնպես առնչվում է առաջադրանքին:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից փետրվարի 9-ից մինչեւ փետրվարի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա փետրվարի 25-ին՝ ժամը 12:00-ին, 14:00-ին, 16:00-ին, «Ամասիայի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ Գ. Ամասիա, 24 փողոց, փակուղի 1, օբյեկտ 3/1: Տեղեկությունների համար զանգահարել (093) 85-45-25, (041) 85-45-26 հեռախոսահամարներով:

«Կրթություն», 2022 թ. թիվ 4 համարի խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Գալ, 2. Գայ, 3. Բաբայան, 4. Կեսար, 5. Սանգեր, 6. Սերով, 7. Շուրման, 8. Սիլվեյ, 9. Կամիս, 10. Սողոմոն, 11. Ուքրատ, 12. Բագրատիոն, 13. Պալանդեղեն, 14. Արտավան, 15. Պալերմո, 16. Բաղափար, 17. Աստիճան, 18. Արշան, 19. Ազրեման, 20. Ազրեման, 21. Ազրեման, 22. Արծրունի, 23. Ազրեման, 24. Ազրեման, 25. Ազրեման, 26. Ազրեման, 27. Ազրեման, 28. Ազրեման, 29. Ազրեման, 30. Ազրեման, 31. Ազրեման, 32. Ազրեման, 33. Ազրեման, 34. Ազրեման, 35. Ազրեման, 36. Ազրեման, 37. Ազրեման, 38. Ազրեման, 39. Ազրեման, 40. Ազրեման, 41. Ազրեման, 42. Ազրեման, 43. Ազրեման, 44. Ազրեման, 45. Ազրեման, 46. Ազրեման, 47. Ազրեման, 48. Ազրեման, 49. Ազրեման:

Հորիզոնական

4. Կարս, 8. Սեւակ, 11. Չապել, 12. Արեգունի, 13. Յասոն, 14. Հավաս, 15. Սինու, 16. Արեգունեւ, 17. Արեգունեւ, 18. Արեգունեւ, 19. Արեգունեւ, 20. Արեգունեւ, 21. Արեգունեւ, 22. Արեգունեւ, 23. Արեգունեւ, 24. Արեգունեւ, 25. Արեգունեւ, 26. Արեգունեւ, 27. Արեգունեւ, 28. Արեգունեւ, 29. Արեգունեւ, 30. Արեգունեւ, 31. Արեգունեւ, 32. Արեգունեւ, 33. Արեգունեւ, 34. Արեգունեւ, 35. Արեգունեւ, 36. Արեգունեւ, 37. Արեգունեւ, 38. Արեգունեւ, 39. Արեգունեւ, 40. Արեգունեւ, 41. Արեգունեւ, 42. Արեգունեւ, 43. Արեգունեւ, 44. Արեգունեւ, 45. Արեգունեւ, 46. Արեգունեւ, 47. Արեգունեւ, 48. Արեգունեւ, 49. Արեգունեւ:



Բաժանորդագրվի՛ր, կարդա՛ «Կրթություն»

Օվկիանոսից այն կողմ՝ հեռավոր Ամերիկայում, օվկիանոսից այս կողմ՝ Եվրոպայում, հյուսիսում՝ Ռուսաստանում, հարավում՝ արաբական երկրներում, Ավստրալիայում, թե ամենուր, յուրաքանչյուր քաղաքացի ունի իր թերթը՝ մանավանդ, եթե այն մասնագիտական է եւ ուղղված է հենց իրեն... Հայաստանում, սիրելի Ընթերցող, այդ թերթը քեզ համար «Կրթություն»-ն է՝ մեզանում պահպանված թերեւս միակ մասնագիտական թերթը, 1932 թվականից ի վեր («Կուլտուրական ֆրոնտ», «Սովետական դպրոց», «Դպրություն», «Դպրոց», 1997-ից՝ «Կրթություն» անվանումով):

Գիտե՞ս, սիրելի Ընթերցող, շատ դժվար է լինել մասնագիտական պարբերական ու միաժամանակ մնալ հանրամատչելի, հետաքրքիր լինել եւ ուսուցչի, մանկավարժի, եւ նաեւ ուսանողի, ծնողի, բոլորի համար: Դա դեռ ոչինչ. արհեստավարժ եղար՝ այդ խնդիրը կուծես: Բայց այսօր, եթե որեւէ կուսակցության, որեւէ քաղաքական կամ գործարար խմբի խոստովողը չես ու չունես այդպիսիք՝ իբրեւ հովանավոր, պիտի լուծես նաեւ տնտեսական խնդիր: Օրաթերթ չես, հրատապ լրատվություն չես՝ հրապարակելու, «դեղին» մամուլին հետեւելով՝ ընթերցողներ որսալու սկզբունքը խորթ է քեզ համար, որովհետեւ հայոց հազարամյա դպրության ու այսօրվա դպրոցի քարոզիչն ես, ու խոսքդ պիտի լինի լուսավոր, անքեմ, դրականը դրվատող ու հասարակություն կրթող... ոչ թե նրան զավեշտով, հերյուրանքով գայթակղող:

Սիրելի Ընթերցող, ինչ նախասիրություններ էլ որ ունենաս, համոզված եղիր, «Կրթությունը» անարատ հոգեւոր սնունդ է տալու քեզ, եւ ո՛չ միայն մանկավարժական թեմաներով: Իսկ եթե ուզում ես, որ մեր հանդիպումները լինեն շարունակական եւ գոյատեւի Քո՛ թերթը՝ մի օր լավ, մի օր գերազանց, մի օր էլ պակաս կամ թերի, բայց Քո՛ թերթը, որ ամեն չորեքշաբթի հայտնվում է Քո՛ ձեռքերում, եւ որի ճակատագիրը դարձյալ Քո՛ ձեռքերում է ուղղակիորեն, բաժանորդագրվի՛ր, կարդա՛... Սիրի՛ր Քո՛ թերթը, որ այն օրավոր դառնա ավելի հետաքրքիր, փոխանցի՛ր այն Քո հարեւանին, բարեկամին, ընկերոջը, հորդորի՛ր, որ կարդա... Մեզ սնուցողը Դո՛ւ ես՝ եւ բարոյապետ, եւ նյութապետ: Քո՛ բաժանորդագրությամբ, կրպակներից Քո՛ գնումներով, անհրաժեշտ տպաքանակ ապահովելով՝ Դու հնարավորություն կտաս, որ «Կրթությունը» գոյատեւի, դառնա փնտրված ու սիրված թերթ... Բաժանորդագրվի՛ր, գնի՛ր, կարդա՛ «Կրթություն», միշտ ունեցի՛ր Քո թերթը...

* * *

«Կրթություն» կարելի է բաժանորդագրվել «Հայփոստի» եւ «Հայմամուլի» բոլոր տարածքային մասնաճյուղերում, բաժանորդագրություն կազմակերպող այլ գործակալություններում:

Մեկ տարվա բաժանորդագրության համար պետք է վճարել **10400** դրամ եւ ստանալ բոլոր **52** համարները:

Վեց ամսվա բաժանորդագրական գինը **5200** դրամ է (**26** համարի համար):

Երեք ամիսների բաժանորդագրության համար պետք է վճարել **2600** դրամ (համապատասխանաբար կստանաք **13** համար):

Այլ մանրամասնությունների համար կարող եք դիմել «Հայփոստի» (51-45-47), «Հայմամուլի» (45-82-00) եւ այլ գործակալությունների այն մասնաճյուղերին, որտեղ կատարում եք բաժանորդագրությունը:



Շաբաթաթերթ «Krtutun» (education) weekly «КрТутун» (образование) еженедельник 12.10.200

Մայրաքաղաք

Քանի՞ դար կա այս անցումների միջին... Նախիջեւան-Երեւան-Իջեւան... Ե՛րբ է Նոյն անցել այս ուղերթով...



«КрТутун» еженедельник 05.10.2005թ. չորեքշաբթի թիվ 28 (175)



«КрТутун» еженедельник 18.08.2005թ. հինգշաբթի թիվ 21 (11)



ՀԻՄՆԱԴԻՐ՝
ՀՀ ԿԳՄՍՆ
«Կրթություն» թերթի
խմբագրություն» ՓԲԸ

Գրանցման վկայական՝ 01Ս-049349,
Տրված է՝ 11.01.2001թ.
Դասիչ՝ 69312,
Հասցեն՝ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 67,
E-mail: krtutun@yandex.ru
Հեռ. (043) 57 49 56, (043) 57 49 51

Խմբագրությունը ստացված թղթակցությունները եւ նամակները չի գրախոսում եւ ետ չի վերադարձնում: Չպատվիրված հոդվածների համար հոնորար չի վճարվում: Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը պարտադիր է:

Տպագրված է «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ»
իրատարակչության տպարանում:
Տպաքանակը՝ 2000:
Ծավալը՝ 6 տպագրական մամուլ:
Ստորագրված է տպագրության՝
08.02.2022թ.
Գինը՝ 400 դրամ:

Համարի պատասխանատու՝
Գլխավոր խմբագիր՝
Գագիկ ՄԻՆԱՍՅԱՆ